В связи с этим, дефектным выступает такой стиль полового воспитания, при котором задается ложное направление проявлениям психосексуального развития ребенка, либо они просто подавляются (эти два момента тесно взаимосвязаны и порождают друг друга). Дефектное половое воспитание почти исключительно связано с некомпетентностью воспитателей. *Ее основные проявления:*

- незнание особенностей сексуального развития ребенка и соответственно неверная реакция на это развитие;
- собственные неверные установки по вопросам взаимоотношений полов, а также неверные установки по отношению к детям.

Основные ошибки педагогов и родителей в половом воспитании сводятся к следующим:

- подавление естественных реакций – не только половых, но и просто непосредственно эмоциональных; это может привести к возникновению препятствующих нормальной сексуальной жизни холодности и рассудочности;
- излишне строгое воспитание, предполагающее изоляцию от лиц противоположного пола, которое препятствует приобретению необходимых навыков общения;
- выработка неприязни к противоположному полу, подавление любых проявлений половой сущности и интересов;
- сглаживание половых различий, своеобразная половая унификация; уход от детских вопросов и неверные ответы на них;
- привитие исключительного отношения к целомудрию, своеобразная фетишизация невинности и девственности.

Для того чтобы эти ошибки не совершались, а уже совершен-

ные преодолевались, необходимо с детства прививать ребенку уважение к лицам другого пола, формировать навыки общения с ними; при этом недопустимо сводить представления о взаимоотношениях полов исключительно к сексуальным контактам [3].

Эффективность правильного полового воспитания зависит от учета особенностей развития ребенка на всех возрастных этапах, начиная с самых ранних. В первые годы жизни особое значение имеет дифференцированное отношение родителей к ребенку в зависимости от его пола. *Дефектное половое воспитание, неверные установки, ошибочные интерпретации сексуальных проявлений часто являются причиной развития тех или иных сексуальных расстройств.* Рассмотрим наиболее часто встречающиеся.

➤ **Аноргазмия – отсутствие оргазма у женщины при половой жизни.**

Отсутствие знаний и непонимание специфики детских переживаний часто приводят к тому, что родители, сами того не желая, наносят детям душевно-сексуальные травмы, деформируя или тормозя развитие основных влечений и искривляя всю их последующую жизненную линию.

К числу распространенных ошибок полового воспитания относится преднамеренное внушение молодым девушкам нежелания встречаться с молодыми парнями, а также брезгливости к любым проявлениям жизни, связанным с половым влечением. В результате у девочек и девушек формируется внутреннее сексуальное сопротивление, которое нередко достигает такой силы, что преобразуется в половую холодность, т. е. – аноргазмию. Если на протяжении 10-15 лет девочка, а затем девушка живет в полном убеждении, что каждый мужчина – ее враг, который думает лишь о том, чтобы ее обесчестить, то возникающие у нее психические тормоза становятся столь сильными, что даже любовь и супружество не в состоянии их преодолеть. Отсюда вытекает, что для предотвращения аноргазмии

половое воспитание девочек не должно проводиться в духе абсолютного негативизма по отношению к мужскому полу и половой жизни. Приведу пример аноргазмии, вызванной неправильным половым воспитанием [3].

В нашу клинику обратилась замужняя 34-летняя женщина, которая рассказала, что в детстве ее воспитывала только мать, так как отец ушел из семьи и женился на другой женщине. Мать постоянно твердила, что мужчин надо избегать, потому что они только и ждут возможности совратить молодую девушку. Почти ежедневно она рассказывала дочери о страшных испытаниях, выпавших на долю женщин, брошенных мужчинами. Все мужчины, по словам матери, – это «шмели, перелетающие с цветка на цветок», легкомысленные и стремящиеся к единственной цели – соблазнить женщину.

Пациентка, будучи ребенком, принимала слова матери очень близко к сердцу. Играла только с девочками, а когда кто-нибудь из знакомых мужчин приходил в дом, убегала, потому что боялась, что он «соблазнит» ее. Вышла замуж и очень любит мужа, так же, как и он ее. Сначала она даже желала половой близости с ним, хотя и очень боялась. Во время сношений ей всегда вспоминались рассказы матери о страшных болях при родах и т. д. Это отвлекало ее внимание и прежде всего, делало «холодной» в процессе сношения. Она ни разу не испытала оргазма, несмотря на то, что ее муж обладал нормальной потенцией и делал все, что нужно, чтобы доставить жене максимальное половое удовлетворение. В нашу клинику пациентка обратилась потому, что, как ей кажется, для полноты супружеского счастья ей не хватает ощущения оргазма при половых сношениях. Ее также мучит мысль о том, что в ходе сношения она проявляет равнодушие, а стало быть, не доставляет мужу полного удовлетворения. На этой почве между ней и мужем все чаще стали возникать размолвки, и прочность супру-

жества оказалась в какой-то мере поколеблена.

Этот случай свидетельствует об определенном влиянии неправильного полового воспитания. Сформировавшиеся в детстве психические тормоза лишили нашу пациентку возможности испытать наслаждение половой близостью с мужем. Результатом оказалась аноргазмия, которая превратилась в угрозу половой холодности. Только соответствующее лечение позволило устранить причины аноргазмии. В настоящее время эта женщина живет с мужем счастливо, все размолвки между ними прекратились.

Для профилактики аноргазмии желательно, чтобы в процессе воспитания у девочки возникли простые естественные отношения к проблемам взаимоотношения полов, половой жизни. Не следует прививать взгляд на секс как на нечто грязное, аморальное, греховное, унижающее «настоящую чистую любовь». Это может привести к задержке развития полового чувства. Так, у ревностных католичек, получивших строгое религиозное воспитание, оргазм возникает в течение первого года супружеской жизни несколько реже, чем у остальных.

Для профилактики аноргазмии недостаточно общих сведений о строении половых органов и биологии зачатия. Важно знакомство с элементарной физиологией полового акта, путями достижения гармонии. Просвещение лиц, готовящихся вступить в брак и не имеющих опыта половой жизни, требует большого такта, чтобы не задеть естественного чувства стыдливости и не лишить девушку чистоты, некоторой наивности, но в то же время правильно подготовить ее к предстоящему событию. Не меньшее значение имеет это просвещение и для жениха. Оно должно строиться так, чтобы не допускать ятрогении, не порождать у него тревоги и опасений неудачи, однако снабдить его необходимыми сведениями [1].

Незнание особенностей строения девственной плевы может стать источником тяжелых психотравмирующих переживаний у девственницы, вызванных тем, что во время первой брачной ночи

нет ожидаемой боли и крови. Это бывает, если разрыв пришелся на участок плевры, слабо снабженный кровеносными сосудами и нервными окончаниями, или если плева легко растяжима и впускает мужской половой орган без разрыва.

Половая непросвещенность другого рода, порождающая ожидание от первого полового акта чего-то необычного и фантастически прекрасного, может, в свою очередь, вызвать разочарование и на некоторое время затормозить наступление оргазма.

➤ **Вагинизм – непроизвольное судорожное сокращение мышц влагалища и тазового дна, вызванные боязнью полового акта или гинекологического обследования.**

Неверные представления о строении женских половых органов и дефлорации могут вести к возникновению страха и способствовать развитию вагинизма. Очень часто причиной возникновения вагинизма являются услышанные от матери или подруг ужасающие рассказы об «сверхболезненной и кровавой дефлорации», «режущих болях» и т. д.

В нашу клинику обратилась замужняя 26-летняя пациентка, педагог по образованию. Подростком от матери часто слышала устрашающие рассказы о дефлорации. Половой жизнью не жила. Замуж вышла по любви 4 года тому назад за инженера, на 3 года старше ее. Муж спортсмен, боксер. Половую жизнь с мужем не начинала. При попытках совершения интродитуса – охватывал сильный, непреодолимый страх, сопровождающийся судорожным сжатием бедер и мышц входа во влагалище. Эти же явления происходили даже при одном приготовлении к половой близости с мужем, приближении руки гинеколога. Транквилизаторы, а также алкогольное опьянение реакцию не устраняли. После проведения многоэтапного психотерапевтического и фармакотерапевтического лечения удалось устранить явления вагинизма.

В данном случае у девушки, относящейся к астеническим личностям, под влиянием рассказов об «ужасах» дефлорации возник фо-

бический вагинизм – навязчивый страх дефлорации (дефлорациофобия), сочетавшийся с судорожным сокращением мышц бедер и входа во влагалище.

➤ **Психогенные гениталгии (диспареуии) – болезненные ощущения в области половых органов во время коитуса или после его окончания.**

Психогенные гениталгии у большинства женщин возникают вследствие патологической фиксации болезненных ощущений при первом половом акте, внушения болезненности дефлорации и фиксации на ожидании боли при отсутствии готовности к половому акту. Очень часто они возникают в результате неправильного полового воспитания, в результате которого формируется негативная установка к половой жизни [5]. Дефектное половое воспитание приводит к образованию у девочек представлений о сексуальных отношениях как о чем-то порочном и ненужном, развивает у них асексуальные стереотипы поведения, неприятие своей женской роли в интимных отношениях, неправильную позицию по отношению к мужчинам как к существам враждебным и ненадежным, либо, наоборот, неадекватное, чрезмерно идеализированное представление о сексуальных отношениях. На этом фоне у женщин у женщин может наблюдаться неадекватное восприятие полового акта как акции агрессии, способной нанести физический ущерб и поэтому ассоциирующейся с чувством боли. Либо реальный половой акт настолько отличается от идеализированного представления о его должном протекании, что вызывает разочарование и массу негативных эмоций, сопровождающихся неприятными ощущениями вплоть до болевых. *В подобных случаях гениталгия, как правило, сочетается с другими сексуальными дисфункциями (нарушение либидо, оргазмическая дисфункция).*

➤ **Мнимые сексуальные расстройства – жалобы на нарушения половых функций при отсутствии отклонений.**

Неадекватные убеждения и установки в отношении половой

жизни ведут те только к развитию сексуальной дисгармонии в паре, но в ряде случаев способствуют возникновению мнимых сексуальных расстройств, т. е. убежденности в наличии нарушений половых функций при отсутствии таковых.

Мужчины нередко, предъявляя чрезмерно высокие требования к собственной сексуальной сфере, из-за неверных установок ошибочно полагают, что эрекция по желанию должна возникать в любой обстановке при одной только мысли об интимной близости; что половой акт может быть сколько угодно долгим до полного удовлетворения партнерши; что повторение полового сношения возможно уже через короткий промежуток времени и, что главное – все эти способности должны без снижения сохраняться до преклонного возраста.

У молодых мужчин, подростков мнимые сексуальных расстройства проявляются в виде приписывания себе воображаемых изъязнов (например, убежденность в том, что они «истощили свою нервную систему бывшей в юношестве мастурбацией»).

Для оценки некоторых форм сексуальности подросткового возраста взрослые нередко допускают серьёзные ошибки. Прежде всего, это касается одного из самых трудных вопросов, с которым приходится сталкиваться большей части родителей и многим педагогам, – вопроса мастурбации. Обнаружив, что подросток занимается этим, родители ни в коем случае не должны прибегать к карательным мерам, а тем более требовать обещания или клятв, что он больше не будет делать этого. Скорее всего, желание окажется сильнее его воли, но при этом каждый мастурбационный акт будет сопровождаться ещё большими раскаяниями и страхом расплаты. Правильность поведения родителей в данной ситуации зависит от множества условий, но в любом случае не следует придавать этому весьма распространённому у подростков явлению какого-то драматического значения, поскольку возможные отрицательные последствия мастурбации в литературе прошлых лет явно преувеличивались [4].

Мастурбация – это естественное проявление развивающейся сексуальности пубертатного периода юношеской гиперсексуальности, которое позволяет снять или смягчить проявление физического дискомфорта, порождаемого биологической потребностью.

Моральные запреты по отношению к мастурбации создали ничем не доказанные утверждения о том, что мастурбация вызывает психические болезни или снижение сексуальной потенции. В пользу этих высказываний нет серьезных фактов. Мастурбация является психопатологическим симптомом, только когда она становится навязчивой идеей, выходящей из-под контроля субъекта. Мастурбация в подростковом возрасте является почти обязательным и естественным этапом психосоциального развития и имеет в большинстве случаев адаптивное значение.

Для предупреждения ранней мастурбации у детей следует избегать всего того, что может вызвать раздражение половых органов. Сюда относятся плотно прилегающие скользкие складки нижнего белья, давление на половые органы при катании ребенка на седле велосипеда, неправильное подмывание и подтирание, излишнее прикосновение к наружным половым органам. Важно своевременно обнаружить появление острец у девочек, не допускать возникновения зуда половых органов. Нежелательно, чтобы ребенок спал на излишне мягкой постели, долго лежал в кровати после пробуждения или перед сном. Врачи-сексологи советуют, чтобы ребенок, засыпая в постели, держал руки на одеяле, а не под одеялом. Физкультура и спорт, постоянная занятость ребенка, труд и развлечения имеют большое значение для профилактики ранней мастурбации.

➤ **Гомосексуальность – половое влечение к лицам своего пола.**

Возникновению гомосексуальной или бисексуальной направленности полового влечения способствуют и неблагоприятные влияния микросоциальной среды. Патогенным фактором, способствующим

формированию гомосексуального влечения, может стать внушение родителями и воспитателями неприязненного отношения к противоположному полу. Такое воспитание особенно сказывается на женщинах. Попытки матери предотвратить раннее соvrращение и убедить дочь в том, что все мужчины подлецы и негодяи, часто формируют негативное отношение к мужчинам, которое может мешать становлению гетеросексуального влечения и общению со сверстниками. В подобных случаях требуется длительная психотерапевтическая работа с пациенткой, с постепенным введением в круг ее общения мягких, добрых и ласковых юношей или мужчин и полной изоляцией от женщин. Молодой возраст и легкость достижения оргазма делают возможным переключение полового влечения на гетеросексуальное.

Наиболее частой причиной развития гомо- или бисексуальности является неправильное половое воспитание в семье – *когда мальчика родители воспитывают как девочку, прививая ему черты женственности, мягкости, подчиняемости*. Это бывает в тех случаях, когда родители очень хотели, чтобы родилась девочка, а рождается мальчик.

С точки зрения профилактики, важно с детства развивать у человека представление о принадлежности к своему полу, при этом у мальчика развивать мужские, у девочки – женские черты характера. Например, мальчику следует внушать: «Ты мальчик, а мальчики не должны плакать!» Девочке нужно прививать интерес к женским занятиям (шитью, приготовлению пищи и т.п.), подчеркивать, что ей идут косички, бантики, юбочка («Это носят только девочки, это очень красиво, очень тебе идет!»). Мальчика желательно привлекать к работе отца, девочку – к занятиям матери. Важно, чтобы мать и отец – каждый выполнял свою женскую и мужскую работу. Дети должны видеть, что есть разница между мужскими и женскими делами, но у ребенка не должно создаваться впечатления, что мир разделен на два враждебных лагеря – мужской и женский. Плохо, если ро-

дители держатся дома обособленно: отец только читает газету и смотрит телевизор, а мать выполняет все домашние дела. Важно, чтобы они выполняли и некоторые совместные работы. Счастливый брак, хорошие теплые отношения между супругами имеют большое значение для профилактики гомосексуализма у детей. Если в семье нет отца, важен его образ, создаваемый матерью или близкими [6].

Таким образом, профилактика сексуальных расстройств предусматривает широкий комплекс мероприятий, не только обеспечивающих сохранение сексуального и репродуктивного здоровья, но и формирующий толерантность к действию возможных повреждающих факторов внешней среды. Основой профилактики является **правильное половое воспитание и сексуальное просвещение**, организация которых требует совместного усилия институтов семьи, образования и медицины.

SEXUAL DISTURBANCES CAUSED BY DEFECTIVE SEX EDUCATION

SHAHRAMANYAN V. A.

Yerevan State Medical University after M. Heratsi

ABSTRACT

In this article is discussed sexual disorders based on mistakes and wrong sexual education. It is emphasized that main prevention of sexual disorders is correct sexual education, organization of which necessitates joint effort of the family and social institutions.

ЛИТЕРАТУРА

1. Исаев Д. Н., Каган В. Е. Половое воспитание и психогигиена пола у детей.– Л.: Медицина, 1988.– 183 с.
2. Исаев Д. Н., Каган В.Е. Психогигиена пола у детей: Руководство для врачей.– Л.: Медицина, 1986.– 336 с.
3. Кришталь В. В., Григорян С. Р. Сексология.– М.: Per Se, 2002.– 879 с.
4. Щеглов Л. М., Сексология и сексопатология.–СПб.: РИЦ «Культ-информ-пресс»,1998. 416с.
5. Справочник по сексологии /Г. Л. Билич.– М.: Оникс, 2018.– 624с.
6. Сексопатология: Справочник /Под ред. Г. С. Васильченко.– М.: Медицина, 1990. – 575 с.
7. Сексология: Энциклопедический справочник по сексологии и смежным областям /Редкол.– Б. М. Ворник и др.– 2-е изд.– Минск: БелЭн, 1994.– 351 с.

ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

Առաքելյան Ա. Դ.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. *պահանջմունքներ, պրոբլեմների խմբեր, ֆրուստրացիա, պահանջմունքների աղքատություն, ներդրիկ և ակտիվարանական պահանջմունքներ:*

Պահանջմունքային ոլորտն անձնավորության դրդապատճառային համակարգի առանցքային բաղադրիչն է: Պահանջմունքներով է պայմանավորվում անձի՝ սոցիալական միջավայրի, գործունեության տեսակների և այլ մարդկանց նկատմամբ վերաբերմունքների համակարգը, գործունեության և սոցիալական ակտիվության դրդապատճառները:

Պահանջմունքներն անձ-սոցիալական միջավայր փոխհարաբերություններում և՛ հոմեոստազի ապահովման գործառույթ ունեն, և՛ ադապտացիայի խաթարման ազդարարի գործառույթ են ստանձնում: Պահանջմունքային վիճակն ազդարարում է կարիքի, լարվածության մասին, իսկ պահանջմունքների բավարարվածությունն անձի ադապտացվածության ցուցանիշ է:

Պահանջմունքային ոլորտի պրոբլեմները քննարկելիս պետք է նկատի ունենալ, որ պահանջմունքների տարբեր խմբերի դրսևորման մեխանիզմները պայմանավորվում են անձի ընդհանուր զարգացման, ինքնագիտակցության, իմացական և հուզական ոլորտների առանձնահատկություններով:

Պահանջմունքները դրսևորվում են անձնավորության ուղղվածության ենթահամակարգի մյուս բաղադրիչների հետ փոխներգործությամբ, իրենց ազդեցությունն են ունենում ինչպես դրանց ձևավորման և դրսևորման վրա, այնպես էլ կրում են վերջիններիս ազդեցությունը: Դա է պատճառը, որ պահանջմունքների բավարարվածության և

անբավարարվածության դեպքում փոխվում է անձնային կառույցը: Պահանջմունքների բավարարումը ուղեկցվում է դրական հույզերով, իսկ բավարարվածության զգացումը գործունեության արդյունավետության հիմնական գործոններից մեկն է: Կանխատեսվող արդյունքին հասնելու գործընթացում կրկնակի անհաջողություններն առաջացնում են ոչ նպատակահարմար վարքի մերժում կամ դրանից խուսափում: Վերջինս այնուհետև կարևոր գործառույթներ է ստանձնում անձի նպատակադրման, հավակնությունների մակարդակի և ինքնագնահատականի ձևավորման մեխանիզմներում:

Պահանջմունքային ոլորտի պրոբլեմները կարելի է դասակարգել ըստ տարբեր չափանիշների և հիմքերի: Կարելի է տարբերակել պրոբլեմների խմբեր, որոնցում որպես առանձնացման հիմք հանդես է գալիս խնդրի պատճառական կամ հետևանքային պայմանավորվածությունը:

Անձի ուսումնասիրության տարբեր տեսություններում կարևորվել է պահանջմունքների բավարարման կամ անբավարարվածության դեպքում անձնային կառույցի ձևավորման առանձնահատկությունների խնդիրը: Անձի հոգեբանության առաջատար տեսաբանները (Ա. Մասլոու, Կ. Ռոջերս, Է. Ֆրոմ, Ա. Ադլեր, Ջ. Բոուլբի) ընդգծում են, որ հիմնարար պահանջմունքների անբավարարվածությունը անձնային բացասական հատկությունների, սոցիալական դիրքորոշումների ու վերաբերմունքների զարգացման հիմք է հանդիսանում. վարքի դրդապատճառների մշակման հիմքում ընկած է վերջիններիս անբավարարվածության հաղթահարումն ու փոխհատուցումը:

Ընտանիքում հիմնային պահանջմունքների դեպրիվացիան հոգեբանական օտարացման, տագնապայնության, ագրեսիվության, կասկածամտության ձևավորման գործոն է, իսկ վերջիններս սոցիալական ադապտացիայի և միջանձնային հարաբերությունների լուրջ խաթարումների հիմք են:

Ա. Մասլոուն ևս տագնապայնությունը, վախը, անհանգստությունը դիտարկում է՝ որպես անվտանգության պահանջմունքի ֆրուստրա-

ցիայի հետևանքներ [3, էջ 86]: Երեխայի մերժման, անվտանգության, սիրո և հարգանքի պահանջմունքների անբավարարվածության դեպքում առաջանում է նաև բարձրագույն զգացմունքների մասնակի կամ լրիվ արգելակում, երկարատև կապվածության անընդունակություն:

Հիմնական պահանջմունքների բավարարման հավանականության ցածր մակարդակը կարող է արգելակել այլ պահանջմունքների դրսևորումը, երբեմն՝ թուլացնել կամ փոխել անձի ակտիվության ուղղվածությունը: Հույզերի ինֆորմացիոն տեսության դիրքերից՝ անցանկալի ներգործությունից խուսափելու ցածր հավանականությունն անձի մոտ տագնապ է առաջացնում, իսկ ցանկալի նպատակին հասնելու ցածր հավանականությունը՝ ֆրուստրացիա [4, էջ 276-279]:

Հիմնական պահանջմունքների անբավարարվածությունը և դրանց փոխհատուցման եղանակների անհնարինությունը կարող են նաև անձնային խաթարումների պատճառ դառնալ: Մետապաթոլոգիան դրսևորվում է օտարացվածության, տառապանքի, ապատիայի և ցինիզմի տեսքով [3]:

Նպատակների և պահանջմունքների բավարարման ճանապարհին հայտնված խոչընդոտները կարող են միջանձնային կոնֆլիկտների պատճառ դառնալ: Ա. Մասլոուի համոզմամբ՝ կոնֆլիկտը կամ ֆրուստրացիան ախտահոգեբանական բնույթ են ստանում, եթե վտանգում են հիմնային կամ դրանց հետ սերտորեն կապված պահանջմունքների բավարարման գործընթացը [3, էջ 77]:

Հոգետրավմատիկ գործոնների, այդ թվում և պահանջմունքների, մղումների և ցանկությունների բավարարման խոչընդոտներով են առաջանում նաև նյարդահոգեկան այնպիսի խաթարումները, ինչպիսիք են ներոզները [1, էջ 317]:

Մյուս խմբում կարող են միավորվել պահանջմունքային ոլորտի այն պրոբլեմները, որոնք ըստ գիտակցվածության աստիճանի կարող են լինել.

1. թույլ, անբավարար գիտակցվող կամ չգիտակցվող պահանջմունքներ,

2. ճնշված և արտամղված, ֆրուստրացված պահանջմունքներով պայմանավորված պրոբլեմներ:

Կրկնվող անհաջողությունների դեպքում անձի հույսերը լիովին խորտակվում են, ջանքերը թուլանում են, և հաջողությունների նկատմամբ հավատը մարում է: Մոտիվացիայի թուլացումը և հիասթափությունները բնորոշ են այն անձանց, ովքեր իրենց առջև ոչ իրատեսական նպատակներ ու խնդիրներ են դնում: Այս մարդկանց բնորոշ է ոչ համարժեք բարձր ինքնագնահատական և հավակնություններ, իրադրության պահանջներին անհամապատասխան գնահատումներ:

Ֆրուստրացիայի հետևանքով դրսևորվում է.

- ապատիա, հուսալքվածություն, մոտիվացիայի բացակայություն,
- չարություն, նյարդայնություն, զայրույթ, ագրեսիվ վարք:

Շարունակական անհաջողությունների արդյունքում կուտակված ֆրուստրացիաներն իրենց հերթին կարող են հանգեցնել հոգեմարմնական հիվանդությունների [5, էջ 131]:

Չբավարարված պահանջմունքների և ցանկությունների դեպքում առաջացած հոգեկան լարվածության թուլացման, կոգնիտիվ դիստանսի հաղթահարման և ինքնագնահատականի պահպանման գործում կարևոր գործառույթ են ստանձնում անձի պաշտպանական և ադապտիվ մեխանիզմները: Վերջիններիս բնույթով ու անձի սոցիալ-հոգեբանական հասունության մակարդակով պայմանավորված՝ կամ իրականության խեղաթյուրված ընկալման խնդիրներ են առաջանում, կամ տեղի է ունենում ակտիվության ուղղորդում փոխարինող գործունեության, այլ պահանջմունքների բավարարման վրա:

Որպես առանձին խումբ՝ կարելի է դիտարկել պահանջմունքային համակարգի կառուցվածքում առկա պրոբլեմները.

1. Պահանջմունքների աններդաշնակ զարգացման դեպքում դիտվում է պահանջմունքային տարբեր խմբերի միջև հավասարակշռության խախտում: Վերջինիս արդյունքում անձը ստեղծում, երբեմն՝ ինքն է հրահրում այն իրադրությունները, որոնցում պահանջմունքներ-

րի որևէ խումբ բավարարվում է մյուսի հաշվին:

2. Բարձրագույն որևէ պահանջմունքի անբավարար ձևավորվածության դեպքում վարքի մոտիվացիայում գերակա դիրք են ստանձնում ցածրակարգ պահանջմունքները: Ցածրակարգ որևէ պահանջմունքի չափազանց արտահայտվածությունն էլ կարող է խոչընդոտ դառնալ բարձրագույն պահանջմունքների զարգացման համար:

Տարբեր պահանջմունքների որակի և բովանդակության հետ կապված պրոբլեմներ.

- պահանջմունքների աղքատություն և սահմանափակություն, ոչ բավարար զարգացվածության մակարդակ,

- սոցիալականորեն անհրաժեշտ պահանջմունքների թերզարգացում, անձի սոցիալ-հոգեբանական հասունության մակարդակից կախված՝ վերջիններս էականորեն տարբեր են,

- ֆիզիոլոգիական, նյութական և հոգևոր առանձին պահանջմունքների խեղաթյուրվածություն,

- առանձին պահանջմունքների չափազանցված արտահայտվածություն, որոնք կարող են գերազանցել միջին վիճակագրական ցուցանիշը, չհամապատասխանել տարիքային և սեռային, մշակութային և ազգային առանձնահատկություններին կամ նորմայի ծայրահեղ դրսևորումներ ունենալ, ինչը դիտարկվում է բնավորության շեշտված տիպերի մոտ,

- ներոտիկ պահանջմունքներ,

- ախտաբանական պահանջմունքներ և դրդապատճառներ, որոնք դիտվում են անձի խանգարումների դեպքում [6]:

«Ներոտիկ» պահանջմունքների ձևավորման մեխանիզմը մանրակրկիտ վերլուծել է Կ. Հորնին [7, էջ 55-71]: Նա ներկայացրել է 10 պահանջմունքներ՝ որպես տազնապային, անվտանգության զգացումի պակաս ունեցող երեխայի մոտ մեկուսացվածության, անպաշտպանվածության զգացման հաղթահարման ռազմավարություններ: Այդ պահանջմունքներն անվանում է «ներոտիկ», քանի որ դրանք ներկայացնում են խնդրի իռացիոնալ լուծումներ: Ներոտիկ պահանջ-

մունքներն իրականանալի չեն: Օրինակ, սիրո ներուտիկ պահանջ-մունքն անհագ է, երբեք չի կարող բավարարված լինել, կատարելության փնտրումը ևս դատապարտված է անհաջողության [2, էջ 136]:

Առանձին խմբով կարելի է ներկայացնել նաև պահանջմունքների բավարարման եղանակների ու միջոցների ոչ ադապտիվության, անբարոյականության և հակաօրինականության հետ կապված պրոբլեմները: Այս դեպքում պետք է նկատի ունենալ, որ պահանջմունքների դրսևորման և բավարարման գործընթացը կարգավորվում է անձի ինտելեկտուալ մակարդակով՝ արժեքային կողմնորոշումների և գերակայող արժեքների հիման վրա:

THE PROBLEMS OF NEEDS SPHERE

ARAKELYAN A. D.

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

The needs sphere is the key component of the personality motivation system. Satisfaction of needs is an indicator of personal adaptation. When discussing the problems of the need sphere, it should be taken into consideration that the manifestation mechanisms of different groups needs are conditioned by the peculiarities of personal general development, self-consciousness, cognitive and emotional spheres. Needs are manifested by interactions with other components of the personality structure, they have their influence on both formation and manifestation as well as they carry their influence. In the article, the author made an attempt to group the problems of the need sphere. The problems connected with the structure of the needs system, the quality and the content of needs are identified;

- poverty and narrowness of needs, insufficient level of development,
- underdevelopment of socially important needs,
- deformation of separate physiological, material and spiritual needs,
- neurotic needs,
- hypertrophied needs,
- pathological needs and motives.

The problems that arise as a result of needs dissatisfaction and the changes in the personal structure are also discussed in the article.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ильин Е. П., Мотивация и мотивы.- СПб.: Питер, 2006, 512 с.
2. Келвин С. Холл, Гардней Линдсей, Теории личности М., ЭКСМО-Пресс, 2000, 592 с.
3. Маслоу А., Мотивация и личность. 3-е изд., СПб., Питер, 2008, 352 с.
4. Психология эмоций. Хрестоматия по психологии. Автор-составитель В. Вилюнас.-СПб.: Питер, 2008, 496 с.
5. Психология: учеб. Отв. Ред. А.А. Крылов.-2-е изд., М.: ТК Велби, Изд. Проспект, 2008. 752 с.
6. Репина Н. В., Воронцов Д. В., Юматова И. И. Основы клинической психологии .- Ростов н/Д: Феникс, 2003. - 480 с.
7. Хорни К., Невротическая личность нашего времени. М.: Академический Проект, 2008, 208с.

ԵՍ-ԿՈՆՑԵՊՏԻԱՅԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Առաքելյան Ս. Հ.

Խ. Արքովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. *Ես-կոնցեպցիա, հասկացության ծավալ, բաժանման կանոններ և հիմք, ֆիզիկական, հայելային, իդեալական Ես-եր, Ես-ի հակաիդեալ են:*

Ես-կոնցեպցիայի պրոբլեմների համակարգի առանձնացման, այդ պրոբլեմների դասակարգման համար առաջնահերթ խնդիրը Ես-կոնցեպցիայի՝ որպես հասկացության բովանդակության հստակեցումը, դրանում ընդգրկված երևույթների հստակեցումն ու տարանջատումն է: Չնայած այս հիմնախնդրին նվիրված հսկայածավալ գրականությանը՝ տեսակետերի տարակարծության հետ միաժամանակ առկա են նաև բազմաթիվ հակասություններ, տրամաբանական սխալներ, բաց խնդիրներ: Ասենք, կառուցվածքային բաղադրիչներն առանձնացնելու փորձերում խախտվում են տրամաբանության այնպիսի պարզագույն կանոններ, ինչպիսիք են «բաժանման միևնույն հիմքի», երկրորդ՝ «անդամների՝ միմյանց բացառելու», երրորդ՝ «բաժանման անդամների գումարն արդյունքում պետք է ձևավորի ամբողջը», չորրորդ՝ «անդամները ներկայացվեն հերթականությամբ՝ մերձակա տեսակներով», հինգերորդ՝ «հիմքը պիտի լինի օբյեկտիվ որևէ հատկանիշ, առանձնահատկություն» (բաժանողի անձը, նրա ճաշակը, օրինակ, չեն կարող հիմք դառնալ) [1, էջ 27, 2, էջ 73-75, 3, 4, էջ 165-166]: Արդյունքում, ասենք, գիտական գրականության մեջ իդեալական, առկա, ֆիզիկական, իրական, ֆանտաստիկ, փաստական և այլ Ես-երի ներկայացումը նույն շարքում որպես Ես-կոնցեպցիայի բովանդակության մասեր հակասում է տրամաբանական բաժանման բոլոր կանոններին:

Սույն հոդվածում «Ես-ի պրոբլեմներ» հասկացության բովանդակությունը, «պարունակությունը», ծավալն ենք փորձել վերլուծել,

տրամաբանության մեջ ընդունված տերմինով՝ «բաժանել», ինչը, ըստ մեզ, հնարավոր է միայն «Ես-կոնցեպցիայի»՝ որպես հասկացության բաժանման հիման վրա:

Բացի վերոնշյալ խնդիրը, կարևոր խնդիր է նաև Ես-կոնցեպցիայի կառուցվածքի, դրանում առկա բաղադրիչների վերաբերյալ տեսակետերի բազմազանությունը, դրանց բախումայնությունը, քանի որ հեղինակների մի մասն ընդունում և կարևորում է այն կամ այն բաղադրիչը, մյուսները՝ ոչ, բաղադրիչների մի մասը անվերապահորեն ընդունվում է բոլոր հեղինակների կողմից, մինչդեռ մի քանիսը շատ վիճահարույց են:

Այս ամենը հաշվի առնելով՝ հողվածում կփորձենք ներկայացնել Ես-կոնցեպցիայի և դրա հիման վրա՝ պրոբլեմների վերաբերյալ տեսակետերի համակարգման մեր փորձը, նաև մեր տեսակետը: Տեսակետերը մենք կփորձենք ներկայացնել այն սխեմայի շրջանակներում, որը մտադիր ենք առաջարկել: Իսկ այդ գործում մեզ համար կողմնորոշիչ են դարձել հետևյալ երեք կետերը.

- տրամաբանության ընդհանուր սկզբունքները, կանոնները,
- տարբեր հեղինակների տեսակետերում առկա ընդհանուր տարրերը,
- փաստական հիմք ունեցող բաղադրիչները, որոնց գոյությունը կասկած չի հարուցում:

Այսպիսով, այս սկզբունքներին հետևելով՝ մենք կարող ենք Ես-կոնցեպցիայի բաղադրիչները դասակարգել ամենատարբեր հիմքերով՝ յուրաքանչյուր դեպքում բաղադրիչների առանձին խումբ ստանալով:

1. Եթե Ես-կոնցեպցիա հասկացության ծավալը բաժանում ենք իրականության հետ կապի հիմքով, արդյունքում ունենում ենք Իրական Ես, Հնարավոր Ես (սա իրական կարող է դառնալ զարգացման որոշակի ընթացքի դեպքում), Վարքային Ես (միջանձնային հարաբերություններում դրսևորվող և իրականությանից որոշակիորեն տարբերվող) և Կեղծ Ես (իրականության լրիվ աղճատում, բևեռայնություն է ենթադրում): Հետևաբար, պրոբլեմները կարող են դրսևորվել Իրա-

կան, Հնարավոր, Կեղծ Ես-երի աղճատման, չգիտակցման, Կեղծ Ես-ի գերակայության և այլ տարբերակներով:

2. Այս կամ այն ոլորտին առնչության հիմքով դասակարգման դեպքում կտարանջատվեն «Ֆիզիկական», «հոգեբանական» և «սոցիալական» Ես-երը: Հնարավոր հոգեբանական պրոբլեմները. Ֆիզիկական Ես-ի, Հոգեբանական Ես-ի և սոցիալական Ես-ի մերժում, աղճատում, չգիտակցումն են: Ֆիզիկական Ես-ին առնչվող խնդիրներից են՝ դիսմորֆոֆորիան, ինքնագնահատականի խնդիրներ՝ ֆիզիկական Ես-ի հիմքով և այլն: Հոգեբանական Ես-ի դեպքում կարող են լինել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են սեփական հոգեբանական առանձնահատկությունների մասին ոչ օբյեկտիվ պատկերացումները, որի արդյունքում՝ ինքնագնահատականի խնդիրներ՝ հոգեբանական ինքնընկալման հիմքով, անարդյունավետ գործունեություն և այլն: Սոցիալական Ես-ի ներսում արդեն պատմամշակութային ազդեցությունների և անհատական զարգացման առանձնահատկությունների փոխհարաբերության հիմքով կարելի է առանձնացնել «ենթաբաղադրիչներ» «սեռային Ես-ը» կամ «սեռային ինքնագիտակցությունը», «ամուսնու կամ կնոջ Ես-ը», «ծնողական Ես-ը», «մասնագիտական կամ ակադեմիական Ես-ը», «էթնիկական Ես-ը» և այլն: Խնդիրներն էլ համապատասխանաբար կառնչվեն Ես-ի այդ ենթաբաղադրիչներին՝ դրանց չձևավորվածության, չգիտակցման, մերժման, աղճատման կամ գերաժևոհման արդյունքում (սեռային Ես-ի պրոբլեմներ՝ տրանսսեքսուալիզմ, մասնագիտական Ես-ի աղճատվածություն, չձևավորվածություն կամ թերի ձևավորում, ամուսնու կամ կնոջ, ծնողական, էթնիկական Ես-երի մերժում, աղճատվածություն, չձևավորվածություն կամ թերի ձևավորում և այլն):

3. Ըստ ժամանակային գծի վրա տեղակայման՝ կունենանք Անցյալ Ես, Ներկա Ես, Ապագա Ես բաղադրիչները: Հոգեբանական պրոբլեմների հնարավոր տարբերակներ են դրանցից որևէ մեկի չգիտակցումը, Անցյալ կամ Ապագա Ես-երի գերակայությունը (անցյալով ապրելը, տագնապները և այլն), որը ոչ միայն հոգեբանական ծանր ապրումներով կարող է դրսևորվել, այլ վատ ազդել միջանձնային հա-

րաբերությունների ու գործունեության արդյունավետության վրա:

4. Ըստ ձևավորման ճանապարհի, սկզբնաղբյուրի, տարբերակում ենք Հայելային Ես-ը և Ներհայեցողական Ես-ը: Հիմնական հոգեբանական խնդիրներն այս դեպքում անկայուն, զգայուն ինքնագնահատականն է, որը հայելային Ես-ի գերաթժևորման, դրա ծայրահեղ դոմինանտության, ներհայեցողական Ես-ի չձևավորվածության արդյունքում է դրսևորվում:

5. Ըստ իդեալական գոյության ձևի, բովանդակության ցանկալիության աստիճանի՝ կառանձնացվեն Իդեալական Ես-ը և Ես-ի հակաիդեալը: Վերջիններիս առնչվող խնդիրներ կարող են լինել կրկին դրանց չձևավորվածության, չգիտակցման, մերժման, աղճատման կամ գերաթժևորման արդյունքում դրսևորվող երևույթները (Իդեալական Ես-ի անորոշությունը, տագնապային կամ շատ հուզական վերաբերմունքը դեպի Իդեալական Ես-ը և Ես-ի հակաիդեալը):

6. Ես-կոնցեպցիայի բաղադրիչները հնարավոր է դասակարգել նաև ըստ դրանց բովանդակության կոգնիտիվ կամ հուզական (աֆեկտիվ) բնույթի: Ըստ այդմ, խնդիրներ կարող են կապված լինել սեփական Ես-ի ընկալմանն առնչվող փաստական իրողությունների, դրանց գիտակցման, իմացական գործընթացներով դրանց անցկացման հետ, փաստական հիմքի և դրա հանդեպ վերաբերմունքային, հուզական կողմի անհամապատասխանության հետ: Կոգնիտիվ հատվածին առնչվող խնդիրների դեպքում, օրինակ, մարդը կարող է չգիտակցել, ինքն իրեն հաշիվ չտալ, չվերլուծել իր Ես-ի այս կամ այն բաղադրիչի մասին: Այսպես, դիսմորֆոֆոբիայի, բուլեմիայի, նյարդային անորեքսիայի և այլ խանգարումների դեպքերում մարդն անկեղծ, սակայն իրականությանը բոլորովին չհամապատասխանող պատկերացում ունի, օրինակ, սեփական մարմնի քաշի, ծավալների կամ համամասնության մասին [5, 6]: Ես-ի հուզական բաղադրիչը ևս կարող է նման խնդիրներ Ասենք, մարդն ընկալում, հիշում, վերլուծում, գիտակցում է, որ ինքը այս կամ այն ֆիզիկական կամ հոգեբանական, սոցիոմշակութային առանձնահատկությունն ունի, բայց թե ինչպես է վերաբերվում դրանց, շատ անհատական է: Այսպես, բազմաթիվ հետազոտություն-

ներ ցույց են տվել, որ մարդկանց դրական հուզական վերաբերմունքը դեպի սեփական անձը բոլորովին էլ պայմանավորված չէ իդեալական ֆիզիկական առանձնահատկություններ ունենալով, ավելորդ քաշ ունեցող մարդկանց մեծամասնությունն ունի դրական ինքնագնահատական, ինքնավերաբերմունք [5, 6] և ընդհակառակը, իդեալական ֆիզիկական կամ հոգեբանական պարամետրեր ունենալու դեպքում էլ մարդը կարող է ունենալ բացասական ինքնագնահատական, նույնիսկ՝ ինքնազզվանք, ինքնամերժում և այլն:

7. Ըստ սեփական Ես-ի հետ նույնականացման աստիճանի դասակարգման դեպքում կատարվի Ես-ի զգացողության առկայություն կամ բացակայություն (Ոչ-Ես), որն ըստ մեզ, բացառված չէ, որ սեփական Ես-ի հուզական-գնահատողական կողմի գերուժեղ բացասական ֆոնի արդյունք լինի: Ես-ի զգացողության բացակայության դրսևորման ծայրահեղ դեպքում գործ ունենք դեպերսոնալիզացիայի հետ:

Բնականաբար, պրոբլեմների թվարկված շարքը կատարյալ և ամբողջական համարվել չի կարող և հետագա լրամշակման հնարավորություն է ենթադրում:

THE SYSTEM OF SELF-CONCEPT PROBLEMS

ARAKELYAN S. H.

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

In the article the authors' opinion concerning the problems of self-concept is presented. A system of self concept and its' problems is presented, based on many scientific facts and rules logical division: rule of one /not more/ basis (principle), rule of mutually exclusive sub-classes, rule of division without leap (each step should divide a class or sub-class

into its proximate sub-classes) etc. In the article different sub-classes of self-concept psychological problems are presented as a system.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բրուտյան Գ. Ա., Տրամաբանության դասընթաց, 4-րդ հրատ., Երևան, ԵՊՀ հրատ., 1987, 539 էջ
<https://chairoflogicphiloscult.files.wordpress.com/2013/02/brutian-pp-53-96.pdf>.
2. Բրուտյան Գ. Ա. Տրամաբանություն (խմբ. Հ. Ժ. Քոչարյան), Երկրորդ, վերամշակված հրատարակություն, Ուսումնական ձեռնարկ հանրակրթական դպրոցի 9-10-րդ դասարանների համար Երևան, «Գիտություն», 1998, 213 էջ
<https://chairoflogicphiloscult.files.wordpress.com/2013/02/brutyanyan.pdf>.
3. Definition and division
<http://egyankosh.ac.in/bitstream/123456789/37952/1/Unit-3.pdf>
4. Joyce G. H., Principals of logic. London, New York, Bombay and Calcutta, «Longmans, Green & CO», 1908, 431 pages.
https://download.tuxfamily.org/openmathdep/Logic_post_1900/Principles_of_Logic-Joyce.pdf
5. Mónica E. Muñoz, Christopher J. Ferguson, Body Dissatisfaction Correlates with Inter-Peer Competitiveness, Journal of Social and Clinical Psychology, Vol. 31, No. 4, 2012, pp. 383-392, Texas A&M International University, 2012, Kostanski.
6. Shaw H. E., Stice E., & Springer D. W., Perfectionism, body dissatisfaction, and self-esteem in predicting bulimic symptomatology: Lack of replication. International Journal of Eating Disorders, (2004) 36, 41–47.

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՎԱՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ասարյան Զ. Դ.

Խ. Արոյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. *հրամանատար, կամք, հաստատարականություն, վճռականություն, հոգեբանական օրինաչափություններ, ռեսուրսների կառավարում:*

Հայրենիքի պաշտպանության արդյունավետությունն անհամեմատ մեծ է լինում, երբ ԶՈՒ ստորաբաժանումներում անձնակազմը վստահում է իր հրամանատարներին և համախմբվում երկրի պաշտպանության գաղափարի շուրջ: Հրամանատարի նկատմամբ անձնակազմի լիարժեք վստահությունն ու աջակցությունը փոխադարձ պատասխանատվության մի յուրահատուկ խթան են դառնում զինծառայողների մարտական պատրաստության մակարդակի բարձրացման և վտանգի դեպքում համախմբման, անձնագրհույան դիմելու պատրաստականության առումով: Հետևաբար՝ առանձնահատուկ կարևոր հիմնախնդիր է համարվում զինվորական կոլեկտիվներում առաջավարի հոգեբանական բնութագրերի վերաբերյալ ուսումնասիրություններին անդրադարձ կատարելը: Ռազմական պատմության մեջ բազմաթիվ են օրինակները, երբ հրամանատարի անձնային որակական հատկանիշների ու կարողությունների շնորհիվ հնարավոր է դարձել կտրուկ փոխել ճակատամարտի ու պատերազմի ելքը: Այսպիսով՝ ԶՈՒ-ի արդյունավետ գործունեության կազմակերպումը պայմանավորված է հրամանատարական կազմի արդյունավետ կառավարումից, որը հնարավոր է, եթե հրամանատարները բացի իրենց մասնագիտական գիտելիքներից ունեն նաև առաջավարին՝ լիզերին բնորոշ որակական հատկանիշներ ու կարողություններ: Անշուշտ այդ մասին գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ՝ անդրադարձ

կատարելով նաև այդ իրադարձությունների սոցիալ-հոգեբանական պատճառներին: Վերլուծելով դրանք տեսնում ենք, որ հիմնականում առանձնացվում են առաջավարին բնորոշ հետևյալ հատկանիշներն ու կարողությունները՝ գիտելիքները, նախաձեռնողականությունը և ինքնուրույնությունը, հրամանատարական կամքն ու կազմակերպչական ընդունակությունները, համախմբելու կարողությունը, հաստատականությունը, վճռական պահերին գործելու ունակությունը, խստապահանջությունը, կարգապահությունը, սթրեսակայունությունը, բարդ իրավիճակներում ոչ ստանդարտ որոշումներ ընդունելու և դրանք կատարելու կարողությունները և այլն: Հին Չինացի ռազմական ստրատեգ Սուն Ցզին, նշում էր, որ հաղթանակին հասնելու համար զորավարը պետք է ունենա հետևյալ հատկանիշները՝ քաջություն, մարդասիրություն, արդարություն, խստություն [3]:

Հոգեբանության մեջ առաջավարությունն սահմանվում է որպես մարդու հոգեկան վիճակ, որը որոշակի կամային հատկանիշների շնորհիվ ունակ է ձեռք բերելու իշխանություն, և խմբի վրա ունենալ որոշակի ազդեցություն [4, էջ 191]: Այդ ազդեցությունը ձեռք է բերվում որոշակի ժամանակահատվածում՝ ընդհանուր նպատակների իրականացման ընթացքում, երբ լիդերը (հրամանատարը) իր գործունեության շնորհիվ կարողանում է հասնել հաջողությունների, երբ իր ղեկաված անձնակազմի շրջանում ձևավորվում է հոգեբանական նույնացման սոցիալ-հոգեբանական բոլոր նախադրյալները, երբ գրեթե բոլորը խորքային՝ անգամ հուզական մակարդակով, ընկալում են խմբի (կոլեկտիվի) անդամների դերն ու նշանակությունը՝ հայրենիքի պաշտպանության գործում հաջողություններ ունենալու և իրենց անվտագության ապահովման համար:

Մոնտեպյոն Կառլոս Մեծին բնորոշ հատկանիշներից և ունակություններից առանձնացնում էր վճռականությունը և կառավարելու արվեստին տիրապետելը, մասնավորապես նշում էր, որ Կառլոս Մեծին հաջողվում էր վերացնել հպատակների կողմից իրենց պարտականությունները չկատարելու առիթը: Նա կարողանում էր պատժել,

բայց ավելի լավ կարողանում էր՝ ներել: Մարդ, որը ամենամեծ գաղափարները իրականացնում էր մեծագույն պարզությամբ ու վարպետությամբ, բարդ գործերը կատարվում էին հեշտությամբ, իսկ դժվարները՝ արագ [5, էջ 714]: Իտալացի գրող, պատմաբան, փիլիսոփա Նիկոլո Մաքիավելին կարևորում էր առաջավարի կողմից շարունակաբար ինքնակրթության, վերլուծական մտածողության զարգացման միջոցով գիտելիքները հարստացնելու, պատմությունից դասեր քաղելու անհրաժեշտությունը: Նշելով, որ. «...տիրակալը պետք է կարդա պատմական աշխատություններ, ընդամին, խորությամբ ուսումնասիրի ականավոր զորավարների գործունեությունը, փորձի ըմբռնել, թե ինչպես են նրանք պատերազմել, ինչն է կանխորոշել նրանց հաղթանակներն ու ինչը՝ պարտությունները, որեսզի հասնի առաջիններին և խուսափի երկրորդներից» [2, էջ 106]:

Ուսումնասիրելով զինվորական ստորաբաժանումներում հաջողությունը պայմանավորող հրամանատարի անձնային սոցիալ-հոգեբանական որակները, ապա տեսնում ենք, որ այդ որակները զարգանում են հաջողության հետ զուգահեռ: Այլ կերպ ասած առաջադրանքներով և դրանց հաջող կատարմամբ ստեղծվում են պայմաններ լիդերության, մասնավորապես՝ կառավարման մեխանիզմների զարգացման համար: Մինևույն ժամանակ առաջավարին բնորոշ է գաղափարական համոզմունքներն ու հայրենասիրությունը, և այդ առիթով Գարեգին Նժդեհը նշում է, որ հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, ընկնում՝ դրա պակասի պատճառով [1, էջ 28-29]: Ուստի հայրենիքի պաշտպանության համար անհրաժեշտ է, ոչ միայն հրամանատարի մասնագիտական և հոգեբանական պատրաստում զինվորական գործունեությանը, այլև հայրենիքի պաշտպանության շուրջ անձնակազմի համախմբում այդ գաղափարական համոզմունքների ու հայրենասիրության շուրջ:

Զինվորական կոլեկտիվներում առաջավարի համար պետք է առանձնացնել հետևյալ որակները՝ ինտելեկտը, գիտելիքը, ինքնավստահությունը, հուզական հավասարակշռվածությունը, սթրեսակայու-

նությունը, հաջողության հասնելու ձգտումը, նախաձեռնողականությունը, հուսալիությունը, պատասխանատվությունը, անկախությունը, շփվողականությունը:

Զինվորական ստորաբաժանումներում կոլեկտիվիզմի ձևավորման գործում հրամանատարի պատասխանատվությունը ենթադրում է վերահսկողություն սահմանել ոչ միայն պաշտոնական, այլև ոչ պաշտոնական հարաբերությունների վրա, այլ կերպ ասած՝ իրավական և սոցիալական նորմերի վրա: Այստեղ հրամանատարից պահանջվում է նաև կոահողականություն: Նրա հանդեպ տաժաժ հարգանքի և վստահության գործոնը կանխորոշիչ նշանակություն է ունենում կոլեկտիվի ձևավորման գործում: Առանց դրա անհնար է անվերապահ ենթարկվածության ապահովումը: Զինծառայողը պետք է հավատա ղեկավարի որոշումների անկեղծությանը, արդարությունը: Ինչպես նաև նրա կողմից ղեկավարվող գործի հաջողությանը: Բազմաթիվ հետազոտողներ պնդում են, որ հեղինակությունը չի տրվում ղեկավարին պաշտոնի հետ միասին, այլ ձեռք է բերվում պրոֆեսիոնալության և հոգատարության դրսևորման շնորհիվ:

Հույզերը ղեկավարել չկարողացող հրամանատարը որպես կանոն, իր աշխատանքը կազմակերպել չի կարողանում: Հույզերի տիրապետումը կանխորոշիչ նշանակություն է ունենում ստորաբաժանման արդյունավետ գործունեության առումով, քանի որ այն վստահության ձևավորման հիմքն է հանդիսանում զինվոր-սպա փոխհարաբերություններում: Այդ վստահության միջոցով հրամանատարը ապահովում է արդարության մթնոլորտ և գնահատել է կարողանում ենթակայի գործողությունները: Հրամանատարին անհրաժեշտ են՝ լսելու և կազմակերպչական կարողություն, մասնագիտական գիտելիքներ, համարձակություն, ընկերասիրություն, անկողմնակալություն, հայրենասիրություն, կոկիկություն, ինքնատիրապետում և խստապահանջություն իր ու ենթականների նկատմամբ: Նշված անձնային հատկանիշները կարևոր նախադրյալներ են ստեղծում հրամանատարի համար՝ դառնալու կոլեկտիվի ձևավորման առանցքը և

ամբողջականացնում են կարգապահության, օրինակելիության խնդիրը: Անհրաժեշտ է խուսափել չափազանց խստությունից: Լինում է և մյուս ծայրահեղությունը. ցուցադրական բարություն, ինչը նույնպես անթույլատրելի է:

Անձնական օրինակը համարվում է հրամանատարի վարքի կարևոր գիծը: Յուրաքանչյուր հրամանատար պետք է լինի բարձր կարգապահության օրինակ: Չէ՞ որ նա մշտապես գտնվում է ենթակաների ուշադրության կենտրոնում: Եթե հրամանատարները իրենք են թույլ տալիս բացթողումներ ծառայության ընթացքում, ապա նրանց օրինակին կարող են հետևել նաև իրենց ենթակաները: Հրամանատարի կոպիտ վերաբերմունքը ենթակային ևս կարող է դառնալ ընդօրինակման առարկա: Այսպիսով՝ հրամանատարի հեղինակության ձևավորումը պայմանավորված է ռազմամասնագիտական գիտելիքների մակարդակով, գործունեության ընթացքում ձեռք բերված հմտություններով:

Հաշվի առնելով բանակում առաջավարի հիմնախնդրի կարևորությունը՝ անհրաժեշտ է մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման և կոլեկտիվների ձևավորման առումով օգտագործել հոգեբանական գիտության նվաճումները: Առաջավարի ձևավորման հոգեբանական օրինաչափությունների և բնութագրերի բացահայտումը մեզ հնարավորություն է տալիս զինվորական գործունեության առանձնահատկությունների հաշվառմամբ դասկարգելու հրամանատար-առաջավարի մասնագիտության հոգեբանական բնութագիրը:

PSYCHOLOGICAL CHARACTERISTICS OF A LEADER IN MILITARY STAFFS

ASATRYAN Z. D.

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

Taking into account the historical experience, the article analyzes the psychological characteristics of a leader, which are of a significant importance for commanders from the aspect of success-seeking. It is mentioned that in view of the problem of the significance of a leader's role in the army, it is necessary to apply the advances in psychology in terms of effective human resources management and formation of collectives.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նժդեհ Գ., Հատընտիր: Երևան, 2006:
2. Մաքիավելի Ն., Տիրակալը: Երևան, 2010:
3. Սուն Ծըա, Պատերազմի արվեստը: Երևան, 2010.
4. Еникеев М. И., Психологический энциклопедический словарь. М., 2006.
5. Монтескье Ш. -Л., Избранные произведения. М., 1955.

ԽԱՆԴ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ավագիմյան Հ. Ռ., Կիրակոսյան Գ. Ա.

Վանաձորի պեդագոգական համալսարան, Վանաձոր, Հայաստան

Հանգուցային բառեր. *խանդ, սեր, միջանձնային հարաբերություններ, զգացմունք:*

Խանդը մարդու բնավորության այն գծերից է, որն դրսևորվում է ամբողջ կյանքի ընթացքում և հանգեցնում է ընտանեկան և միջանձնային հարաբերությունների քայքայման: Երբեմն խանդը ասոցացվում է սիրո, նախանձի, ժլատության, տաքարյունության, էգոիզմի, անգամ խելացնորության հետ: Մարդկանց մոտ խանդը ավելի խորն արմատներ ունի, որն արմատավորված է մի շարք ազգերի գիտակցության մեջ, առասպելներում, ժողովրդական բանահյուսության մեջ: Վերլուծելով մարդկության պատմության զարգացումը, հետազոտողները եկան այն եզրահանգման, որ խանդն առաջանում է այն երկրի մշակույթներում, որտեղ առկա է սեռային խտրականություն:

Խանդը բնութագրվում է բացասական հուզական վիճակների համակցություններով, որն զգացվում է ինչ-որ երևույթի կամ ինչ-որ անձի նկատմամբ կորստի տագնապից: Այն պատմականորեն արմատավորված է, քանզի որոշ մշակույթներում չկան հստակ կանոնակարգեր, այն մասին թե ինչը կարող է բաժանել մարդուն և իրեն պատականող սեփականությանը: Այդ իսկ պատճառով հնարավոր է, որ մի մշակույթի մարդկանց մոտ խանդը ավելի վառ արտահայտվի քան այլ մշակույթի ներկայացուցիչների մոտ:

Խանդը հոգեվիճակ է, որն առաջացնում է մի շարք հույզեր, նրա հետևանքով կարող են առաջանալ նաև վարքային խանգարումներ: Համարվում է, որ խանդը կապված է սիրո հետ, մարդիկ ընդունելով սերը և խանդը որպես ամբողջություն: Ընդհանուր առմամբ, խանդը

նրա օբյեկտի նկատմամբ իր սեփականությունը համարելն է, որը դրսևորվում է զգացմութային կապի ձևով: Խսանդոտ զուգընկերը պահանջում է մեծ ուշադրություն իր նկատմամբ: Այդ ամենի պակասի արդյունքում ի հայտ է գալիս խանդը, որն ուղեկցվում է բազմաթիվ հույզերով կամ մարդուն կորցնելու մեծ վախով, կամ ագրեսիայով: Խանդը ուղեկցվում է վիրավորանքով, թախիծով, ամոթով, տազնապով և այլն: Խանդի զգացում կարելի է ունենալ ցանկացած օբյեկտի հանդեպ՝ իրական թե անիրական, լինի այն կին թե տղամարդ, երեխա թե կենդանի, բայց այն սիրո ուժի ցուցանիշ է:

Հաճախ խանդը անհնքնավտահության ցուցանիշ է: Որպես օրենք խանդը զգում են այն մարդիկ, ովքեր իրենց վրա վստահ չեն կամ հակառակը՝ հնքնավստահ են, և նրա օբյեկտին համարում են իրենց սեփականությունը:

Տազնապայնութայնմբ օժտված մարդիկ ավելի հաճախ և ուժեղ են խանդում քան հակառակ դեպքում: Ըստ Պանսայուկի, խանդի դրսևորման ձևը կապված է մարդու խառնվածքի հետ: Խոլերիկները և մելանխոլիկները ավելի խանդոտ են, իսկ ֆլեգմատիկները ավելի քիչ: Սոցիարցման արդյունքում պարզվել է, որ խանդոտ տղամարդիկ կազմում են 51,6%, իսկ կանայք 50,8% [1, էջ 121-123]:

Խանդը այն հոգեվիճակներից է, որն առաջացնում է ամենուժեղ, քայքայիչ հույզեր: Իյինի կարծիքով. «խանդը տարօրինակ հարաբերություն է մարդու և նրա կողմից երկրպագվող օբյեկտի միջև, որոնք կապված են տանջալից կասկածներով նրա հավատարմութայն կամ անհավատարմութայն մասին տեղեկութայններով»: Այն ամենից հաճախ ուղեկցվում է ցանկացած մարդկային անձնական հարաբերութայններում լինելով՝ ինտիմ, թե՛ գործնական, թե՛ բարեկամական:

Խանդի հետազոտութայնը բավականին բարդ է այն պատճառով, որ դրա առաջացումը և դրսևորումը հնարավոր չէ կանխատեսել: Զ. Ֆրեյդը, Կ. Յունգը, Ա. Ադլերը, Է. Ֆրոմը, Կ. Հորնին կարծում են, որ շատ դեպքերում մարդիկ թաքցնում կամ քողարկում են խանդը ոչ միայն ուրիշներից այլ նաև իրենցից: Պետք է ունենալ որոշակի սո-

ցիալական խիզախություն և հոգեբանական իրավասություն, որպեսզի խոստովանեն կամ հասկանան, որ սեփական անձի և ուրիշների նկատմամբ ագրեսիայի պոռթկումների, դժգոհությունների, աֆեկտի ազդեցությունների դրսևորումների տակ թաքնված է խանդը:

Խանդի մասին հետաքրքիր տեսակետ է հայտնել Ֆենիչելը, նա ասում էր, որ խանդոտ մարդիկ ունակ չեն սիրելու և խանդ կարելի է զգալ ոչ միայն այն մարդու նկատմամբ, ում չեն սիրում, այլև այն մարդու նկատմամբ, ում ուղղակի ատում ես [5]:

Ա. Մասլոուն նշում էր խանդի մակարդակի և սիրո առկայության միջև բացասական կորելյացիայի մասին. որքան խանդոտ է մարդը, այնքան քիչ է սիրո հավանականությունը: Նրա կողմից առանձնացվել են սիրո երկու տեսակ՝ սեր որը հիմնված է կախվածության վրա և սիրո վրա հիմնված սեր: Նրա կարծիքով սիրո այս երկու տեսակները կարող են միասին գոյություն ունենալ մի մարդու մեջ [3, էջ 33]:

Բազմաթիվ հետազոտողներ առանձնացնում են խանդի տարբեր տեսակներ, ներկայացնենք դրանցից մի քանիսը: Ռուս պրոֆեսոր Լև Շեգոլովն առանձնացնում է խանդի հակման երեք տեսակ՝

1. հոգեբանական դրվածքը և մարդու ուղղվածությունը,
2. սոցիալ-հոգեբանական դիրքը,
3. սիրո և զգացմունքի առանձնահատկությունները:

Մեկ այլ հոգեբան՝ Է. Է. Լինչլասկին, առանձնացնում է խանդի հետևյալ տեսակները.

1. Բռնատիրական խանդ - առաջանում է համառ, ինքնավստահ, սառը հույզերով, օտարված սուբյեկտների մոտ:

2. Վիրավորված ինքնասիրություն. առաջանում է ցածր ինքնագնահատական ունեցող անինքնավստահ, հեշտությամբ հուսալքվող, անհաջողությունը ու վտանգը չափազանցնող մարդկանց մոտ:

3. Պրոյեկտված խանդ - անհավատարմության մեջ սեփական միտումների, պրոյեկցիայի արդյունք:

4. Ներարկված խանդ - շրջապատի ազդեցության արդյունքն է, որ բոլոր տղամարդիկ (կանայք) նույնն են սրա վառ օրինակ է Օթելլոն

որին տրամադրեցին Դեզդեմոնայի դեմ:

5. Պաթալոզիկ խանդ - երբ ամուսիններից մեկը վերահսկում է մյուսի ամեն մի քայլը [2, էջ 36]:

Բժիշկ հոգեբան Նարիցինը առանձնացնում է խանդի երկու տեսակ՝ օբյեկտային մոտիվացված և սուբյեկտային սենզիտիվ: Օբյեկտային մոտիվացված խանդն առաջանում է, երբ զուգընկերներից մեկն իշխում կամ թվում է, թե իշխում է մյուսին. այս խանդն իշխանությունը կորցնելու վախն է: Սուբյեկտային սենզիտիվ խանդը կապված է նրա հետ, որ խանդի սուբյեկտը վախենում է կորցնել կողակցի ուշադրությունը: Կյանքում այս տեսակները մաքուր հանդես չեն գալիս այլ խառը [4]:

Մի շարք հետազոտությունների արդյունքներ ցույց են տալիս, որ հաճախ խանդը դրսևորվում է հետևյալ ուղղություններով՝ ամուսինկին, ծնող-երեխա, ընկեր(ուհի)- ընկեր(ուհի): Խանդը կարող է առաջանալ մրցակցության, ինքնահաստատման պատճառով: Սիրո, ընկերության և հարգանքի կորուստը ամենահաճախ արտահայտվող խանդի պատճառներից է, որ շատ դեպքերում համեմատում և շփոթում են նախանձի հետ: Նախանձը ցանկություն է ձեռք բերելու այն ամենը, ինչը պատկանում է ուրիշին, իսկ խանդը հիմնված է ունեցածն իր մոտ պահելու և չկիսվելու ցանկության վրա:

Խանդը կարող է հանգեցնել զուգընկերոջ կյանքի որակի նվազման՝ դառնալով բաժանման պատճառ: Ընտանիքները քայքայվում են խանդի պատճառով, որտեղ ներգրավված են և ամուսնական զույգերը, և ծնողները, և ընտանիքի այլ անդամները:

Շատերը կարծում են, որ խանդը սովորական երևույթ է, իսկ մյուս մասն էլ խանդ երևույթը դիտում են որպես հիվանդության նշաններ: Խանդը անձի ցանկությունն է օբյեկտի նկատմամբ, երբ փորձում են ստանալ նրանից ավելի շատ ուշադրություն, քան խանդի օբյեկտը տալիս է ուրիշներին:

Ըստ Ե. Պ. Իյինի, խանդի հիմնական դրսևորումներից են.

1. բացասական զգացմունք, որն առաջանում է կարևոր նշանա-

կություն ունեցող մարդու կողմից ուշադրության, սիրո, հարգանքի պակասից, այն դեպքում, երբ այդ ամենը իրենից տանում է մեկ ուրիշը,

2. տանջող կասկածներ՝ կապված դիմացինի հավատարմության և սիրո հանդեպ,

3. անհավատարմություն, կասկածներ դիմացինի նվիրվածության, սիրո և հավատարմության պակասի հիման վրա,

4. կասկածներ սիրո, կապվածություն և հավատարմության հանդեպ:

Այս բոլոր դրսևորումները հանգեցնում են նրան, որ խանդը կապված է կարևոր նշանակություն ունեցող մարդուն կորցնելու անհանգստությունից, իրական կամ հորինված մրցակցի կողմից [1, էջ 121-122]:

Այսպիսով, ծանոթանալով և ուսումնասիրելով խանդի վերաբեյալ տեսական մոտեցումները, հանգեցինք այն եզրակացության, որ խանդը, առաջանալով մարդու հուզական ոլորտում և դրսևորվելով մի շարք բացասական հույզերով, առաջացնում է այնպիսի հոգեվիճակ, որն ազդեցություն է գործում և՛ կոգնիտիվ, և՛ վարքային ոլորտներում: Այն կապված է նաև մարդու անհատական առանձնահատկությունների հետ և որպես կանոն ունի դեստրուկտիվ բնույթ:

THE PHENOMENON OF JEALOUSY IN PSYCHOLOGY

AVAGIMYAN H. R., KIRAKOSYAN G. A.

Vanadzor State University, Vanadzor, Armenia

ABSTRACT

The article touches upon some considerations on jealousy, its types, stages and different points of view. Jealousy is a kind of human character that one experiences throughout his/her life which leads to the corruption

of family and personal relationships. It can be characterised as a combination of negative emotional states, which arouses when a person perceives a threat of losing something or somebody. It is such an emotional state that causes the strongest corrupting emotions. The studies show that jealousy is associated with other emotions such as love, envy, stinginess, hot-bloodedness, egoism, even if with insanity. It is an emotional state that arouses a number of emotions. Sometimes some behavioural disorders can occur because of it. We have discussed and distinguished various points of view suggested by different psychologists. The article shows that the study of jealousy as a complex emotion is difficult: its' expression and occurrence are unpredictable. The author comes to the conclusion that occurring in the emotional state and being expressed in different negative emotions, jealousy evokes such an emotional state which affects on both cognitive and behavioural spheres. It is connected with one's individual peculiarities, as a rule it has destructive nature.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ильин Е. П., Психология любви. – СПб: 2013. – 336 с.
2. Линчевский Э. Э., Как быть с ревностью. 1978. – 32 с.
3. Мошкина Ю. Н., Психология ревности: предикторы и феноменологические паттерны. Научно-практический журнал. Гуманизация образования. N8/2010, 32-34 стр.
4. Нарицын Н. Н., Как справиться с ревностью. «Частная жизнь» № 22 ноябрь. 1997.
5. Мошкина Ю. Н., Психология ревности: предикторы и феноменологические паттерны. Гуманизация образования. 2010. <https://cyberleninka.ru/article/n/psihologiya-revnosti-prediktory-i-fenomenologicheskie-patterny>

**ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԻ ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՑՔԻ
ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Արամյան Լ. Ռ., Մակիչյան, Ս. Ա. Արզումանյան Ն. Վ.
Խ. Արսվյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան*

Հանգուցային բառեր: *Դեռահաս, ճգնաժամ, սուր, միջին, մեղմ ընթացք:*

Անձի ձևավորման ամենավճճական շրջաններից մեկը դեռահասությունն է: Այս տարիքում են սկսում առաջին անգամ ի հայտ գալ անձի սոցախտաբանական միտումները, բնավորության հիվանդագին դրսևորումները՝ փսիխոպաթիաները, հոգեկան հիվանդությունները (Է. Կրեչմեր, Ա. Ֆրոյդ, Հ. Ռեմշմիդտ, Է. Էրիքսոն, և ուրիշներ), սուիցիդները: Նրանք հաճախ դառնում են անկառավարելի: Սրվում են հարաբերությունները հասկակիցների, ծնողների և ուսուցիչների հետ (Ս. Հոլ, Լ. Ս. Վիգոտսկի, Դ. Բ. Էլկոնին, Լ. Ի. Բոժովիչ, Ս. Խուդոյան և ուրիշներ):

Շ. Բյուվերի կարծիքով դեռահասության տարիքին բնորոշ «դժվար» ախտանշանների (ժխտողականության, անհիմն ընդվզումների, ծայրահեղ ագրեսիվ վարքի, լարվածության ու տագնապների) ի հայտ գալը կարելի է բացատրել նախկին ձգտումների ու հետաքրքրությունների կորստով, որը, իր հերթին, պայմանավորված է սեռական հասունացման հետևանքներով ի հայտ եկած հզոր սեռական մղումով: Ըստ հեղինակի, սա «նեգատիվ շրջան» է, որին հաջորդում է «պոզիտիվը», երբ դեռահասի մոտ նոր արժեքներ, հետաքրքրություններ, ձգտումներ են ձևավորվում: Իսկ Կուրտ Լևինը գտնում է, որ դեռահասության տարիքում ի հայտ եկող բոլոր բացասական ախտանշանների պատճառը դեռահասի մարզինալ կարգավիճակն է. դեռահասի կենսագործունեության դաշտն արդեն ավելի լայն է, նա երեխա

չէ, սակայն դեռ մեծ էլ չէ: Հենց կարգավիճակի այս անորոշությունն էլ հանգեցնում է տագնապայնության, ներքին հակասությունների, անինքնավստահ, ծայրահեղական ու ոչ ադեկվատ վարքի [4, էջ 36]:

Է. Շպրանգերի կարծիքով դեռահասության շրջանում տեղի ունեցող գործընթացներից ամենից մեծ ուշադրության են արժանի «ես»-ի բացահայտումն ու ներհայեցողության ձևավորումը, որոնց շնորհիվ մարդը ձեռք է բերում անհատականություն, սեփական ես-ի և կյանքի ուղու գիտակցում [4, էջ 35]:

Հոգեվերլուծաբանները զարգացման այս փուլի դժվարությունները բացատրում են կենսաբանական փոփոխությունների՝ հոգեկան զարգացման վրա թողած ազդեցությամբ: Դեռահասն իր վրա զգում է հորմոններով խթանվող մղումների հզոր ալիք, իսկ այս կենսաբանական փոփոխությունները հանգեցնում են նրան, որ լիբիդոն կրկին արթնանում է՝ ակտուալ դարձնելով հաղթահարման մեծ ջանքեր պահանջող, անգիտակցականում «քնած» ավելի վաղ մակարդակների՝ էդիպյան բախումները, որոնք խախտում են սուպերէգոյի և էգոյի, բնազդների և պաշտպանությունների միջև լատենտ շրջանում ձեռք բերված հավասարակշռությունը՝ առաջ բերելով հոգեկան ակտիվության բուռն մղում: Դեռահասին իր նոր, սեռահասուն մարմինը հիշեցնում է, որ ինքը նման է նույն սեռին պատկանող իր ծնողին, սակայն նաև ունի տարբերություններ: Այդ հիշեցումը գիտակցաբար կամ ենթագիտակցաբար վերաժնում է մայր-երեխա միության չբավարարված ցանկությունները և զարգացման բուրբ նախորդ փուլերի կոնֆլիկտները: Օրինակ, իգական սեռի դեպքում «այդ կոնֆլիկտների հարթման դժվարությունները, բացի այլ նշաններից, արտահայտվում են նաև սննդի հետ կապված հարցերում դեռահաս աղջիկների անկազմակերպ վարքում, այն բանի հետևանքով, որ նրանք փորձում են այդ ճանապարհով փոխել իրենց մարմինը» [5, էջ 367]՝ ձգտելով հնարավորինս շատ տարբերվել իրենց մայրերից: Ըստ հոգեվերլուծաբաններ Ռոբերտ և Ֆիլիս Թայսոնների, սովորաբար հասունացման փուլը կարող է դառնալ ինչպես խթան, այնպես էլ՝ խոչընդոտ:

Այն սովորաբար արթնացնում է անալ փուլի բոլոր չհարթված կոնֆլիկտները, քանի որ այս հարցում մարդն անկարող է կամային սֆինկտերային գործողություններով կառավարել սեփական մարմնի արտազատումները, այստեղից էլ՝ դեռահասության տարիքի այնպիսի դժվարություններ, ինչպիսիք են անօգնականության զգացումը, պասիվությունը, ամոթը և ստորացման վախը [5, էջ 366-367]: Իսկ տղաների մոտ «նախադեռահասային և դեռահասային շրջանի կենսաբանական փոփոխությունները ձեռնոց են նետում տղայի առնականությանը, իր սեփական սեռային դերի հետ ունեցած նրա նույնականության զգացմանը և սիրո օբյեկտի ընտրության վերաբերյալ նրա նախկին դիրքորոշումներին [5, էջ 392]: Այս ամենի հետևանքով, դեռահասը մի կողմից աճող պահանջ է զգում ճնշելու իր վաղ շրջանի ցանկությունները, մյուս կողմից փորձում է ազատվել վաղ շրջանում սեռական բավարարման վրա դրված տաբուից (ինչն անհրաժեշտ է գենիտալ սեռական հարմարման համար): Վերջինս էլ ավելի է սրում առկա կոնֆլիկտը:

Լ. Ի. Բոժովիչը դեռահասության ճգնաժամի երկարատևությունն ու սրությունը բացատրում է հետևյալ կերպ. քանի որ սոցիալական զարգացումն ավելի ուշ է ավարտվում, քան սեռական, ընդհանուր ֆիզիկական ու մտավոր զարգացումը, դեռահասների մոտ տարբեր ոլորտների զարգացման այս տարաժամանակության հետևանքով առաջ են գալիս մի շարք պահանջմունքներ, որոնք սոցիալական ոլորտի զարգացման հարաբերական հասպաղման պատճառով չեն կարող բավարարվել: Վերջինիս հետևանքով դեռահասն անընդհատ ֆրուստրացված վիճակում է գտնվում, պահանջմունքների նման դեպրիվացիան էլ հանգեցնում է ճգնաժամի [3, էջ 229]: Փաստորեն, դեռահասության ճգնաժամը ձգվում և նույնիսկ սրվում է մինչև սոցիալական ոլորտում հասունացման ավարտը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ մենք մեր հետազոտության համար ընտրել ենք Մ. Լյուշերի գունային պրոյեկտիվ թեստը, ինչը հնարավորություն է տալիս ավտորոշումն իրականացնել հետազոտվող-

ների կողմից գույներն հաճելիության ընտրության միջոցով: Այն բացահայտում է անձի ֆունկցիոնալ վիճակը, ընթացիկ տրամադրությունը, ենթագիտակցական միտումները, սոցիալական հարմարվածությունը, նաև այնպիսի բնութագրեր ինչպիսիք են ֆրոստրացվածությունը, սթրեսը, տագնապայնությունը, սոցիալական հարմարվածությունը, ագրեսիվությունը և այլն, որոնք լիարժեք ձևով կարող են բնութագրել դեռահասի ճգնաժամի սրությունը: Բացի այդ մի շարք հետազոտություններ վկայում են, որ Լյուշերի թեստը բավական ամբողջական պատկերացում է տալիս անձի հուզական ոլորտի, ներհուզական բախումների վերաբերյալ [2]:

Հետազոտությանը մասնակցել են 7-9-րդ դասարանցի թվով 124 (68 տղա 56 աղջիկ) դեռահասներ: Ստացված արդյունքներն ըստ ճգնաժամի ընթացքի սրության խմբավորել ենք հետևյալ կերպ՝ սուր, միջին և մեղմ:

Փորձարկվողների 23 %-ի (28 դեռահաս) մոտ արձանագրել ենք բարձր տագնապայնություն, սոցիալական հարմարման դժվարություններ, բարձր ֆրոստրացվածություն, կոնֆլիկտայնություն, հուսահատություն և այլն: 50%-ի մոտ գրանցվել է միջին սրության ցուցանիշ, որի դեպքում առկա է որոշ ֆրոստրացվածություն, սակայն դիրքորոշումները լավատեսական են, ընդհանուր առմամբ հարմարված է միջավայրին: Մեղմ ճգնաժամային ընթացք է արտահայտվել 27%-ի մոտ. ճգնաժամային ախտանշանները գրեթե արտահայտված չեն, խիստ ցածր է տագնապայնությունը:

Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- Կարելի է հստակորեն առանձնացնել դեռահասության ճգնաժամի ընթացքի երեք մակարդակ՝ մեղմ, սուր և միջին սրության: Դեռահասության ճգնաժամը մեզանում սուր ընթացք է ունենում 20-25% դեռահասների մեջ, միջին սրությամբ է ընթանում 50-60%-ի մեջ և մեղմ է ընթանում նորից 20-25%-ի մեջ:

- Դեռահասության ճգնաժամի սուր ընթացքը մեծապես պայ-

մանավորված է նեյրոտիզմի և էքստրավերսիայի բարձր մակարդակներով, խղերիկ, մելանխոխղերիկ և խղերոսանգլինիկ խառնվածքի տիպերով, բնավորության երկու շեշտվածությունների առկայությամբ, բռնկուն շեշտվածությամբ, հնտելեկտի միջինից ցածր մակարդակով:

- Ճգնաժամի միջին ընթացքին նպաստում են բիվերսիան, սանգվոֆլեգմատիկ խառնվածքը, բնավորության երկու շեշտվածությունը, հնտելեկտի միջին մակարդակը:

- Ճգնաժամի մեղմ ընթացքին բնորոշ է բնավորության մեկ շեշտվածությունը, տագնապայնության բարձր մակարդակը, միջին մակարդակի հնտելեկտը:

SOCIAL AND PSYCHOLOGICAL PECULIARITIES OF MANIFESTATION OF ADOLESCENT CRISIS

*ARAMYAN L. R., MAKICHYAN S. A., ARZUMANYAN N. V.
ASPU after Kh Abovyan, Yerevan, Armenia*

ABSTRACT

One of the most crucial areas of personality development is adolescence, which is accompanied by a variety of crises and severity. The latter are explained by the end of social development rather than sexual, general physical and mental development. As a result of such an age-old development of teenagers, there are a number of needs that can not be met because of the relative delay in social development. In this context, three levels of adolescence crisis are characterized by mild, acute and moderate severity, with which the socio-psychological peculiarities of the adolescent behavior are conditioned.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խուրդյան Ս. Ս., Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Եր. Զանգակ-97, 2004. 256 էջ:
2. Базыма Б. А., Цвет и психика. Монография. ХГАК. Харьков, 2001. 172 с.
3. Божович Л. И., Проблемы формирования личности. Избр. Психол. Труды. Воронеж, КАП, 1995, 352 с.
4. Кон И. С., Психология ранней юности. М., «Просвещение», 1989, 255 с.
5. Тайсон Ф., Тайсон Р., Психоаналитические теории развития. Екатеринбург: Деловая книга, 1998, 528 с.

ՀՀ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Բարխուդարյան Ա. Ա.

ՀՊՏՀ քոլեջի դասախոս, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. *Մարզիկների պատրաստություն, հոգեբանական խնդիրներ, հոգեբանական բնութագիր, հոգեբանական ազդեցություն:*

Ուսումնասիրելով և վերլուծելով վերջին 10-20 տարվա սպորտային պատրաստության գործընթացի արդյունավետության պատճառները առաջատար համաշխարհային պետությունների բարձր նվաճումների սպորտում՝ ակնհայտ է դառնում, որ կիրառվում է համակարգային մոտեցում: Այդ համակարգը ստեղծվում է տարբեր նորագույն տեխնոլոգիաների ինտեգրացման շնորհիվ: Ինտեգրացված և բազմաֆունկցիոնալ համակարգի մեջ իր կարևորագույն և առանձնահատուկ տեղն է զբաղեցնում հոգեբանական ծառայությունը: Ելնելով այս հանգամանքից՝ նպատակահարմար ենք գտնում մարզիկների պատրաստության գործընթացի իրականացման համար կիրառել համակարգային հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական նորարարական մեթոդներ:

Աշխատանքի նպատակն է հոգեբանական աջակցության ունիվերսալ համակարգի ձևավորման միջոցների և բաղկացուցիչ մասերի դիտարկումը, որը հնարավորություն կտա բացահայտել և հաղթահարել մարզիկների առկա հոգեբանական խնդիրները՝ ապահովելով նրանց բարձր և կայուն հոգեբանական պատրաստվածությունը, որն իր հերթին նոր, ժամանակակից որակ կտա ՀՀ սպորտային պատրաստության գործընթացին:

Մարզիկների հոգեբանական պատրաստության գործընթացը նպատակահարմար ենք համարում իրականացնել հետևյալ փուլերով.

Ա. Ախտորոշման փուլ, որն իր մեջ ներառում է.

1. Հոգեբանական թեստավորում
2. Գործիքային հոգեֆիզիոլոգիական հետազոտում
3. Կլինիկական հոգեբանության մեթոդների կիրառում
4. Ստացված չափանիշների ինտեգրացում
5. Մարզիկի ամբողջական ամփոփիչ հոգեբանական բնութագրի կազմում

Բ. Բնութագրի բազմակողմանի հոգեբանական վերլուծություն և ազդեցության նպատակային մեթոդների ընտրություն:

Գ. Ընտրված մեթոդների կիրառում:

Հոգեբանության ժամանակակից օբյեկտիվ գործիքային մեթոդների և հոգեբանական ազդեցության հնարքների կիրառումը հնարավորություն կտա ապահովել մարզիկների բարենպաստ և կայուն ֆունկցիոնալ վիճակը, որը կհամապատասխանի համաշխարհային կարևորագույն մրցումներում բարձր արդյունքներ նվաճելու պահանջներին: Սույն մոտեցումը արդիական է և իր մեջ պարունակում է նորարական լուծում, որովհետև իրենից ներկայացնում է ամբողջական համակարգ, որը թույլ կտա բարձր մակարդակով ապահովել մարզիկների հոգեբանական պատրաստությունը:

WAYS TO REVEAL AND OVERCOME ARMENIAN ATHLET'S PSYCHOLOGICAL PROBLEMS

BARKHUDARYAN A. A.

Lecturer at ASUE College, Yerevan, Armenia

ABSTRACT

The article considers a universal systematic approach to psychological support of Armenian athletes, which application will enable

to discover and overcome existing psychological problems of athletes. It will provide a high and stable level of psychological readiness, which, in its turn, will give a new quality to the sporting process of Armenian athletes.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Платонов В. Н., Спорт высших достижений и подготовка национальных команд к Олимпийским играм: отечественный и зарубежный опыт: история и современность / В. Н. Платонов. – Москва: Советский спорт, 2010. – 309 с.

**ԱՖԵԿՏԻՎ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ՝ ԷԿՁՈԳԵՆ ԴԵՊՐԵՍԻԱՅԻ
(ԸՆԿՃԱԽՏԻ) ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ
ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Քեջանյան Ա. Տ.

Խ. Արսլյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. դեպրեսիա, հուզական խանգարումներ, ախտանշաններ, ախտապարճառածագումնաբանություն (էթիոլոգաթոզենտրիկա):

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների, դեպրեսիան համարվում է ամենատարածված հոգեախտաբանական խանգարումներից մեկը: Բացի այդ՝ դեպրեսիվ վիճակների 40%-ը (ըստ ԱՀԿ-ի) չի ախտորոշվում ժամանակին, քանի որ աֆեկտիվ ախտահարումները հաճախ արտահայտվում են սոմատովեգետատիվ և ներոզանման ախտանշաններով և հետազոտվում են լայն պրոֆիլի բժիշկների կողմից: Չստանալով համապատասխան նեղ մասնագիտական աջակցություն՝ հիվանդությունը անցնում է տևականացման փուլ՝ իր բոլոր հետևանքներով: Օրինակ՝ մեր ծառայություն («Ապագա» հոգեբանական ծառայության կենտրոն) դիմած այցելուների ընդամենը 23%-ն է բժիշկների մոտ հետազոտվելուց անմիջապես հետո ուղղորդվել հոգեթերապևտի մոտ: 59%-ը դիմել է մեզ երկարատև (3 - 6 ամիս) անարդյունավետ բուժում ստանալուց հետո: Անհրաժեշտ է նշել, որ առկա է ընկճախտվ տառապող անձանց մի ստվար զանգված, որը դուրս է մնում բուժման գործընթացից և ընդհանրապես հաշվառված չէ որևէ տեղ: Ամենավտանգավորն այն է, որ չախտորոշված և չբուժված դեպրեսիվ խանգարումները կարող են սուլիցիդալ փորձերի ու ինքնասպանությունների պատճառ դառնալ: Ըստ նույն առողջապահության համաշխարհային կազմակերպության

յան տվյալների՝ բնակչության 4-5%-ը տառապում է տարբեր տիպի դեպրեսիաներից, ընդ որում, տվյալ հիվանդությամբ հիվանդանալու հավանականությունը կազմում է 20%: Հիվանդների 15%-ը հակված է ինքնասպանության: Կատարված ինքնասպանությունների պատճառների շուրջ 60%-ը կազմում են դեպրեսիաները: Այսպիսով՝ մահացության աստիճանը դեպրեսիաներից երկրորդ տեղն է գրավում հիվանդությունների շարքում՝ առաջ անցնելով քաղցկեղածին հիվանդություններից և շատ չնչին զիջելով սիրտ-անոթային ախտահարումներին:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել հուզական խանգարումների ախտապատճառաձագումնաբանական (էթիոպաթոգենետիկական) և կլինիկական տարբեր նկարագրությունները: Սա կօգնի լայն ոլորտի բժիշկներին, հոգեբաններին և հոգեբույժներին ավելի ճշգրիտ մոտեցում ցուցաբերել աֆեկտիվ հոգեախտաբանական խանգարումներին: Ներկայումս դեպրեսիաների դասակարգման (DSM 10) հիմք են դիտվում խանգարման բնույթը, ընթացքը և համախտանիշային ներկայացվածությունը: Ըստ ծագումնաբանության՝ դեպրեսիվ խանգարումները բաժանվում են երեք խմբերի՝ էկզոգեն կամ հոգեծին, սոմատոգեն և էնդոգեն:

Էկզոգեն դեպրեսիան հոգեկանի պատասխանն է արտաքին միջավայրի հոգեվնաս ազդակներին: Այլ կերպ կոչվում է նաև ռեակտիվ դեպրեսիա (հակազդունակ ընկճախտ). հոգեկանի պատասխանն է արտաքին միջավայրի սթրեսածին ազդակներին: Դեպրեսիվ հակազդումների հիմքում մասնավորապես նկատելի են կարճատև կամ տևական սթրեսների ազդեցությունը, խաթարված միջանձնային հարաբերությունները, ընտանեկան, աշխատանքային կոնֆլիկտները, հարազատի մահը և այլն:

Սոմատոգեն դեպրեսիաները (երկրորդային, սիմպտոմատիկ) առաջանում են հիվանդությունների հետևանքով (գանգոլեդային վնասվածք, հետինտոկսիկացիոն, հետինֆեկցիոն վիճակներ, բորբոքային պրոցեսներ, սոմատիկ ախտահարումներ և այլն):

Էկզոգեն դեպրեսիայի ծագումնաբանությունը բարդ է և ամբողջովին չուսումնասիրված: Հոգեկան աֆեկտիվ խանգարումները կրում են երկբևեռ և բազմաբևեռ բնույթ (մանիակալ-դեպրեսիվ փսիխոզ), տրամադրության տևական խանգարումները (դիստիմիա, ցիկլոտոմիա, ինվոյուցիոն մելանխոլիա) պատկանում են բազմագործոնային հուզական խանգարումներին, այսպես կոչված, նախատրամադրվածության հիվանդություններին [1, էջ 215-216]: Այս դրսևորումների հիմքում անշուշտ կարևոր դեր ունի ծագումնաբանական գործոնը. ենթակեղևային վեգետատիվ-էնդոկրին կարգավորիչ համակարգի անոմալիա ժառանգաբար փոխանցման հետևանքով առաջանում է անձի հարմարման հնարավորությունների իջեցում [2, էջ 45]: Ըստ վերջին տարիների հետազոտությունների, ուղեղի գործառնական համակարգն ունի ժառանգական նախատրամադրվածության բարձր ընկալունակություն սթրեսի նկատմամբ [1, էջ 215-276]:

Ըստ կլինիկական նկարագրության՝ դեպրեսիաները կարող ենք բաժանել երկու խմբի՝ պարզ և բարդ: Պարզ դեպրեսիաների խմբին են պատկանում վեց հիմնական համախտանիշային տիպերը՝ մելանխոլիկ, տագնապային, ասթենիկ, ադինամիկ, ապատիկ և դիսֆորիկ: Բարդ դեպրեսիաների կառուցվածքում նկատելի են սինեստոպիստոնդրիկ համախտանիշը, ինչպես նաև դեպրեսիվ համախտանիշը՝ ներառված պատրանքներով, զառանցանքներով և կատատոնիկ խանգարումներով [3, էջ 156-180]:

Եթե փորձենք ներկայացնել մեր ծառայության վիճակագրությունը խնդր առարկայի վերաբերյալ, ապա այն հետևյալն է՝ դեպրեսիայի համախտանիշով դիմող այցելուների 62 %-ի դեպքում առկա են էկզոգեն դեպրեսիաները, 21 %-ի՝ սոմատոգեն և 7 %-ի դեպքում՝ էնդոգեն: Էկզոգեն դեպրեսիաներով տառապող անձանց 10 %-ը ուղղորդվել է բժիշկների կողմից, էնդոգեն դեպրեսիայի դեպքում ուղղորդումը բժիշկների կողմից կազմում է 13 %: Էնդոգեն դեպրեսիայի դեպքում այցելուների 92 %-ը կամ հաշվառված է, կամ բուժվում է հոգեբույժների մոտ, 8 %-ը ինչ-որ կերպ փորձում է թաքցնել իր անամ-

նեստիկ տվյալները նախկինում բուժում ստանալու վերաբերյալ:

Այսպիսով, դեպրեսիան տրամադրության դրսևորման այն ձևն է, որի ժամանակ տեղի է ունենում խզում հուզական վիճակի և իրականության միջև, տրամադրության, ինքնազգացողության անկումից բացի, դիտվում են ուշադրության անկայունություն, մտածողության, շարժումների դանդաղում (արգելակում), ինքնագնահատականի, ինքնավստահության, հետաքրքրության անկում, հյուժվածություն, հոռետեսություն, քնի խանգարում: Առաջանում է մեղքի և մեղավորության զգացում, որը կարող է անգամ ինքնասպանության հանգեցնել: Դեպրեսիան ավելին է քան տրամադրության ժամանակավոր անկումը, մռայլ վիճակը, ցավի և կորստի զգացումը: Հոգեբուժության մեջ նման վիճակները ընդունված է անվանել որպես հարմարակման խանգարումներ: Այն ամենը, ինչ առողջ մարդը սովորաբար ընկալում է դրականորեն՝ ուրախություն, վստահություն ու հույս ապրելով, դեպրեսիայով տառապող անձի համար այդ ամենն ընկալվում ու վերապրվում է ճիշտ հակառակ ձևով: Ամբողջ աշխարհը նրա համար մթապատ է և գորշ: Մեծ հաշվով տրամադրությունն անհատի հակազդեցությունն է արտաքին միջավայրի ազդակներին: Տրամադրության միջոցով օրգանիզմը տեղեկանում է, թե ինչ իրավիճակում է հայտնվել անձը: Եթե անհատը ապրում է դրական հույզեր, ապա նրա համար ամեն ինչ լավ է. արտաքին գործոնները հիմնականում բավարարում են իր պահանջմունքները: Եթե բացասական հույզերն են տիրում անհատին, ուրեմն հակառակն է. պահանջմունքները չեն բավարարվել: Տրամադրությունը հոգեկան գործընթացների հուզական ֆոնն է, իսկ հույզը անհատին տրված է որպես բացասական և անբարենպաստ իրավիճակներից ելք գտնելու ազդակ: Այդ իսկ պատճառով բացասական հույզը անհատին դրդում է գործելու, խոչընդոտը հաղթահարելու և վերապրելու հաղթանակի բերկրանքը: Նույնը չի կարելի ասել դեպրեսիայի դեպքում: Այստեղ ամեն ինչ այլ է: Անորոշությունը, անտարբերությունը, հուսալքությունը ոչ միայն ի մի չեն բերում անհատի հնարավորությունները՝ դրդում գործելու, ի-

րավիճակից ելք գտնելու, այլև հակառակը, «կաթվածահար» են ա-
նում ամբողջ օրգանիզմը:

Այսպիսով, չնայած տրամադրության անկումը դեպրեսիայի հիմ-
նական ախտանիշն է, իրականում դեպրեսիան չի կարելի համարել
զուտ տրամադրության անկում:

Ինչո՞վ է պայմանավորված դեպրեսիաների կտրուկ աճը:

«Անշուշտ, մեր կյանքի պայմանները գնալով լավանում են, ապրելը՝
դառնում ավելի դյուրին: **Դյուրին, սակայն ոչ ուրախ:** Հարց է ծա-
գում. ո՞րն է այս առեղծվածի հիմքը»: Դեպրեսիայի կտրուկ աճը ո-
սումնասիրողները դա պայմանավորում են երեք հիմնական պատ-
ճառներով.

✓ տևական տեղեկատվական սթրեսների և այլ ցնցումնաձին
գործոնների աճով,

✓ ժառանգականության (գենետիկ) նախատրամադրվածությ-
յամբ,

✓ բարօրությամբ (благополучие)՝ կյանքի որակի լավացմամբ:

**Տևական տեղեկատվական սթրեսի և այլ ցնցումնաձին գոր-
ծոնների ազդեցությունը:** Գաղտնիք չէ, որ մեր ուղեղի հնարավո-
րությունները շատ մեծ են, սակայն՝սահմանափակ: Գերբեռնվելով
տեղեկատվական «աղբով» և ցնցումնաձին այլ գործոններով, չկարո-
ղանալով «մարսել»՝ ուղեղը սկսում է պաշտպանվել՝ անցնելով հոգե-
բանական ցնցման փուլերով (հակազդումից, հարմարումից մինչև
հյուծվածություն), դառնում «անմեղսունակ»՝ իրավիճակի համարժեք
գիտակցմանն ու համապատասխան վարքի դրսևորմանն անկարող:
Գերլարվածությանը հաջորդում է «արգելակումը»՝ մղելով անձին
ինքնամփոփության, միայնակության, հետազայում՝ ընկճախտի [6,
էջ 53-58]:

**Ժառանգականության դերը դեպրեսիայի զարգացման գոր-
ծում:** Հնարավոր չէ թերագնահատել կենսաբանության, ավելի ճիշտ՝
ժառանգականության դերը դեպրեսիաների աճի գործում: Գիտությ-
յան, արդյունաբերության և արտադրության զարգացումը խոչընդոտ

է բնության բնական գործընթացներին և ընտրությանը, որն էլ իր հերթին ավելացնում է հիվանդությունների ժառանգական նախատրամադրվածությունը՝ ավելացնելով գենոֆոնդում «ոչ բարենպաստ գեների» առկայությունը:

Բարորությունը: Որքան էլ տարօրինակ է, բարորությունը դեպրեսիաների առաջացման կարևոր պայմաններից է: Մեր նախնիները զբաղված էին մեկ գործով, լուծում էին մեկ խնդիր՝ գոյատևման խնդիրը, ինչի նպատակով է ստեղծվել մեր ուղեղը, այդ նպատակին է հարմարված այն: Իրական վտանգների բացակայությունը լուրջ խնդիր է մեր ինքնապաշտպանական բնագրի համար: Այդ պատճառով անհրաժեշտություն է առաջանում նոր խնդիրներ ու վտանգներ «հորինելը» [4, էջ 27-39]: Իսկապես, ինչպես օտարերկրյա, այնպես էլ հայրենական հետազոտողները և մեր ուսումնասիրությունները հաստատում են այս դրույթի իսկությունը: Ապացուցված է, որ դեպրեսիայով հիվանդանալու հաճախականությունը կախված չէ կյանքի որակի «օբյեկտիվ» ցուցանիշներից: Մեր ծառայություն դիմող անձանց 62 %-ի դեպքում կյանքի որակի «օբյեկտիվ» ցուցանիշները տատանվում են միջինից բարձր ցուցիչների սահմանում, 48 %-ի դեպքում այդ ցուցիչները բավականին բարձր են:

Դեպրեսիայի ճանաչման համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ դրսևորումներին.

ա) հիմնական ախտանշաններ՝ տրամադրության անկում երկու շաբաթ անընդմեջ, սեփական հետաքրքրություններից և գործունեությունից հաճույք ստանալու կայուն բացակայություն, ընդհանուր թուլություն, հյուծվածություն, սևեռուն մտքեր մահվան վերաբերյալ (մտքեր ինքնասպանության մասին, ինքնասպանության փորձ կամ ծրագրում), մեղքի, մեղավորության զգացողություն և ինքնավնասման մտքեր,

բ) երկրորդային ախտանիշներ՝ աշխատունակության, ուշադրության անկում, ինքնագնահատականի իջեցում, անինքնավստահություն, ապագայի նկատմամբ մոայլ, հոռետեսական մտքեր, քնի և

ախորժակի խանգարումներ, քաշի անկում (ընդհանուր քաշի 5%-ից ավելին) [5, էջ 9]:

Փորձառու մասնագետը կարող է որոշել դեպրեսիայի առկայությունը հիվանդի մոտ գրեթե առաջին հայացքից: Այցելուի բնորոշ հայացքը, մարմնի դիրքը, միալար խոսքը, ոչ վերբալ հաղորդակցման հնարավորությունների սակավությունը, անվստահությունը, կասկածամտությունը, անհանգստությունը, տագնապայնության բարձր աստիճանը, երբեմն էլ անտեղի անհանգստությունը պետք է մասնագետին մղի այն մտքին, որ հնարավոր է՝ այցելուն ունի հուզական խանգարում, և ուղղորդի նրան մասնագիտական բուժման:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է ավելի լայն տեղեկատվություն ապահովել տարբեր մասնագետներին դեպրեսիայի էթիոպաթոգենետիկ մեխանիզմների, կլինիկական դրսևորումների վերաբերյալ, իրականացնել սկրինինգ հետազոտություններ բնակչության լայն շրջանում՝ այցելուների համապատասխան ուղղորդումն ու բուժումը արդյունավետ կազմակերպելու համար:

EXOGENOUS DEPRESSION PREVALENCE, DIFFERENTIAL DIAGNOSIS AND PSYCHOLOGICAL SUPPORT ISSUES OF AFFECTIVE DISTURBANCE IN ARMENIA

BEJANYAN A. T.

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

The article presents issues related to emotional disorders, particularly exogenous depression prevalence, etiopathogenetic and clinical description, differential diagnosis in Armenia. Under current conditions, emotional distress recognition and referral to narrow

specialists, the application of appropriate psychological methods and procedures will provide a person's psychological protection, consistency and improvement of life quality. Reflecting on emotional disturbances of a person, particularly the exogenous depression prevalence, an article suggests estimation that higher is the awareness of the wide range of health care providers about the clinical manifestations of depression etiopathogenetic mechanisms and screening surveys are carried out in wider range of populations, the more is the effectiveness of the prophylactic and therapeutic activities among the population for reduction of emotional disorders.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Анохин К.В., Молекулярно-генетические предпосылки системогенеза поведенческих актов // Теория системогенеза / Под ред. К.В.Судакова. М.: Горизонт, 1997. С. 215–276.
2. Божович Е. Д., «Психологические особенности развития личности подростка». Брошюра - М.: Знание, 1979. Стр. 45.
3. Бунькова К., «Депрессии и неврозы» Издательство ГЭОТАР-Медиа 2011 Серия: Библиотека врача-специалиста. Стр. 156-180.
4. Курпатов А., «5 наболевших вопросов. Психология большого города» Издательство Знание, 2012. Стр. 27-39.
5. Сандра Салмас «Депрессия. Вопросы и ответы» Изд. КРОН-ПРЕСС. Москва 1998.
6. Судаков К. В. Биологические мотивации в системной организации функций мозга // Журнал невролог. и психиатрии им. С. С. Корсакова. 1998. Т. 98. № 2. С. 53–58.

ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՅՅԵԼՈՒԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գրիգորյան Ն. Գ.

Խ. Արոլյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. *Մոտիվացիայի մակարդակ, հոգեթերապիա, հոգեթերապիայի արդյունավետություն:*

Հոգեթերապիայում այցելուի մոտիվացիայի խնդիրը զբաղեցնում է կենտրոնական դիրք՝ լինելով դրական և երկարատև ազդեցության նախապայման [1]: Այն հոգեթերապիայի արդյունավետությանը նպաստող ոչ յուրահատուկ գործոններից մեկն է, որի հիմնախնդիրն արժարժվել է հոգեթերապիայի պատմական զարգացմանը զուգընթաց [1, 3]: Դեռևս Զ. Ֆրոյդը նշում էր այցելուի բուժման մոտիվացիայի խնդիրների հիմքում ընկած այնպիսի գործոնի մասին, ինչպիսին է պահանջմունքային լարվածության և պայմանական հոգեկան հավասարակշռության հիման վրա գործող առաջնային ու երկրորդային «շահերի» միջև ծագող կոնֆլիկտը: Վերջինիս լուծման ելքով էր մեկնաբանվում այցելուի կողմից բուժման ընթացքում դրսևորվող մոտիվացիայի բնույթը [5]: Ներկայումս հիվանդության երկրորդային «շահը» դիտարկվում է որպես գիտակցվող և արտաքինից խրախուսվող երևույթ [9]:

Էքզիստենցիալ և հումանիստական հոգեթերապևտիկ ուղղություններում այցելուի մոտիվացիան ուղղակիորեն կապվում է ազատ կամքի, ինքնաիրացման և դեպի իդեալ «Ես»-կերպարը մարդու բնածին ձգտման հետ: Որպես այցելուի դիմադրության առաջացման պատճառ, նշվում է համապատասխան պայմանների բացակայությունը [1, 15]: Մասնավորապես, Կ. Ռոջերսը կարևորում էր թերապիայի արդյունավետության երեք պայմաններ (էմպատիկ հասկացում, հարգանք և անկեղծություն), որոնց ապահովման դեպքում բա-

ցառվում էր հետագա փոփոխությունների բացակայությունը [11]:

Կոգնիտիվ թերապիայում այցելուի մոտիվացված լինելը դիտարկվում է հոգեթերապևտի հետ համագործակցության և համաձայնության գործընթացում: Ա. Բեկը, այցելուի կողմից քիչ ադապտիվ կոգնիցիաների բացահայտման և հետագոտման գործում ևս կարևորում էր թերապևտիկ պայմանների դրական ազդեցությունը [2]: Չնայած կոգնիտիվ թերապիայում կիրառվող մեթոդների դիրեկտիվ բնույթին՝ թերապևտի դիրեկտիվ ոճը չի խրախուսվում դիմադրող այցելուների հետ աշխատանքում: Որպես թերապիայի արդյունավետությանը նպաստող գործոն, նշվում է այցելուի ինքնուրույնությունը, նրա՝ հոգեթերապևտիկ գործընթացի և նպատակի հետ նույնականանալը, ինչն էլ, իր հերթին, ապահովում է բուժման մոտիվացիան [2, 47-52]:

Ժամանակակից հետազոտողները այցելուի մոտիվացիան դիտարկում են որպես դինամիկ կոնցեպցիա: Մասնավորապես, տրանստեսական մոդելի շրջանակում (Ջ. Օ. Պրոհասկա, Դիքլեմենթ, Նորքոուս) տրվում է վարքային փոփոխության պատրաստակամության և մոտիվացիայի փուլային կոնտինուումի ինտեգրատիվ մոդել (The Stages of Change Model), որտեղ այցելուի մոտիվացիան ենթարկվում է որոշակի փուլայնության՝ տարբեր դրսևորումներով [7, 15]: Այցելուի մոտիվացիայի դինամիկ բնութագրերի մասին խոսվում է նաև Ռ. Ռայանի և Է. Դեսիի կողմից տրված ինքնադետերմինացիայի տեսության (Self-determination theory) մեջ, որտեղ մոտիվացիան կարող է թերապիայի ընթացքում մի տեսակից մյուսին անցնել, կախված իրավիճակային ներգործությունից՝ ապահովելով ինքնադետերմինացվածության կամ մոտիվացիայի կոնտինուում [13]:

Այցելուի մոտիվացիոն խնդիրների մեկնաբանության մեջ ևս տեսություններն ունեն նմանություններ. տրանստեսական մոդելի մեջ, որպես մոտիվացիոն խնդիր, նշվում է վարքային փոփոխությունների և մոտիվացիայի առաջին երեք (նախնական մտորում, մտորում, նախապատրաստում) և վերջին երկու (գործողություն և պահ-

պանում) փուլերի միջև հնարավոր խզումը [15]: Թերևս, այս փուլերի անցման ժամանակ էլ ի հայտ են գալիս մոտիվացիոն խնդիրները: Ինքնադետերմինացիայի տեսության մեջ ևս մոտիվացիոն խնդիրներն արտահայտվում են որոշակի մակարդակներում (մոտիվացիայի՝ արտաքին (external), ներքնայնացված կարգավորման (introjected regulation) և ամոտիվացիայի (amotivation) տեսակներում)՝ պայմանավորված վարքի կարգավորման արտաքին վերահսկողությամբ, տազնապի, մեղքի զգացմամբ, ցածր ինքնագնահատականից բխող հույզերի կողմից ճնշմամբ, սեփական գործողության ու արդյունքի միջև կապի խզվածությամբ, ինքնավերահսկողության պակասով, անօգնականության զգացմամբ, սեփական վարքի պատճառականության ոչ հստակ գիտակցմամբ, իրական նպատակի բացակայությամբ և թերապիայի անօգտակարության մեջ համոզվածությամբ [13, 14]:

Մինչբուժական փուլում այցելուի մոտ խնդրի լուծման ներքին մոտիվացիայի ձևավորման նպատակով Մ. Միլլերի և Ս. Ռոլլնիկի կողմից առաջարկվել է մոտիվացիոն ինտերվյուի մեթոդը (MI), որտեղ առաջնայնությունը տրվում է թերապևտի ուղեկցմամբ այցելուի ամբիվալենտության զգացման հաղթահարմանը [10]:

Հիմնախնդրով զբաղվող ռուս հետազոտողները ևս կարևորում են մոտիվացիայի դինամիկ կողմը՝ ներքին մոտիվացիայի ձևավորման գործընթացը [6, 4]: Վ. Մ. Յալտոնսկին, առանձնացնելով բուժման մոտիվացիայի երեք մակարդակներ (բացասական (I), ամբիվալենտ, անկայուն (II) և դրական (III)), որպես բուժման ընթացքը կանխատեսող չափորոշիչ, նշում է մոտիվացիայի կառուցվածքը՝ առանձնացնելով արժեքա-իմաստային, կոգնիտիվ, հուզական և վարքային բաղադրիչները [6]: Ըստ հեղինակի, մոտիվացիոն խնդիրները կարող են ի հայտ գալ յուրաքանչյուր բաղադրիչում, որոնք տարբեր մակարդակներում դրսևորվում են բովանդակային տարբերություններով՝ կապված խնդրի մեթոման, ամբիվալենտության զգացման, ներանձնային կոնֆլիտների, բուժման իմաստի, սպասելիքների բացակայության և այլնի հետ [6]: Գ. Յու. Մարտյանովան այցելուի մոտի-

վացիայի դինամիկ կողմը նկարագրում է որպես հեռանկարային մոտիվացիայի ձևավորման գործընթաց: Հեղինակը նշում է այցելուի՝ թերապիայի դիմելու և հետագա բուժումը շարունակելու մոտիվացիաների տարբերությունների մասին՝ պայմանավորելով թերապիայի դիմելը մոտիվացիայի բովանդակությամբ և ինտենսիվությամբ, իսկ հեռանկարը հանդես է գալիս որպես բուժման ընթացքում անձնային աճ գրանցելուն ուղղված ինքնամոտիվացված վիճակ [4]:

Այցելուի մոտիվացիայի վերաբերյալ ուսումնասիրություններում առավելապես կարևորվում են ներքին մոտիվացիայի և թերապիայի արդյունավետության կապը, դրանում այցելուի ինքնավարության և թերապևտիկ գործընթացին մասնակցության ազատ ընտրությունը [7, 10, 11, 12, 14], ինչպես նաև այցելուի մոտիվացիայի վրա ազդող երկու տիպի (անձնային և համատեքստային) գործոնները [3, 4, 16, 17]: Այսպես, Ե. Ա. Կոլտոլիշիկովան, անդրադառնալով մոտիվացիայի վրա ազդող գործոնների վերաբերյալ տարբեր հեղինակների մեկնաբանություններին, նշում է այցելուի հուզական լարվածության (դիսթրես), հոգեթերապիայի մասին տեղեկացվածության աստիճանի, թերապևտիկ սպասումների, խանգարման ինտենսիվության, ձևի և դեֆենսիվության, ինչպես նաև հոգեթերապևտիկ հարաբերությունների բնույթի, հոգեթերապևտի սպասումների, դիրքորոշումների և անձնային որակների մասին [3]:

«Դժվար» այցելուների հետ տարվող հետազոտությունների արդյունքում Է. Դաուդը և Դ. Սանդերսը այցելուի մոտիվացիայում կարևորում են խնդրի՝ ես-կոնցեպցիայի ինտեգրատիվ մաս լինելու (անգլ.՝ego-syntonic) կամ չլինելու (անգլ.՝ego-dystonic) հետ կապված դիսթրեսը [8]: Հետազոտողները էգո-սինթոնիկ և էգո-դիսթոնիկ խնդիրները ներկայացնում են այցելուի ռեակտիվության մակարդակի հետ կապի մեջ: Մոտիվացիոն խնդիրներն առավելապես դիտարկվում են էգո-սինթոնիկ և բարձր կամ չափազանց բարձր ռեակտիվության կապերում՝ նշելով դրանցում խնդիրները «Ես»-կերպարից առանձնացնելու անհրաժեշտության մասին [8]: Փաստորեն,

մոտիվացիայի դինամիկան տվյալ հետազոտության մեջ դրսևորվում է խնդրի էգո-սինթոնիկ տեսակից էգո-դիսթոնիկի անցման գործընթացում:

Դ. Թողդը և Ֆ. Դինը, ուսումնասիրելով այցելուների՝ թերապիան դադարեցնելու պատճառները, Պեկարիկի կողմից տրված երեք խումբ պատճառներին (խնդրի բարելավում, բուժման հետ կապված դժգոհություն, արտաքին խոչընդոտներ) ավելացնում են այցելուի հուզական և վարքային կողմերը՝ նշելով դրանց հիմքում ընկած դիմադրության և մոտիվացիայի պակասի մասին [16]: Ս. Լ. Բրոդսկին ևս որպես հոգեթերապիայի խոչընդոտ նշում է մոտիվացիայի պակասը՝ կապված խնդրի ձևակերպման, բացասական սպասելիքների, թերապևտի կողմից վերահսկողության, այցելուի ռիզիկոյան, ռեակտիվության, խնդիրների հաղթահարման ոճի (coping style) ոչ ճկունության, ինքնագնահատականին ուղղված սպառնալիքի, կարգավիճակի փոփոխության, միջանձնային խնդիրների, խարանավորման, ամոթի, մեղքի զգացման, թերապևտի անձի հանդեպ ունեցած վախի և այլնի հետ [17]: Կ. Բոհարթը այցելուի մոտիվացիայի հարցում կարևորում է այցի պատճառը (ներքին ընտրություն, արտաքին ճնշում), այցելուի տեսակետը խնդրի վերաբերյալ, պիտակավորման հետ կապված անհանգստությունները և իր համար օգտակար բուժման տեսակի մասին պատկերացումը [7]:

Այսպիսով, կարող ենք ասել, որ հոգեթերապիայի արդյունավետության մեջ այցելուի մոտիվացիայի խնդիրները պայմանավորված են մոտիվացիայի տարբեր մակարդակների բովանդակությունից բխող՝աֆեկտիվ և կոգնիտիվ ոլորտներին առնչվող երկու խումբ խնդիրների հետ: Հոգեթերապիայում մոտիվացիան դիտարկվում է որպես դինամիկ երևույթ, որն ապահովվում է այդ երկու խումբ խնդիրների լուծման փուլայնությամբ, մասնավորապես՝ փոփոխությունների նկատմամբ մոտիվացիայի արտաքին տեսակից ներքինին անցման գործընթացի հաջողությամբ:

CLIENT MOTIVATION PROBLEMS IN THE EFFECTIVENESS OF PSYCHOTHERAPY

GRIGORYAN N. G.

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

The article presents problems related to different levels of client's motivation, as well as their impact on the effectiveness of psychotherapy. Besides, characteristics of motivation dynamics, which are based on the stages of solutions to the client's motivation problems, are presented.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Александров А. А., Интегративная психотерапия. — СПб.: Питер, 2009. — 352 с.
2. Бек А., Фримен А., Когнитивная психотерапия расстройств личности. Питер 2019. 448 с.
3. Колотильщикова Е. А., Психотерапия невротических расстройств: психологические факторы и механизмы Вестник психиатрии и психологии Чувашии. 2015. Т. 11, № 2.
4. Мартянова Г. Ю., Особенности регуляторной активности субъекта в трудной жизненной ситуации // Актуальные проблемы психологического знания. 2013. № 3 (28). С. 27–39.
5. Фрейд З., Введение в психоанализ: Лекции / Авторы очерка о Фрейде Ф.В. Бассин и М. Г. Ярошевский. - М., Наука, 1989. 456 с. Серия "Классики науки".
6. Ялтонский В. М., Теоретическая модель мотивации к лечению зависимости от психоактивных веществ // Вопросы наркологии. - 2009. - №6. - С. 68-76.
7. Bohart A. C. and Wade A. G., The Client in psychotherapy: Lambert с 07.tex V1 - 10/03/2012.

8. Dowd E. T., Sanders D., Resistance, Reactance, and the Difficult Client Canadian Journal of Counselling/Revue canadienne de counseling/1994.
9. J. J. van Egmond, The Multiple Meanings of Secondary Gain; The American Journal of Psychoanalysis, Vol. 63, No. 2, June 2003.
10. Miller W. R., & Rollnick S., Motivational interviewing. New York: Guilford Press,2002.
11. Paterson C. H., Involuntary Clients: A Person-centered view In Understanding Psychotherapy: Fifty Years of Client-Centered Theory and Practise. PCCS.1990. 316-320
12. Polaschek D.L.L, (2009). Rehabilitating high-risk offenders: Pre-treatment motivation, therapeutic responsivity, and change. Journal of the New Zealand College of Clinical Psychologists, 19(3), 39-48.
13. Ryan R. M. & Deci E. L., (2000). The «what» and «why» of goal pursuits: Human needs and the self-determination of behavior. Psychological Inquiry, 11, 227–268.
14. Ryan R. M. and Deci E. L., A Self-Determination Theory Approach to Psychotherapy: The Motivational Basis for Effective Change Copyright 2008 by the Canadian Psychological Association 2008, Vol. 49, No. 3, 186–193
15. Ryan R. M., Lynch M. F., Vansteenkiste M. and Deci E. L., Motivation and Autonomy in Counseling, Psychotherapy, and Behavior Change: A Look at Theory and Practice The Counseling Psychologist XX(X) 1–68 © 2010.
16. Todd D.M., Deane F.P., Bragdon R.A., Client and Therapist Reasons for Termination; A Conceptualization and Preliminary Validation Journal of clinical psychology, Vol. 59(1), 133-147 (2003)
17. Willshire D. & Brodsky S.L., Toward a taxonomy of unwillingness: Initial steps in engaging the unwilling client Department of Psychology, University of Alabama, U.S.A. Published online: 01.09 2009.

**ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏԵՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՄԱՐՄԱՆ
ՓՈՒԼԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ և ԶՈՒԳԱԿՑՎՈՂ
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Գևորգյան Հ. Ա.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. դատապարտյալներ, անազատություն, հարմարում, ինքնամեղադրում, ինքնահարգանք, վերասոցիալակա-նացում:

Անազատության պայմաններում կալանավորված անձանց և դատապարտյալների հարմարման գործընթացը կարևոր և շատ բարդ շրջան է համարվում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հարմարման խաթարումը պատժի հետագա կրման ընթացքում կարող է հանգեցնել որոշակի դժվարությունների:

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարի 13. 07. 2016 թ. 279-Ն հրամանի 25-րդ կետի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու ժամանակ կալանավորված անձանց հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները կազմակերպվում են երկու փուլով՝ *նախնական և ընթացիկ*: Նախնական փուլը սկսվում է կալանավորված անձին՝ կալանավորվածներին պահելու վայր ընդունելու պահից և ավարտվում կարանտինային բաժանմունքից տեղափոխելով համապատասխան խուց [1]: Իսկ համաձայն **ՀՀ ԱՆ 03. 08. 2006 թ. 1543-Ն ՀՀ Կառավարության որոշման 10-րդ կետի, կալանավորված անձինք** մինչև յոթ օր ժամկետով տեղավորվում են կարանտինային բաժանմունքում, որի ընթացքում իրականացվում են հոգեբանական աշխատանքներ [2]: Մեր կողմից որպես առավել խոցելի խումբ (2011-2017թթ. ընթացքում ՀՀ ԱՆ «Գորիս» ՔԿ հիմնարկում որպես հոգեբանի՝ սեփական դիտարկումները) առանձնացվել են հատկապես կարանտինային բաժանմունքում

գտնվող, առաջին անգամ անազատության մեջ հայտնված անձինք: Ընդհանուր դիտարկումներից, վերլուծությունից այս խմբում ակնհայտորեն նկատվել են հետևյալ հոգեբանական խնդիրները՝ *գերբարձր լարվածություն, անորոշության զգացում, նյարդայնություն, ուժերի լարումով սեփական վարքը վերահսկելու միտում, վախ՝ հիմնականում այլ դատարարությանների հետ հանդիպումից, հանցավոր ենթամշակույթի հետ առեղծվելուց, որն էլ պարճառ է դառնում շփումների սահմանափակման համար*: Քանի որ հատկապես նորեկների համար ՔԿ հիմնարկն ընկալվում է ծայրահեղ պայմաններով և լի սթրեսային գործոններով, ապա հոգեբանական աշխատանքներն այս փուլում ներառում են՝ կալանավորված անձի հիմնարկ ընդունելուց անմիջապես հետո հոգեբանական աշխատանքներ՝ ուղղված սթրեսաձին հոգեվիճակների հաղթահարմանը, հրատապ խնդիրների լուծման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը, խցերում տեղաբաշխելու նպատակով հոգեբանական և այլ առանձնահատկություններով պայմանավորված համատեղելիությունը որոշելը և այլն: Այս առումով տեղին են Ա. Դ. Գլոտոչկինի և Վ. Ֆ. Պիրոժկովի դիտարկումները, որ տեղաբաշխման համար անհրաժեշտ է միաժամանակ հաշվի առնել անձի և՛ հոգեբանական, և՛ քրեաբանական համատեղելիությունը [4, էջ 315]:

Հոգեբանական տեսանկյունից նախնական հարմարման փուլը 1-3 ամիս է տևում, համարվում է ընդհանուր կողմնորոշման փուլ և մշտապես ուղեկցվում մի շարք սթրեսներով: Ազատագրկման պայմաններում գտնվող անձանց ֆիզիոլոգիական, սոցիալական և սոցիալ-հոգեբանական ադապտացիայի մեխանիզմները հասկանալու համար հայրենական և արտասահմանյան պենիտենցիար հոգեբանության մեջ լայն տարածում է գտել այսպես կոչված *քրեակադարողական սթրես* հասկացությունը, որ իրավական և քրեակատարողական հոգեբանության մեջ դեռ լիովին ուսումնասիրված չէ, հաճախ համարվում է հուզական լարվածության հոմանիշ՝ կապված մեկուսացման պայմանների հետ [5, էջ 107]: Այն սուբյեկտիվ ռեակցիա է,

մեկուսացման մեջ գտնվող անձի հոգեբանական անհանգստությունների համալիր՝ պայմանավորված քրեակատարողական միջավայրում առկա բացասական գործոններով: Որպես կանոն, այն բացասաբար է անդրադառնում ոչ միայն պատիժը կրող անձի առողջության վրա, այլև նպաստում է տարբեր ապակառուցողական գործողությունների դրսևորմանը (ինքնավնասումներ, ինքնասպանություններ, հակաիրավական վարք, կոնֆլիկտներ և այլն):

Ընթացիկ փուլը սկսվում է նախնական փուլի ավարտից հետո և ավարտվում՝ մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելով: Այս փուլում հոգեբանական աշխատանքները ներառում են անհատական ընդունելությունների կազմակերպում, խցերում անձանց միջև կոնֆլիկտային հարաբերությունների կանխարգելմանն ու կարգավորմանն ուղղված աշխատանքներ, առավել բարձր հոգեկան լարվածություն կամ ագրեսիվ վարքի դեպքում հատուկ աշխատանքների իրականացում և այլն: Այս ընթացքում դատապարտյալները ձեռք են բերում ազատագրված անձի համախտանիշ, ինչը նրանց դարձնում է միանման: Սովորաբար այս փուլը ենթադրում է հոգեբանական հարմարման երկրորդ շրջանը, որը սկսվում է 5-6 ամիս հետո և կոչվում կարգավորման, համահարթեցման, արժեքների վերաձևավորման, անհատականացման փուլ, երբ կարգավորվել են մյուս դատապարտյալների հետ հարաբերությունները, անձը լիովին ընդգրկվել է սոցիալական նոր միջավայրում, տվյալ սոցիումում ունի կայուն սոցիալական դեր, առաջացել են նոր հետաքրքրություններ, հաղթահարվել է *գոյության անհմաստության նկրողը*: Հարմարման գործընթացում մեծ նշանակություն ունի կյանքի իմաստի առկայությունը: Վ.Ֆրանկը համարում էր, որ ապագայի վրա կենտրոնացումը հոգևոր աջակցություն է, որը շատ անհրաժեշտ է բանտարկյալների համար, քանի որ միայն հոգևոր աջակցությունը կարող է պաշտպանել մարդուն սոցիալական միջավայրի ուժերի ապակառուցողական գործողություններից [6, էջ 136-144]: Ըստ Վ. Ֆրանկի, դատապարտյալների հակազդումները բանտում կարելի է բաժանել երեք փուլերի՝

շոկային փուլ, ճամբարում (կալանավայրում) երկար մնալու հետևանքով բնավորության փոփոխության փուլ և պարտիզ ազատման փուլ: Նման դասակարգման հանդիպում ենք նաև Ի.Կոենի մոտ: Ըստ հեղինակի, ճամբարում գտնվելու ընթացքում անձը ստիպված է անցնել տարբեր փուլերով՝ թույլ հակազդման փուլ, հարմարման փուլ և անտարբերություն [6, էջ 131-132]: Դասակարգման այս մոդելները մեր համակարգում չեն գործում, քանի որ մեզ մոտ շեշտը դրված է դատապարտյալների ուղղման և վերասոցիալականացման գործընթացի վրա: Հարմարման խաթարումն այս փուլում հանգեցնում է՝ կասկածամտության, մերժողականության, վիրավորանքի, մեկուսացման, միկրոմիջավայրի կողմից մերժման, որը երբեմն ուղեկցվում է խմբից խումբ տեղափոխումով:

Երրորդ փուլը դատապարտյալի հարմարման ավարտի փուլն է, կամ պատժից ազատման փուլը, որի ընթացքում մշակվում են ապագայի հետ կապված ծրագրեր, ձեռնարկվում քայլեր՝ խաթարված հարաբերությունների, կապերի վերականգնման համար, իրենց առջև դնում են նոր նպատակներ, փորձում փնտրել դրանց հասնելու միջոցներ: Այստեղ նաև առաջանում է վախ՝ ազատվելուց հետո նոր միջավայրին հարմարվել չկարողանալու, ընտանիքի կողմից չնդունվելու, պլանների չիրականանալու:

Հարկ է նշել, որ դատապարտված անձինք հարմարվում են սոցիալական մեկուսացման պայմաններին ադեկվատ կամ ոչ ադեկվատ ձևով: Դեզադապտիվ վարքին են դասվում Ա. Դ. Գլոտոչկինի և Վ. Ֆ. Պիրոժկովի ներկայացրած ընկճված-տագնապային, ժխտողական-ընկճված և ժխտողական-հիստերիկ հակազդումները [4, էջ 311-312]:

Լ. Կ. Սարգսյանը, ուսումնասիրելով վերոնշյալ հիմնախնդիրը, հանգում է հետևյալ եզրակացության. «ՔԿՀ-ում դատապարտյալների առաջնային հարմարումն ընթանում է երկու՝ մեկը մյուսից տարբեր փուլերով. առաջին փուլը՝ նախնական թվացյալ հարմարման փուլն է, որն արտահայտվելով սեփական անձի նկատմամբ ինքնամեղադր-

մամբ, ինքնաքննադատությամբ, ներքին կոնֆլիկտայնությամբ, ընդգրկում է ազատագրկման վայրում դատապարտյալների գտնվելու առաջին ամիսը, և երկրորդը՝ բուն հարմարման շրջանը, որն արտահայտվելով սեփական անձի ինքնարժևորմամբ, ինքնատիրապետմամբ, ինքնաընդունմամբ, ինքնավստահությամբ, ինքնագնահատականի բարձրացմամբ, ընդգրկում է ազատագրկման վայրում դատապարտյալների գտնվելու 4-6 ամիսները: Առաջին անգամ ՔԿ հիմնարկում հայտնված դատապարտվածների ինքնավերաբերմունքի մեջ տեղի են ունենում բովանդակային փոփոխություններ, ինչի արդյունքում դատապարտյալները ժամանակի ընթացքում սկսում են հարմարվել ՔԿ հիմնարկին, մասնավորապես՝ դատապարտյալների խմբին, քրեական ենթամշակույթին և առհասարակ ազատագրկման վայրի պայմաններին ու պահանջներին» [3, էջ 19-20]:

Դիտարկումների ընթացքում պարզվել է, որ անազատության մեջ հայտնված անձինք ունեն տարբեր աստիճանի հարմարվողական ունակություններ, որոնք կախված են անհատի հարմարվողական կարողությունից: Հարմարվողական ներուժի ներքին հատկանիշները ներառում են անհատի ունակությունը՝ գիտակցաբար դիմելու իր ներքին ռեսուրսներին և անձնական հատկանիշներին՝ հաղթահարելու առաջացած ճգնաժամը: Ընդ որում յուրաքանչյուր դապտացիայի համար հարմարման մի փուլից անցումը մյուսին ժամանակի առումով խիստ անհատական է: Պետք է նշել, որ հարմարումն ամենադժվարն ընթանում է անձի և նրա առողջության, սեռական անձեռնամխելիության դեմ ուղղված հանցագործություններ կատարած, ինչպես նաև մտավոր և ֆիզիկական առողջական խնդիրներ ունեցող դատապարտյալների մոտ:

Դատապարտյալների հետ հոգեբանական աշխատանքը ՔԿ հիմնարկներում կազմակերպվում է երեք հիմնական ուղղություններով՝ հոգեախտորոշիչ, խորհրդատվական, կանխարգելիչ և վերականգնողական: Քանի որ անազատության մեջ հայտնված անձանց վարքագիծը մեկուսացման պայմաններին համարժեք կամ ոչ հա-

մարժեք կերպ է դրսևորվում, ուստի այս առումով ՔԿ հիմնարկներում հոգեբանի խնդիրը պետք է լինի վերոնշյալ աշխատանքների կենտրոնացումը դատապարտյալների հարմարման գործընթացին, ինչպես նաև հարմարման դժվարությունների հաղթահարմանը:

THE CLASSIFICATION OF ADAPTATION STAGES AND THE CONCOMITANT PROBLEMS OF DETAINEES

GEVORGYAN H. A.

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

In the article discussed the stages of adaptation of detainees and convicts serving sentences in penitentiary institutions of the RA Ministry of Justice. Objective and subjective factors hindering the smooth course of the adaptation is also under the focus of this article. Adaptation classification forms, as well as psychological observations and analyses conducted by the author during the number of working years, are also given in the article. The process of adaptation of persons and convicts arrested in conditions of deprivation of liberty is considered to be an important and at the same time difficult period. Especially the persons who for the first time appeared in quarantine office are allocated. From the analysis of the performed works, general observations in this group the following psychological problems were revealed excessive tension a sense of uncertainty, nervousness, tendency to control their behavior with voltage strength. Psychological work at this stage includes penitentiary stress relief efforts. From the point of view of psychology, the stage of pre-adaptation lasts 1-3 months and is considered a stage of general orientation. The next stage is the period of psychological

adaptation, which begins in 5-6 months and is called the stage of regulation, alignment, reorientation of values, personalization. Violation of adaptation at this stage leads to doubts, denials, insult, insulation. The third stage is the stage of completion of the convict's adaptation or the stage of release from punishment. There is also fear after failure to adapt to the new environment, family and private, stipulated planned plans. The problem of the psychologist should be aimed at the adaptation of convicts.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ արդարադատության նախարարի 13.07.2016 թ. 279-Ն հրամանը «Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աջխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին». www.arlis.am
2. ՀՀ ԱՆ կալանավորված անձանց պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 03.08.2006թ. 1543-Ն որոշում www.arlis.am
3. Սարգսյան Լ. Կ. Ինքնավերաբերմունքի դերը դատապարտյալների հարմարման գործընթացում: Ատենախոսության սեղմագիր: 2015. – 26 էջ:
4. Глоточкин А.Д., Пирожков В.Ф., Исправительно-трудовая психология. Рязань. 1985. 309с.
5. Мельникова Д. В., Пенитенциарный стресс и особенности его проявления у осужденных, подозреваемых, обвиняемых / Д. В. Мельникова, М. Г. Дебольский // Психология и право. - 2015. - № 2. - С. 105-116.
6. Франкл В., Человек в поисках смысла. М. Прогресс. 1990. – 368 с.
https://studref.com/417377/pravo/harakteristika_adaptatsii_osuzhdennyh_usloviyam_ispravitelnogo_uchrezhdeniya - annot_2

**ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱՅՈՒՄ ԱՌԿԱ ՃԳՆԱԺԱՄԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ
ԵՎ ԱՅՆ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ
(ՏՐԱՆՍՑԵՆԴԵՆՏԱԼ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ)**

Եսայան Գ. Ս.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. *հոգեթերապիա, ընկալման տեսություններ, պրոցեսուալ անիզոպրոպոություն, համաներկայացվածություն, անիզոպրոպ հարաբերություններ, տրանսցենդենտալ հոգեբանություն:*

Թերևս ճիշտ կլինի աշխատանքը սկսել հետևյալ հարցերից. արդյո՞ք արդի հոգեթերապևտիկ ոլորտում գոյություն ունի ճգնաժամ, և եթե այո, ապա ինչով է այն պայմանավորված: Առաջին հարցին պետք է պատասխանենք դրական: Դա է վկայում այն փաստը, որ արդեն ավելի քան 100 տարի է, ինչ հոգեթերապիայում հնարավոր չի լինում առաջ քաշել հոգեբանական խնդիրների պատճառների ծագման համընդհանուր ընդունելի հիմնարար սկզբունքներ և օրինաչափություններ՝ այն պարագայում, երբ ներկա պահին գոյություն ունեն մոտ 600 հոգեթերապիայի ձևեր և մեթոդներ [2, էջ 5], իսկ թե ինչն է դրա պատճառը, մենք կփորձենք պատասխանել ներքևում:

Հասկանալով մեր առջև դրված խնդրի պատասխանատվության չափը և միաժամանակ հաշվի առնելով աշխատանքին ներկայացվող ծավալային սահմանափակումները, այստեղ գլխավորապես կանդորդառանանք այն ժամանակահատվածին, երբ հոգեթերապիան գտնվում էր իր ձևավորման նախնական փուլում: Այսպիսի ընտրությունը թույլ կտա պատմական տեսանկյունից դիտարկել ճգնաժամի առաջացման պատճառները և վեր հանել դրա ստեղծման սկզբնաղբյուրները:

Հոգեթերապիայի՝ որպես հոգեբանության առանձին գիտական ոլորտի մասին, մենք կարող ենք տեղեկանալ, բնականաբար, 1879 թ.-

ից սկսած, երբ հոգեբանությունն առանձնացվեց և ընդունվեց որպես գիտական ճյուղ: Եթե առաջինը (հոգեբանության առանձնացումը) պայմանավորված է Վ. Վունդտի անվան հետ, ապա գիտական հոգեթերապիայի, իբրև ամբողջական հայեցակարգի ձևավորումը կապված է Ջ. Ֆրեյդի հետ [2, էջ 12], [1, էջ 17] (այստեղ, ինչպես նաև առաջինի դեպքում, կարող են լինել տարակարծություններ):

Հոգեթերապիայի պատմության զարգացման գործում, հոգեվերլուծության դերը ամենաազդեցիկն էր, քանի որ, ինչպես նշում է հոգեթերապիայի պատմության գիտականերից մեկը՝ Ի. Բ. Գրինշպունը, «...գրեթե ամբողջ ժամանակակից հոգեթերապիայի պատմությունը՝ Ջ. Ֆրեյդի հետ դիալոգներն են» [3, էջ 177]: Այդուհանդերձ, տեսնենք, թե ինչ նախադրյալներ են ազդել հոգեվերլուծության ձևավորման և զարգացման վրա: Ջ. Ֆրեյդը, լինելով բժիշկ և ունենալով հիվանդների հետ աշխատելու հարուստ փորձ, իր տեսությունը կառուցեց՝ ելնելով այդ փորձից: Հետազոտելով հոգեբանական խնդիրներ (մասնավորապես՝ հիստերիա) ունեցող մարդկանց, նա ցանկանում էր հասկանալ խնդիրների ծագման պատճառները. ինչ պայմաններում են առաջացել և ինչպես հաղթահարել: Իր առջև դրված խնդիրները լուծելը Ջ. Ֆրեյդը սկսեց «ձեռքի տակ եղածը» ուսումնասիրելուց, իսկ դա հիվանդների հոգեկան խնդիրներն էին՝ ախտանիշների և համախտանիշների տեսքով: Սակայն պետք է նշենք, որ հետագայում տարբեր նոր հոգեթերապևտիկ ուղղությունների առաջացման պատճառները, մեր կարծիքով, գլխավորապես թաքնված էին հենց հոգեվերլուծության մեթոդաբանության մեջ. լինելով սահմանափակ՝ այն թույլ չէր տալիս բացահայտել այն հիմնարար սկզբունքները և օրինաչափությունները, որոնք կբավարարեին առաջ եկած բոլոր հարցերին: Այդուհանդերձ, պետք է փաստենք, որ Ջ. Ֆրեյդից հետո այդ մոտեցումը չհաղթահարվեց և կրկին դրվեց նորաստեղծ հոգեթերապևտիկ ուղղությունների հիմքում: Իսկ ի՞նչ սահմանափակման մասին է խոսքը և ինչպե՞ս այն հաղթահարել, հակիրճ ներկայացնենք ստորև:

Ինչպես նշեցինք, հոգեվերլուծության հիմնադիրը, հոգեբանա-

կան խնդիրների ծագման պատճառները բացահայտելու համար, որպես ելակետային հիմքեր էր վերցնում ինքնին խնդիրները (ախտանիշների և համախտանիշների տեսքով): Այսպիսի մոտեցումը թույլ չէր տալիս բացահայտել այն հիմնարար սկզբունքներն ու օրինաչափությունները, որոնք ընկած են հոգեկան նոր ֆենոմենների (այդ թվում նաև հոգեբանական խնդիրների) առաջացման հիմքում, քանի որ արդյունքում (իսկ այս դեպքում իբրև արդյունք հանդես էին գալիս հոգեբանական խնդիրները) գործընթացն արդեն ավարտված է:

Առաջին հայացքից ստեղծվում է պարադոքսալ և անլուծելի մի իրավիճակ. հոգեբանական խնդիրների ստեղծման պատճառները փնտրելիս մենք չենք կարող իբրև ելակետային տվյալներ վերցնել այդ խնդիրները, իսկ ինչպե՞ս վարվել այդ ժամանակ, չէ՞ որ մեր ձեռքի տակ եղածը հենց այդ խնդիրներն են: Այսպիսի իրավիճակ էր ստեղծվել նաև հոգեբանական մեկ այլ ոլորտում՝ ընկալման հոգեբանությունում, իսկ լուծումը տրվեց հայազգի հոգեբան Ա. Ի. Միրաքյանի կողմից, ինչը մեր կարծիքով, կարող է ընդունելի լինել նաև հոգեթերապիայի համար: Ա. Ի. Միրաքյանը, հետազոտելով ընկալման վերաբերյալ մինչ իրեն եղած մոտեցումները (իսկ դրանք իրենց բազմազանությամբ չէին զիջում հոգեթերապևտիկ տեսություններին. ընկալման ստրուկտուրայիստական տեսություն, գեշտալտ տեսություն, Ջ. Գիբսոնի էկոլոգիական տեսություն, ընկալման կոնստրուկտիվիստական տեսություն և այլն), բացահայտեց, որ բոլոր այդ տեսություններում առկա է արգասիքային մոտեցում. Շնկալման գործընթացը հասկանալու համար, վերլուծում էին դրա արդյունքում արդեն մեզ ներկայացված հոգեկան ֆենոմենները (գույն, համ, հոտ, ուղիղ և այլն): Այս ճանապարհը չէր կարող արդյունավետ լինել, և հնարավոր չէր այդ կերպ բացահայտել ընկալման գործընթացի հիմքում ընկած հիմնարար սկզբունքները և օրինաչափությունները, քանի որ արդյունքում (հոգեկան ֆենոմենում) գործընթացն արդեն ավարտված էր [4]:

Այդուհանդերձ, Ա. Ի. Միրաքյանին անհրաժեշտ էր ընկալման գործընթացի հիմնարար սկզբունքները և օրինաչափությունները

փնտրել իր իսկ (ընկալման) գործընթացի արդյունքներից այն կողմ: Այս պարադոքսալ իրավիճակը, ինչն առաջին հայացքից թվում էր կրկին անլուծելի, նա լուծեց հետևյալ կերպ. ընդունելով, որ հոգեկանն առաջացել է մատերիայի (բնության) զարգացման ինչ-որ փուլում [5, էջ 35]՝ առաջարկեց ընկալման գործընթացն ուսումնասիրելիս «իբրև ելակետային տվյալներ վերցնել այնպիսիք (սկզբունքներ, օրինաչափություններ, հարաբերություններ, հասկացություններ և այլն), որոնք ինդիֆերենտ են, անկախ են հոգեկան արտացոլման իրականությունից և կապված են հոգեկանի ծագման հնարավորությունների բնական օրինաչափությունների հետ» [5, էջ 35]: Վերոնշյալը հեղինակին թույլ է տալիս հաղթահարել արգասիքային մոտեցումը և հնարավորություն ընձեռում բացահայտել ընկալման գործընթացի հիմքում ընկած հոգեկան ֆենոմեններ ստեղծող հիմնարար սկզբունքները և օրինաչափությունները: Նման սկզբունքներից Ա. Ի. Միրաքյանն առանձնացրեց կառուցվածքա-պրոցեսուալ անիզոտրոպության, համայնակայացվածության, անիզոտրոպ հարաբերությունների ստեղծման և այլ սկզբունքները [5, էջ 7-8]: Անցնելով առաջ՝ ասենք, որ Ա.Ի. Միրաքյանի կողմից ընկալման գործընթացում անիզոտրոպ հարաբերությունների ստեղծման սկզբունքն ընդունվեց իբրև հոգեկան տարբեր ֆենոմենները ստեղծելու հիմնարար սկզբունքներից մեկը, ինչն ապացուցվեց բազմաթիվ փորձերի միջոցով [5]: Այս կերպ գիտական հանրությանը ներկայացվեց մեկ այլ՝ ոչ արգասիքային մոտեցում, իսկ հայեցակարգը կոչվեց տրանսցենդենտալ հոգեբանություն:

Կրկին վերադառնալով հոգեթերապիային՝ փորձենք հասկանալ, թե ինչքանով կարող են կիրառելի լինել տրանսցենդենտալ հոգեբանության բացահայտումները այս ոլորտում. հնարավոր է այստեղ ևս օգտագործել ոչ արգասիքային մոտեցումը և հոգեբանական խնդիրների հիմքում ընկած գործընթացները մեկնաբանելիս, որպես ելակետային տվյալներ վերցնել բնության հիմնարար սկզբունքները և օրինաչափությունները: Մեր համոզմամբ հնարավոր է, քանի որ հոգեբանական խնդիրներն ևս հոգեկան որոշակի գործընթացների արդյուն-

քում ստեղծված հոգեկան ֆենոմեններ են, որի ժամանակ պետք է գործեն այն նույն հիմնարար սկզբունքները, որոնք ընկած են ընդհանրապես հոգեկանի ստեղծող գործընթացների հիմքում, մասնավորապես՝ անիզոտրոպ հարաբերությունների ստեղծումը: Առաջ քաշված վարկածը ստուգելու համար կատարենք մտային փոքրիկ փորձ:

Ընկալման գործընթացում անիզոտրոպ հարաբերությունների ստեղծման սկզբունքն արտացոլված էր (իր հետքերն էր թողել) ամենատարբեր դրսևորումներում. տեսողական ընկալման ժամանակ՝ երկու աչք, լսողականի դեպքում՝ երկու ականջ, շոշափելիքի դեպքում՝ երկու ձեռք և այլն, որոնք միմյանց անիզոտրոպ էին տարածության մեջ՝ զբաղեցրած իրենց դիրքով: Եթե հոգեթերապիայում անիզոտրոպ հարաբերությունների ստեղծման սկզբունքը կրկին հիմնարար է, ապա այս դեպքում ևս, պետք է հոգեկանի տարբեր մակարդակներում հանդիպենք դրա դրսևորումներին: Այսպես. երբ 2. Ֆրեյդը փորձում էր բացատրել հոգեկանի կառուցվածքը և դրանով մեկնաբանել հոգեբանական կոնֆլիկտների առաջացումը, դիմում էր «Իդ-ի» և «Գեր-Ես-ի» միջև ստեղծված հարաբերություններին, որոնք իրենց բովանդակությամբ, հակումներով և դրսևորումներով հակադիր էին (անիզոտրոպ) [6, էջ 291-352]: Ա. Ադլերը, հրաժարվելով 2. Ֆրեյդի մոտեցումներից, ներկայացրեց իր անհատական հայեցակարգը, որտեղ գլխավոր դերակատարություն ունեին կրկին հակադիր (անիզոտրոպ) կողմերը՝ թերաթեքության և գերազանցության բարդոյթները [1, էջ 73-97]: Կ. Յունզը փորձում էր հոգեբանական խնդիրների ծագումը մեկնաբանել մարդու գոյության երկու ուղիների՝ անգիտակցականի և գիտակցականի միջև ներդաշնակության բացակայության միջոցով [1, էջ 101-130], որոնք նույնպես միմյանց նկատմամբ անիզոտրոպ են: Այս շարքը կարելի է շարունակել, ինչին կանդրադառնանք մեր հետագա աշխատանքներում:

Այսպիսով, վերոշարադրյալը ամփոփելով, կարող ենք նշել. 2. Ֆրեյդն ականայից (երբևիցե այդ մասին չնշելով), փորձում էր բացատրել հոգեբանական խնդիրների ծագումն անիզոտրոպ հարաբերությ-

յունների օգնությամբ, սակայն դա անում էր միջնորդավորված կերպով՝ նշելով անիզոտրոպ հարաբերությունների դերակատարներին՝ դրանց տալով անվանումներ («Իդ», «Գեր-Ես»), տեղայնացնելով (անգիտակցականում) և տալով բովանդակություն (Իդ-ը ներառում է մարդու հիմնական բնագղները, ցանկությունները, իմպուլսները և գործում է հաճույքի սկզբունքով: Գեր-Ես-ը ներառում է ինտրոյեկտված արժեքները, մեզ ներկայացվող պահանջներն ու արգելքները, դա մեր խիղճն է, որը գործում է բարոյական սկզբունքի համաձայն): Այստեղ շատ կարևոր է այն պահի գիտակցումը, որ անիզոտրոպ հարաբերությունները միջնորդավորված կերպով ներկայացնելու պատճառները թաքնված էին արգասիքային մոտեցման մեջ: Զ. Ֆրեյդը, իսկ հետո նաև իրեն հաջորդող հոգեբանները, խնդրի լուծումները փնտրելիս սկսում էին (ելակետ էին վերցնում, իրենց մեկնաբանությունները կառուցում էին) ոչ թե գործընթացային (պրոցեսուալ) կողմից, այլ այդ գործընթացի արդյունքում առաջացած հոգեբանական ֆենոմենների տեսանկյունից, իսկ հետո նոր մատնանշում էին գործընթացային կողմը: Այդուհանդերձ, այդ հետքերը դրսևորվելով հոգեկանի տարբեր մակարդակներում և գործընթացներում (այդ թվում նաև մարդկային հարաբերություններում), հոգեբանները դրանք ֆիքսում էին, տալիս էին դրանց տեղայնացում, բովանդակություն, անվանում, ինչի արդյունքում ստեղծվում էին հոգեբանական խնդիրները այլ տեսանկյունից մեկնաբանելու նախադրյալներ, որն էլ իր հերթին հիմք էր հանդիսանում նոր հոգեթերապևտիկ ուղղությունների ստեղծման համար:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է հոգեբանական խնդիրների առաջացման գործընթացները մեկնաբանելիս իբրև ելակետային տվյալներ վերցնել ոչ թե ինքնին խնդիրները, այլ բնության ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները, որն առաջարկում է տրանսցենդենտալ հոգեբանությունը: Այդ կերպ հնարավոր կլինի հաղթահարել արգասիքային մոտեցումը և բացահայտել հոգեբանական տարբեր խնդիրների հիմքում ընկած հիմնարար սկզբունքները, այլ ոչ թե այդ սկզբունքների դրսևորումների հետքերը:

DEFINITION OF EXISTING CRISIS IN PSYCHOTHERAPY AND POTENTIAL APPROACHES TO OVERCOME IT (IN CONTEXT OF METHODOLOGY OF TRANSCENDENT PSYCHOLOGY)

ESAYAN G. S.

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

In this work has been made an attempt to define existing crisis in psychotherapy and its causes. It has been made a short analysis of the history of creation of scientific psychotherapy, conditions of creation and implemented methodology, in order to present the definition of crisis well-reasoned.

The methodology of transcendental psychology, which offers non-product approach, points out as potential approach to overcome the crisis.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бурлачук Л. Ф., Грабская И. А., Кочарян А. С., Основы психотерапии. Учебн. пособие для студентов вузов. Ника-Центр; М.: Алетейа, 1999. 320 с.
2. Бурлачук Л. Ф., Жидко М. Е., Кочарян А. С., Психотерапия. Учебник для вузов: 2-е изд., СПб.: Питер, 2007. 480 с.
3. Гринщпун И. Б., История психотерапии. Лекция 1. введение в историю психотерапии. Консультативная психология и психотерапия, 2015, № 2 С. 175-208.
4. Миракян А. И., Психология пространственного восприятия. Ред. А. Налчаджян. Ер., изд. «Айастан», 1990. 206 с.
5. Принципы порождающего процесса восприятия (коллективная монография) /Под ред. А. И. Миракяна. М., 1992. 223 с.
6. Фрейд З., Психология бессознательного. Я и Оно. М.: «Фирма СТД», 2006. 448 с.

**ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՆՁԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՐԱ
ՀՈՒՋԱԿԱՆ ԱՅՐՄԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՊՐՈՔԼԵՄԸ**

Լաչինյան Լ. Լ., Սարգսյան Լ.Մ.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. *հուզական այրում, ախտանշաններ, մասնագիտական սթրես, մոտրիվացիայի նվազում, լարվածություն, հոգնածություն, ագրեսիա:*

Հայրենական և արտասահմանյան ժամանակակից հոգեբանության հիմնախնդիրներից է հուզական այրման համախտանիշի (burnout) ուսումնասիրությունը: Խնդրի ուսումնասիրությունը բավականին լայն է, քանի որ վերաբերում է տարբեր ոլորտների մասնագետների /մանկավարժական հոգեբանության, կառավարման և սոցիալական հոգեբանության, բժշկական հոգեբանության և այլն/:

Ժամանակակից մանկավարժը պարտավորված է լուծել այնպիսի խնդիրներ, որոնք լուրջ ջանքեր են պահանջում: Նա պետք է կարողանա յուրացնել ժամանակակից կրթական բարեփոխումները, մասնագիտական նորությունները, անընդհատ կատարելագործվի, իսկ այս ամենը կարող է անել միայն ֆիզիկապես և հոգեպես առողջ մանկավարժը: Մինչդեռ նախատեսվածից ավել աշխատանքը, ցածր աշխատավարձը, բնականաբար մանկավարժների մեջ առաջացնում են հուզական այրում:

Այսօր մանկավարժի մասնագիտական գործունեությունը հազեցած է սթրեսներով և լարվածությամբ: Դրա պատճառներից են կյանքի արագ ընթացքը, աշխատանքային անհաջողությունները, ֆինանսական դժվարությունները, անընդհատ չբավարարող ժամանակը և այլն: Այս ամենի արդյունքում կարող են առաջանալ և զարգանալ այնպիսի մասնագիտական սթրեսներ, որոնք չհաղթահարելը հան-

գեցնում է առավել բարդ հոգեկան վիճակների ձևավորմանը, ինչպիսին է հուզական այրումը կամ սպառումը: ՀԱՀ հիմնական ախտանիշներն են սպառվածությունը, հոգնածությունը, կյանքի մոտիվացիայի և ուժերի նվազումը, ֆիզիկական վատ ինքնազգացողությունը, աշխատանքի նկատմամբ հետաքրքրության անկումը, համբերատարության և ներքին հավասարակշռության կորուստը, օգնության դիմած մարդկանց և մտերիմների նկատմամբ ջերմություն և հոգատարություն զգալու դժվարացումը և այլն, իսկ որպես ավելի հեռահար հետևանքներ՝ տրամադրության խանգարումները, հոգեսոմատիկ խնդիրները, կախվածությունների ձևավորումը, աշխատունակության կտրուկ անկումը և այլն [2, 3]:

Այսպիսով, հուզական սպառման մեջ գտնվող մանկավարժն ունենում է ամեն ինչից հոգնածության, ընկճվածության, անպաշտպան լինելու զգացում, ցանկությունների բացակայություն, անորոշ, չկառավարվող իրավիճակներից, սխալվելուց վախ, ոչ բավարար ուժեղ, ոչ բավարար կատարյալ երևալու վախ: Այրման մեջ գտնվող մանկավարժի մտածմունքներում գերակշռում են սեփական անձի հանդեպ անարդարացի գործողությունների, հասարակության մեջ սեփական դիրքի անարժան լինելու, շրջապատի կողմից իր ջանքերի չգնահատված լինելու, սեփական անլիարժեքության մասին մտքերը: Առավել հաճախ առաջանում են նաև հակասական դրսևորումներ, ինչպես օրինակ նկատված կամ հակառակը՝ աննկատ մնալու ձգտում, ամեն ինչ շատ լավ անելու կամ բացարձակ չջանալու ցանկությունը:

Հետազոտողները առանձնացնում են օբյեկտիվ (սոցիալական, կազմակերպչական) և սուբյեկտիվ (անձնային) գործոններ, որոնք հնարավոր են դարձնում հուզական ինքաայրման համախտանիշի զարգացումը մանկավարժների մոտ:

Օբյեկտիվ (սոցիալական) գործոններն են՝ 1. կրթության արդիականացում, անցում նոր կրթական չափանիշներին, մանկավարժի մասնագիտական ունակությունների և կոմպետենցիաների նոր պահանջներ, 2. նորարարական տեխնոլոգիաների ներդրում (օրինակ, գրեթե

բոլոր ուսումնական հաստատություններում մանկավարժները պարտավոր են իրականացնել ինտեգրակտիվ դասեր եւ միջոցառումներ, գրել ծրագրեր և հաշվետվություններ համակարգչի վրա, իսկ մանկավարժի աշխատավարձը միշտ չէ, որ թույլ է տալիս ձեռք բերել համակարգիչ, վճարել համակարգչային դասընթացների և նմանատիպ վերապատրաստումների համար և այլն), 3. հսկայական փաստաթղթային ֆորմալ աշխատանք, որոնք պետք է լրացվեն ճիշտ: Սուբյեկտիվ (անհատական) գործոններն են՝ կախված անձի առանձնահատկություններից, տարիքից կենսական արժեքների համակարգից, անհատական հոգեբանական պաշտպանական միջոցներից և մեխանիզմներից, գործունեության նկատմամբ վերաբերմունքից: Այստեղ կարելի է նշել նաև մասնագիտական գործունեության արդյունքների բարձր մակարդակի սպասումը: Որպես կանոն, այրման ենթակա են ամենալավ աշխատողները, նրանք, ովքեր առավել մեծ պատասխանատվությամբ են վերաբերվում իրենց աշխատանքին [4, 5, 6]:

Մանկավարժն ուսումնադաստիարակչական գործընթացի առանցքային, որոշիչ օղակներից մեկն է, գիտելիքների կրողը, վարքագծի, ապրելակերպ վարելու և առողջության նկատմամբ սովորողների մոտ համապատասխան մոտեցում ցուցաբերող օրինակելի անձ: Բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ուսուցչի մասնագիտական առողջության վիճակը մեծ կապ ունի նրա աշխատանքի արդյունավետության և կայունության հետ: Ուսուցչի մասնագիտական առողջության խնդիրը պետք է դիտել որպես ազգի, հանրության առողջության պահպանման նախապայման:

Մանկավարժների մեջ առանձնացվում են այրման համախտանիշի առաջացման երեք փուլեր: Առաջին, նախնական փուլում նկատվում են որոշակի անհաջողություններ գործառոյթների կատարման մակարդակում, օրինակ, որոշ բաների մոռացում (արդյոք կատարել է անհրաժեշտ գրանցումներ փաստաթղթերում): Սխալվելու վախից ուսուցիչը բարձրացնում է վերահսկողության մակարդակը, իր գործողությունների բազմակի կրկնություն է անում համոզվելու

համար, որ արել է տվյալ գործը, արդյունքում առաջանում է նյարդային լարվածության զգացում: Երկրորդ փուլում աշխատանքի հանդեպ հետաքրքրությունը նվազում է, նվազում է նաև հաղորդակցության պահանջը (այդ թվում՝ տանը, ընկերների հետ). «Ես չեմ ուզում որևէ մեկին տեսնել», «հինգշաբթի օրը զգացողություն է, որ արդեն ուրբաթ է», «շաբաթը ձգվում է հավերժ», այս ամենն ուղեկցվում է սոմատիկ ախտանիշներով (ուժ չկա, էներգիայի պակաս, հատկապես շաբաթվա վերջում, երեկոյան գլխացավեր,) վիրուսային հիվանդությունների նկատմամբ հակում, ցանկացած մանրուք սկսում է գրգռել: 3. Երրորդ փուլը անձնային այրման փուլն է, որին բնորոշ է հետաքրքրության բացարձակ կորուստը ինչպես աշխատանքի, այնպես էլ սեփական կյանքի նկատմամբ, մարդկանց չտեսնելու ցանկություն, մշտական ուժասպառության զգացում [4]:

Մեր հետազոտությունը նվիրված է մանկավարժների գործունեության վրա հուզական այրման համախտանիշի ազդեցության ուսումնասիրությանը: Հետազոտությունն իրականացվել է քաղաքային և գյուղական համայնքների նախադպրոցական ուսումնական հաստատություններում աշխատող մանկավարժների հետ. մասնակցել են թվով 30 մանկավարժ (ղաստիարակ), որոնք ունեն 10-30 տարվա աշխատանքային փորձ:

Հետազոտության իրականացման և մեր առջև դրված խնդիրների լուծման համար մշակել և կիրառել ենք հետևյալ մեթոդների և մեթոդիկաների փաթեթը. 1. Դիտում, 2. Բոյկոյի Հուզական այրման բացահայտման թեստը, 3. Մասլաչի և Ջեկսոնի հուզական այրման բացահայտման մեթոդիկան, 4. Ասինգերի ագրեսիվության մակարդակի ախտորոշման մեթոդիկան, 5. Բասսի և Դարկիի մշակմամբ ագրեսիվ վարքագծի ախտորոշման մեթոդիկան: Ենթադրվում է, որ հուզական այրման բարձր արտահայտվածություն ունեցող մանկավարժների մոտ առկա է նաև ագրեսիայի բարձր արտահայտվածություն, մասնավորապես խոսքային ագրեսիա:

Ըստ Վ.Վ. Բոյկոյի, «Հուզական այրման համախտանիշի մակար-

դակի ախտորոշման» մեթոդիկայի արդյունքների, մեր հետազոտական ընտրանքում հուզական այրման համախտանիշը ձևավորման փուլում է հետազոտվողների 20%-ի մեջ, 67%-ի մեջ այն արդեն ձևավորված է, իսկ 13%-ի մեջ՝ բացակայում է: Որպեսզի այս արդյունքներն առավել հավաստի լինեն, կիրառել ենք հուզական այրման ախտորոշման ևս մեկ մեթոդիկա՝ Կ. Մասլաչի և Ս. Ջեքսոնի մասնագիտական այրման ախտորոշման հարցարանը, որը ճանաչվել է որպես ոսկե ստանդարտ: Ըստ այս հարցարանից ստացված արդյունքների վերլուծության, հետազոտվողներից 67%-ը գտնվում են այրման վերջին փուլում, 20%-ի մեջ համախտանիշը դեռևս ձևավորման ընթացքի մեջ է, իսկ 13%-ի մեջ բացակայում կամ ցածր մակարդակի վրա է:

Համապատասխանաբար, ամբողջ ընտրանքը բաժանել ենք 3 հիմնական խմբի՝ համեմատական ուսումնասիրություն անցկացնելու նպատակով: Առաջին խմբում ընդգրկվել են այն հետազոտվողները, որոնց մոտ ՀԱՀ չի գրանցվել (4), երկրորդ խմբում՝ ՀԱՀ-ի ձևավորման փուլում գտնվող հետազոտվողները (6), իսկ երրորդ խմբում՝ արդեն ձևավորված ՀԱՀ ունեցող հետազոտվողները (20): Ս. Ասինգերի ագրեսիվության մակարդակի ախտորոշման մեթոդիկայի արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ հետազոտվողների 70%-ն ունի ագրեսիվության բարձր ցուցանիշ, 23%-ը՝ միջին, 7%-ը՝ ցածր: Ընդ որում, ագրեսիվության բարձր մակարդակ ունեցող մասնակիցների մեջ, ըստ այրման բացահայտման մեթոդիկաների արդյունքների, առկա է նաև այրման բարձր մակարդակ, կամ նրանք գտնվում են այրման վերջին փուլում: Այսինքն, հետազոտվողների 3-րդ խումբը, ովքեր գտնվում են այրման վերջին փուլում, ըստ Ասինգերի ագրեսիայի ախտորոշման մեթոդիկայի տվյալների, ունեն նաև ագրեսիայի բարձր մակարդակ՝ 70%: Ագրեսիվության միջին մակարդակ են գրանցել այրման երկրորդ փուլում գտնվող հետազոտվողները՝ 23%: Մասնակիցներից 4-ի մեջ, ովքեր գտնվում էին հուզական այրման չձևավորվածության փուլում, ստացվել են ագրեսիվության ցածր ցուցանիշներ:

Ներկայացնենք նաև Ա. Բասի և Ա. Դարկիի ագրեսիայի տիպե-

րի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկան, որը թույլ է տալիս բացահայտել ագրեսիայի 8 տիպեր: Մեթոդիկայի կիրառման արդյունքում ստացվել են հետևյալ ցուցանիշները. հետազոտվողների 87%-ն ունի խոսքային ագրեսիայի բարձր մակարդակ, 13%-ը՝ միջին, 0%-ը՝ ցածր:

Այսպիսով, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հուզական այրման 3-րդ՝ վերջին փուլում գտնվող հետազոտվողների խմբի մեջ գրանցվել է խոսքային ագրեսիայի ամենաբարձր մակարդակը: Մասնակիցների 87%-ն ունի խոսքային ագրեսիվության բարձր մակարդակ, ինչը վկայում է այն մասին, որ հուզական այրման բարձր մակարդակ ունեցող մանկավարժների մոտ առկա է ագրեսիայի բարձր մակարդակ, մասնավորապես՝ խոսքային /վերբալ/ ագրեսիվություն:

THE PROBLEM OF THE INFLUENCE OF EMOTIONAL BURNOUT SYNDROME ON THE PERSONALITY AND ACTIVITY OF A PEDAGOGUE

LACHINYAN L. L., SARGSYAN L. M.

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

One of the modern foreign and paternal psychology problems is the investigation of emotional burnout syndrome. The investigation of the problem is quite wide because it refers to the specialists of different fields (specialists of pedagogical psychology, management and social psychology, medical psychology, business field, etc.). It isn't a secret that the activity of supporting specialists is full of various tenseness, problematical and emotional situations, relation of which can lead to the formation of heavy mental and emotional state derangement which has a negative influence on the specialist's life quality. It is also scientifically proved, that everyday stressful situations of supporting specialists in a certain period can lead to

the formation of so called emotional burnout syndrome. This is a process of emotional, cognitive and physical energy progressive loss, which is described by emotional, mental exhaustion, physical tiredness, personal aloofness and diminution of job enjoyment. The profession of a pedagogue is considered to be one of the stressful professions, as it contains many risky factors for forming nervous and psychological tenseness. Besides there are many demands for a pedagogue by the point of professional activity, such as self-command and self-regulation, qualities that demand high level of neurological stability, otherwise the specialist is in danger of emotional burnout syndrome and the deformation of person's professional character. The problem of emotional burnout among pedagogues is very modern as there are not exact means, usage of which can abolish emotional burnout among pedagogues. In case of having emotional burnout, the pedagogue loses his working effectiveness. That's why it is an urgent problem to investigate the features of emotional burnout and contributing factors of its formation.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бойко В. В., Энергия эмоций в общении: взгляд на себя и других.. М., Информац. издат. дом «Филин». 2010. – 472 с.
2. Водопьянова Н. Е., Старченкова Е. С., Синдром Выгорания. Диагностика и профилактика, Практическое ПОСОБИЕ, 3-е издание, испр. и доп., Москва. Юрайт. 2017. 335 с.
3. Петрушин В. И., Психологические аспекты деятельности учителя и классного руководителя. – М., 2007. – 160 с. – ISBN 5-901030-46-101.
4. Чутко Л. С., Синдром эмоционального выгорания. Клинические и психологические аспекты. – 2-е изд. – М.: МЕДпресс-информ. 2014. – 256 с.
5. Трущенко М. Н., К вопросу о синдроме выгорания: традиционные подходы исследования и современное состояние проблемы // Психология: традиции и инновации: материалы междунар. науч. конф. (г. Уфа, октябрь 2012 г.). – Уфа: Лето.- 2012. – с. 1-8.
6. Maslach С., Jackson S. E., The measurement of experienced burnout. J Occup. 1981: Beh. 2.- 99-113.

ԱՆՁՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՀԵՐԻ ՎԱՐՔՈՒՄ

Խաչիկյան Գ. Ա., Ավետիսյան Մ. Ս.

Խ. Արոլյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. *Վիկտրիմ վարք, տնտեսական հանցագործության զոհ, էվենտուալ և դեսիդիվ զոհ, զոհի անձնային առանձնահատկություններ:*

Հանցավոր վարքագծի, հանցավորության պատճառներն ու պայմանները հասկանալու, բացահայտելու համար քրեաբանությունն ուսումնասիրում է ոչ միայն հանցանք կատարած անձին, այլև հանցագործությունից տուժածներին կամ հանցագործության զոհերին: Վիկտիմոլոգիան, որպես գիտություն, ուսումնասիրում է զոհերի անհատական առանձնահատկությունները, զոհ դառնալու հակվածությունը: Գիտնականների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առանց զոհի դերի ուսումնասիրության անհնարին է լիովին պարզել հանցագործությանը նպաստող հանգամանքների և պատճառների ծագումը: Իրար հետ շաղկապված են հանցագործը, զոհը և իրադրությունը, որոնք ստեղծում են միասնական համադրություն և կարող են գոյություն ունենալ համատեղ, այսինքն հանցագործության իրականացումը դինամիկ պրոցես է, որը առկա է հանցագործի և զոհի փոխադարձ հարաբերություններում ու գործողություններում, որում կրիմինալ դրամայի պրոցեսում հաճախ է առանձնանում զոհի դերը [8]:

Վիկտիմոլոգիայի հիմնական խնդիրը զոհի անձի և նրա վարքագծի ուսումնասիրությունն է: Այս ամենի շնորհիվ հնարավոր է դառնում արդյունավետ և որակով բացահայտել հանցանքը, ուսումնասիրել այն, վերականգնել հանցագործության իրական պատկերը, օբյեկտիվ գնահատել հանցագործի մեղքը, ինչպես նաև պարզել զոհի դերը այդ հանցանքում [1]:

Հաճախ հանցագործության զոհի անձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա ագրեսիվությունը, դիսկայնությունը վտանգ են առաջացնում իր համար. նման վարքագիծը մեծացնում է անձից հանցագործության զոհ դառնալու հավանականությունը [6, էջ 70]:

Վերջին ժամանակներում «տնտեսական հանցագործություններ» հասկացությունն օգտագործվում է շատ հաճախ: Դրանց մասին պատկերացումների հիմքը դրվել է 1945թ. ԱՄՆ-ում, որպես հանցագործություններ, որոնք կատարվել են բիզնեսի ոլորտում՝ բարձր դիրք զբաղեցրած անձանց կողմից: Ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրությամբ զբաղվելը, կեղծ փողեր, արժեթղթեր պատրաստելը, պահելը կամ իրացնելը, հարկերից, տուրքերից խուսափելը և այլն ևս համարվում են տնտեսական հանցագործություններ: Այս դեպքերի համար ներկայումս ՀՀ Քրեական օրենսգրքում կիրառվում են տուգանքի, կալանքի, ազատազրկման, գույքի բռնագանձման, որոշակի պաշտոններ զբաղեցնելու, որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու մեխանիզմները:

Տնտեսական հանցագործությունները, լինելով բավականին տարբեր, միևնույն ժամանակ ունեն ընդհանուր, ինտեգրատիվ ընդհանրություններ:

1. Կատարվում են տնտեսական հարաբերությունների մասնակիցների կողմից:

2. Դրանց մեծ մասը հետապնդում է սեփական շահի ստացման նպատակ [9]:

Սպառողների խարդախությունների բազմաթիվ իրավիճակները, չկայացած գործարքները, գործնական կապերի խզումը մասնավորապես պայմանավորված են հետևյալ համալիր հոգեբանական պատճառներով.

1. մարդկանց ակտիվության ցածր մակարդակով,
2. կարծրատիպային մտածողությամբ,
3. ոչ բավարար կոմպետենտությամբ [4]:

Տնտեսական հանցագործությունների զոհերի վարքը կարող է դրսևորվել երկու հիմնական ձևերով՝ էվենտուալ (իրավիճակային) և

դեսիդիվ (որոշումային): Առաջինը նշանակում է, որ որոշակի դեպքերի ծանոթ պայմանների, կոնկրետ իրավիճակների առկայության պայմաններում, անձը կարող է դառնալ վերոնշյալ հանցագործության զոհ, իսկ երկրորդն իր մեջ ներառում է զոհաբեր որոշման նախապատրաստումն ու ընդունումը, ինչպես նաև բուն զոհային ակտիվությունը, այսինքն ներառում է իր մեջ նպատակադրված, նպատակահարմար նորմայից շեղումներ, որոնք տնտեսական հանցագործությունների համար ծառայում են որպես կատալիզատոր [2]: Բազմաթիվ հետազոտությունների արդյունքում, զոհաբանները հանգել են նրան, որ տնտեսական հանցագործությունների զոհերին հատուկ հատկանիշները որոշակի կերպով կապված են ընդհանուր զոհայնության հատկանիշների հետ և այդ իսկ պատճառով էլ, մեծ նշանակություն է ստանում զոհայնության հոգեբանական ուսումնասիրությունը, քանի որ այն կարող է պատասխան տալ զոհաբանության հիմնական հարցին, թե ինչու է հենց տվյալ անձը կամ անձնաց խումբը դառնում այս կամ այն հանցագործության զոհ [5]:

Այս խնդրի լուծման ճանապարհին նախ և առաջ հարկավոր է պարզել, թե որքանով են կամային, հուզական և հոգեբանական գործընթացները, անձնային այլ հատկանիշներն ազդում անձի զոհային վարքի վրա, հասկանալ, թե ինչու միևնույն իրավիճակում մեկը կարող է դառնալ կողոպուտի, շորթման զոհ, իսկ մյուսը՝ ոչ:

Տնտեսական հանցագործությունների զոհերին դասակարգելիս, զոհաբաններն օգտվում են այնպիսի սկզբունքներից, որոնցից է, օրինակ հանցագործի և զոհի միջև առկա հարաբերություններն ու կապերը (բարեկամական, ընկերական, սիրային, հարևանական և այլն):

Տնտեսական հանցագործությունների զոհերի ուսումնասիրման և դասակարգման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել անձի այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են վերլուծական հմտությունները, հուզական կայունությունը, ինքնակառավարումը, դիսկայնությունը, էմպաթիան, տազնապայնությունը: Այս հատկանիշների վրա ուշադրություն դարձնելը կարևորվում է, քանի որ դրսևորվելով վարքում, որոշակի պայմաններում կարող են նպաստել կամ հակառակը՝ խան-

գարել հանցագործության իրականացմանը [10]:

Տնտեսական հանցագործությունների հանդեպ զոհերի վարքային դրսևորումները ընթանում են երեք հիմնական մակարդակներով.

1. մակարդակ, երբ անձը զգում է իրավիճակի վտանգավորությունը: Սովորաբար նման պայմաններում գործում է անխոցելիության պատրանքը, սակայն գրեթե միշտ առկա է լինում իրավիճակի հստակ գիտակցումը:

2. մակարդակ, երբ տեղի է ունենում անձի դեզադապտացիա, որի աստիճանը կախված է վնասի ինտենսիվությունից և անձի ադապտացիոն հնարավորություններից: Այս մակարդակում առաջ են գալիս հուզական խանգարումներ: Հակազդումներն այս փուլում շատ բազմազան են, սակայն առավել ինտենսիվ են արտահայտվում խուճապը, գիտակցության նեղացումը, ավտոմատացված կարծրատիպային շարժումները և վախի դրսևորումները:

3. մակարդակ, որի ժամանակ աստիճանաբար վերականգնվում են բնական հույզերը, ինքնավերահսկումը: Անձն այս մակարդակում սկսում է գիտակցել իր դեզադապտիվ ռեակցիաները և վերլուծել դրանք [2, 3]:

Տնտեսական հանցագործությունների զոհերի վարքի ուսումնասիրությունները թույլ են տալիս առանձնացնել զոհերի անձին բնորոշ մի շարք հատկություններ, որոնք մեծացնում են տնտեսական հանցագործություններից տուժելու հավանականությունը: Ենթադրվում է, որ տնտեսական հանցագործությունների զոհերի վարքում այնպիսի անձնային առանձնահատկություններ, ինչպիսիք են բարձր ինքնագնահատականը, ցածր տազնապայնության մակարդակը, դյուրահավատությունը, ռիսկի դիմելու պատրաստակամության բարձր մակարդակը մեծացնում են անձի զոհ դառնալու հավանականությունը:

Վիկտիմոլոգիական տեսանկյունից տուժողների վարքագիծը կարող է լինել չեզոք, դրական և բացասական՝ կապված հետևյալ երկու հանգամանքներից.

1. վիկտիմոլոգիական մեղքի առկայություն և բացակայություն հանցագործության առաջացման ընթացքում

2. օբյեկտիվ դերակատարումը հանցավոր իրադրությունում:

Առաջին գործոնը կախված է նրանից, թե արդյոք տուժողը հնավորություն էր ունեցել կանխատեսել հանցագործությունը: Երկրորդը բնութագրվում է վիկտիմային վարքագծի դետերմինացիոն նշանակությամբ, որը կարող է տարբեր դերակատարում ունենալ հանցագործության մեխանիզմում [9]:

Դ. Ռիվմանը տվել է տնտեսական հանցագործությունների զոհերի հետևյալ դասակարգումը. նախաձեռնողական տիպ, չեզոք տիպ, անքննադատ տիպ [7]:

Տնտեսական հանցագործությունների վիկտիմոլոգիական հետազոտություններն ու դրանց վերաբերյալ մշակված տնտեսական հանցագործությունների զոհերի վարքում անձնային առանձնահատկությունների դերի ուսումնասիրությունները կարող են նպաստել հանցագործությունների նախազգուշացմանը, ինչպես նաև նման հանցագործությունների կանխման գործում վիկտիմոլոգիական կանխման դերի բարձրացմանը:

THE ROLE OF PERSONALITY FACTORS IN THE BEHAVIOR OF VICTIMS OF ECONOMIC CRIME

KHACHIKYAN G. A., AVETISYAN M. S.

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

Many personality features are distinguished in the behavior of victims of economic crime that increase the probability of the person becoming a victim.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Իսրայելյան Գ. Վ., Վիկտիմոլոգիայի հիմունքներ և հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխարգելում: Ուսումնամեթոդական ձեռնարկ /Երևան, Աստղիկ Գրատուն հրատարակչություն, 2012թ., 108 էջ:
2. Մարգարյան Ա. Ռ., Հանցավորության նկատմամբ վախը և վիկտիմիզացիան ՀՀ-ում, «Բանբեր Երևանի համալսարանի», «Իրավագիտություն», Երևան 2011թ., էջ 19-41
3. Միքայելյան Մ.Ա. Բռնության և զոհի հոգեբանություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ / Եր.: Ճարտարագետ, 2016. - 164 էջ:
4. Васильев В. Л., Юридическая психология, Питер 2009, стр. 608.
5. Воронин Ю. А., Введение в криминологию, 2008, стр. 99.
6. Ривман Д. В., Виктимность как социальное явление, 1976, стр. 70.
7. Ривман Д. В., Криминальная виктимология, Питер 2002, стр. 304.
8. Туляков В. О., Виктимология, 2000, стр. 336.
9. <http://librisum.com/viktim/viklog18.htm>.
10. <http://www.studfiles.ru/preview/5317887/:20/>.

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱՐԳԱԶԱՆՑ ԵՎ ՀԱՆՑԱՎՈՐ ՎԱՐՔԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀՈՒԶԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐԻ ԴԵՐԸ

Հովհաննիսյան Ա. Լ.

«Հ պաշտպանության նախարարություն, Երևան, Հայաստան»

Հանգուցային բառեր. *զինծառայող, կարգազանց վարք, հանցավոր վարք, շեղվող վարք, հանցագործի անձի տրամաբանություն:*

Կարգապահությունն ու օրինապահ վարքն առանցքային նշանակություն ունեն զինված ուժերի համար: Կարգապահությունն էապես ազդում է ինչպես բանակի մարտական պատրաստվածության և մարտունակության վրա, այնպես էլ բանակում առկա բարոյահոգեբանական մթնոլորտի: Այստեղ մեծ նշանակություն ունի զինծառայողների օրինապահ վարքը, որի բացակայությունն այս կամ այն չափով խաթարում է բանակի գործունեությունը: Այնուամենայնիվ, զինծառայողների շրջանում հաճախ առկա են կարգազանց վարքի դրսևորումներ, որոնց պատճառների բացահայտումը կարող է ծառայել դրանց կանխարգելման գործընթացին: Հանցագործություններ կատարվել են բոլոր հասարակություններում: Տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր հասարակություններում այս կամ այն արարքն ընկալվել է որպես հանցավոր կամ ոչ՝ կախված կոնկրետ հասարակության գրված և չգրված օրենքներից (սոցիալական նորմեր): Քանի որ հուզական վիճակներն ազդում են անձի վարքի և հոգեկան գործընթացների վրա, ենթադրվում է, որ այն կարևոր դեր է խաղում նաև զինծառայողների հանցավոր և կարգազանց վարքի ձևավորման վրա, հետևաբար, այս թեման դառնում է խիստ արդիական, հատկապես զինծառայողների վարքի ուսումնասիրման, գնահատման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ շտկման համար: Ենթադրվում է, որ հուզական վիճակները կարևոր դեր են խաղում զինծառայողների կարգազանց և հանցավոր վարքի և դրա ձևավորման գործընթացի վրա:

Հողվածի շրջանակներում իրականացվել է էմպիրիկ հետազոտություն: Ներկայացվում են հետազոտության փուլերը, արդյունքները, եզրակացությունները: Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով. հետազոտական մեթոդների կիրառմամբ, ստացած արդյունքների վերլուծման և եզրակացությունների ընդհանրացմամբ՝ ներքոնշյալ խնդիրների համատեքստում:

1. Ուսումնասիրվել, վերլուծվել է զինծառայողների կարգազանց և հանցավոր վարքի տեսակավորման մեթոդաբանությունը:

2. Բացահայտվել են զինծառայողների կարգազանց և հանցավոր վարքի ձևավորման նախադրյալներն ու առաջնային դրդապատճառները:

3. Ուսումնասիրվել են անձի հուզական վիճակները և նրանց դերը զինվորական կոլեկտիվում:

4. Հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա բացահայտվել է զինծառայողների կարգազանց և հանցավոր վարքի ձևավորման գործընթացում հուզական վիճակների դերը:

Հետազոտության մեթոդական հիմք են ծառայել Ժ. Թեյլորի տագնապայնության չափման մեթոդիկան, Ա. Բասի և Ա.Դարկիի ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկան, Այզենկի խառնվածքի թեստը, ինչպես նաև՝ հոգեբանական զրույցի և փաստաթղթերի ուսումնասիրության մեթոդները:

Հանցագործությունն իրավական տեսանկյունից մեղավորությամբ կատարված, հանրության համար վտանգավոր, քրեական օրենսգրքով նախատեսված արարքն է: ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված են միջազգային պրակտիկայում ընդունված դասակարգումներին համապատասխանող [6, էջ 35-37] զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները (Բաժին 12, Գլուխ 32, հոդվ. 356-383):

Ս. Արզումանյանը և է. Գրինն «Իրավաբանական հոգեբանություն» աշխատության մեջ նշում են, որ «ինչպես ցանկացած սոցիալական վարքի ձև, այնպես էլ հանցավոր վարքի ձևերը տարաբնույթ են, և դրանց առանձնահատկությունները բազմաշերտ բնութագրումներ

են պահանջում» [2, էջ 155]: «Հանցավոր վարքը հոգեբանական տեսանկյունից վերլուծելիս, պետք է տեսնել ոչ միայն հանցագործությունը, այլ նաև հանցագործություն կատարելու որոշումը դետերմինացնող, դրա կատարումն ուղղող և հսկող ներքին՝ հոգեկան գործընթացները, հոգեկան վիճակները» [7, էջ 254]: Հանցագործի անձի տիպաբանությունում Մ. Ենիկենն առանձնացնում է երեք գրադացիա. 1) հանցագործի ընդհանուր տիպ, 2) որոշակի կատեգորիայի հանցագործի անձնավորություն, 3) որոշակի տեսակի հանցագործի անձնավորություն: Սույն գրադացիաներն իրար հետ հարաբերվում են որպես ընդհանուր, յուրատիպ և առանձնակի [4, էջ 298]:

Ըստ Ս. Արզումանյանի և է. Գրինի, իրադրությունն ինքնին չի կարող դրդել հանցագործության, այն կարող է նպաստավոր լինել հակասոցիալական անձի համար, որպեսզի նա կարողանա իրականացնել իր որոշակի հանցածին մտադրություններն ու դիրքորոշումները: Ցանկացած իրադրություն միայն կարող է ակտիվացնել տվյալ մարդու համար բնորոշ վարքի միջոցներն ու եղանակները, քանի որ մարդն իրադրության գերին չէ և ունի իր վարքի կոնցեպտուալ որոշում ընդունելու իրավունքը [2, էջ 163]:

Անձի վարքը դետերմինացված է սոցիալական միջավայրով, բայց միջավայրի ազդեցությունը չի կարող հանգեցնել պարզ պոռոյեկցիայի «միջավայր-վարք»: Որպեսզի օբյեկտիվ պատճառները սկսեն գործել, դրանք պետք է ոչ միայն անցնեն անձի գիտակցության միջոցով, այլև առաջացնեն կոնկրետ հանցագործության որոշակի մոտիվներ [9, էջ 38]:

Հանցավոր գործունեության պատճառականության մեխանիզմում պատճառն առաջացնում է հետևանք, իսկ պայմանները դրան նպաստում են: Բայց խոսքը միշտ նրանց համատեղ գործելու մասին է, քանի որ վերջիններս փոխկապակցված են, որպես մեկ գործող համակարգի տարրեր [5, էջ 166]: Հանցավոր վարքի դրդապատճառների առաջացումն ու զարգացումը պետք է քննարկել հանցագործի անձի ձևավորման շրջանակներում, քանի որ հանցարարքի մեջ իրականացվող մտքերը, հույզերը, զգացմունքներն ու ապրումները միա-

ժամանակ նույն անձի դրսևորումներն են [2, էջ 150]:

Նշենք, որ կարգազանց զինծառայողների նկատմամբ պատժի կիրառումը հետապնդում է մի քանի նպատակ, ինչպիսիք են օրինակ՝ սոցիալական արդարության հաստատում, կարգազանց զինծառայողի վարքի ուղղում, նոր կարգազանցությունների կանխարգելում, ինչպես տվյալ կարգազանցի, այնպես էլ այլ զինծառայողների կողմից [8, էջ 479]: Շեղվող վարք ունեցող զինծառայողները կողմնորոշվում են այնպիսի ձգտումներով, ինչպիսիք են ծառայողական դիրքի չարաշահումը, ռազմական գույքի անձնական նպատակների համար օգտագործումը և այլն [1, էջ 43]:

Դաստիարակության բացասական արդյունք են վարքի մեջ ցինիկ դրսևորումները, որոնք խիստ բացասական ազդեցություն են ունենում կոլեկտիվում բարոյահոգեբանական մթնոլորտի վրա [1, էջ 43-44]:

Զինծառայողների կարգազանց և հանցավոր վարքի ձևավորման գործընթացում հուզական վիճակների դերը բացահայտելու նպատակով՝ ՀՀ ԶՈՒ ծառայողների հետ իրականացվել է հետազոտություն: Հետազոտությունն անց է կացվել ՀՀ ԶՈՒ երեք զորամասում (մարտական հերթապահություն չիրականացնող), ընտրակազմը 30 ժամկետային պարտադիր ծառայության զինծառայող, որից 15-ը զինվորական ծառայության ժամանակ կարգազանց և հանցավոր վարք դրսևորած զինծառայողներ, մյուս 15-ը՝ չեն ցուցաբերել նման վարք: Ընդհանուր առմամբ, ՀՀ ԶՈՒ երեք զորամասերից հետազոտությանը մասնակցել են 90 զինծառայող՝ 45 կարգազանց վարք դրսևորող զինծառայողներ և 45՝ կարգապահ: Հետազոտության ընթացքում օգտագործել ենք Ժ. Թեյլորի տազնապայնության չափման մեթոդիկան, Ա. Բասի և Ա. Դարկիի ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկան և Այզենկի խառնվածքի թեստը:

Այսպիսով, հետազոտության արդյունքներից մենք կատարել ենք հետևյալ եզրակացությունները:

1. Կարգապահ և կարգազանց զինծառայողների մոտ էապես տարբերվում են խառնվածքն ու հուզական վիճակների առանձնա-

հատկությունները,

2. Կարգազանց զինծառայողների մոտ, ի տարբերություն կարգապահ զինծառայողների, տագնապայնության մակարդակն էապես բարձր է:

3. Կարգազանց զինծառայողների ագրեսիվության մակարդակը շատ ավելի բարձր է, քան կարգապահ զինծառայողները:

4. Ի տարբերություն կարգապահ զինծառայողների, կարգազանցների մոտ բարձր է նաև թշնամանքի մակարդակը,

5. Կարգապահ և կարգազանց զինծառայողների մոտ էապես տարբերվում է նաև հուզական կայունության ցուցանիշը: Առաջիններին բնորոշ են բարձր հուզական կայունությունը, իսկ կարգազանցներն հուզականորեն անկայուն են:

6. Կարգապահ զինծառայողների շրջանում գերակշռող է հանդիսանում խառնվածքի սանգվինիկ տիպը, որը համարվում է հուզականորեն կայուն էքստրավերտ, իսկ կարգազանց զինծառայողների մոտ գերակշռող տիպ է խոլերիկը՝ նյարդային անկայունությամբ էքստրավերտ տիպը:

Այս ամենը թույլ է տալիս փաստել, որ անձի հուզական վիճակները մեծ դեր ունեն զինծառայողների կարգազանց և հանցավոր վարքի ձևավորման գործընթացում: Ընդ որում, զինծառայողների կարգազանց և հանցավոր վարքի ձևավորման գործընթացում բավականին մեծ դեր են խաղում բարձր տագնապայնությունը, ագրեսիվության և թշնամանքի բարձր մակարդակը, ինչպես նաև հուզական անկայունությունը:

Անհրաժեշտ է, որ ստորաբաժանումների հրամանատարներն առօրյա ծառայողական գործունեության ժամանակ՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքներ իրականացնելիս հաշվի առնեն վերոնշյալ եզրահանգումները, մասնավորապես, կոնկրետ զինծառայողի մեջ գերակայող որոշակի հուզական վիճակների և անձնային առանձնահատկությունների փոխկապակցվածությունը, կանխատեսել և համապատասխան հոգեբանամանկավարժական մեթոդների կիրառմամբ կանխարգելել հնարավոր հանցավոր վարքը:

THE ROLE OF AFFECTIVE FACTORS IN FORMATION OF SERVICEMEN'S CRIMINAL BEHAVIOR

HOVHANNISYAN A. L.

Ministry of defense of RA, Yerevan, Armenia

ABSTRACT

In the article, the author cites the main causes of the criminal behavior of servicemen, the principles for determining, classifying and diagnosing the psychological problems of servicemen.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան Զ. Դ., Զինձառայողների շեղվող վարքի նախնական հոգեբանական ուղիները //Խ. Արուսյանի անվան ՀՊՄՀ-ի «Գիտական տեղեկագիրք» 2005, հմ.1:
2. Արզումանյան Ս. Զ., Գրին է., Իրավաբանական հոգեբանություն, «Զանգակ-97», Երևան 2004:
3. ՀՀ Քրեական Օրենսգիրք, «Տիգրան Մեծ», Երևան 2018:
4. Еникеев М. И., Юридическая психология. С основами общей и социальной психологии. М.: НОРМА 2005.
5. Криминология. Учебник под ред. Н. Ф. Кузнецовой и В. В. Лунева. М.: Волтере Клувер 2004.
6. Маршакова Н. Н., Преступления против военной службы //Проблемы экономики и юридической практики 2007 № 2.
7. Психология эмоций. Тексты. М.: Изд-во Моек, ун-та, 1984.
8. Романов В. В., Юридическая психология. М.: Юристъ, 1998.
9. Степенко В. Е., Кузьмин И. О., Понятие и характеристика специальных видов наказаний, применяемых к военнослужащим. //Электронное научное издание «Ученые заметки ТОГУ» 2014, Том 5, № 4.

ՀՈՒՉԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՊՐՈՒԼԵՄՆԵՐԸ

Մանուկյան Ս. Տ.

«Հ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ, Սևան, Հայաստան»

Հանգուցային բառեր. *ինտելեկտ, հուզական ինտելեկտ, միջանձնային ինտելեկտ, ինքնագիտակցում, ինքնահասկացում, ապրումակցում, հույզերի գիտակցում, հույզերի կառավարում:*

Հուզական ինտելեկտը բնորոշ է յուրաքանչյուր մարդու՝ առանց բացառության, այն մեր տեսակին բնորոշ առանձնահատկություն է: Հուզական ինտելեկտի մասին ուսումնասիրությունների, դրա տարբերակման և չափման ոլորտում առկա են մեծ բազմազանություն և բազմաթիվ պրոբլեմներ: Ինտելեկտի հետազոտության տեսական և փորձարարական ուսումնասիրություններում առկա պրոբլեմները, ըստ Մ. Ա. Խոլոդնոյի, հետևանք են բարդ ճգնաժամային իրավիճակների, որ նա բնութագրում է «ինտելեկտը անհետացել է» ձևաչափով, այլ կերպ ասած՝ կասկածի տակ է դրվում «ինտելեկտ» տերմինի գոյությունը վերացականության և անորոշության պատճառով: Կարելի է ենթադրել, որ հուզական ինտելեկտի բավական մեծ թվով մոդելների առայությունը և դրա չափման տարբեր մոտեցումները հանգեցնում են հուզական ինտելեկտի «անհետացման»՝ մտավոր ունակությունների «ընտանիքի» այլ անդամների հետ միասին [1, էջ 67]:

«Հուզական ինտելեկտ» հասկացությունը առաջացել է «սոցիալական ինտելեկտ» հասակացությունից, որը մշակվել է Է. Թորնդայքի (1920), Ջ. Գիլֆորդի (1976), Հ. Այզենկի (1995) կողմից: 1995թ. Հ. Գոուլմանի «Հուզական ինտելեկտ» գիրքը առաջ բերեց մեծ ճանաչում հույզերին՝ որպես ինտելեկտի ոլորտ: Հուզական ինտելեկտի հայեցակարգը ուսումնասիրել է նաև Հ. Գարդները, ով առանձնացնում էր ներանձնային և միջանձնային ինտելեկտ հասկացությունները: Ներանձ-

նային ինտելեկտը նրա կողմից մեկնաբանվում էր որպես «մուտք դեպի սեփական հուզական կյանք, դեպի իր հույզեր և զգացմունքներ» [5, էջ 7]: Ամերիկացի հոգեբաններ Պ. Սալովեյի և Ջ. Մայերի կողմից 1990 թվականին առաջարկվեց այս կարողությունները միավորել «հուզական ինտելեկտ» մեկ ընդհանուր հասկացությամբ: Պ. Սալովեյը հուզական ինտելեկտը տարբերակում է 5 հարթություններում:

1. Սեփական հույզերի գիտակցում՝ ինքնագիտակզում, զգացմունքների հասկացում.

2. Սեփական հույզերի կառավարում՝ հուզական ճկունություն և սեփական հույզերի կամային կառավարում.

3. Ինքնամոտիվացիա՝ սեփական վարքի կառավարում՝ հույզերը կառավարելու հաշվին.

4. Մարդկանց հույզերի ճանաչում.

5. Փոխհարաբերությունների ամրապնդում՝ ունակություն պահպանել հարաբերությունները մեծ խմբերի հետ [2, էջ 77]:

1990 թվականին Պ. Սալովեյը և Ջ. Մայերը ստեղծեցին հուզական ինտելեկտի սեփական մոդելը: Նրանք առաջարկեցին հուզական ինտելեկտի նոր ձևակերպումը՝ որպես մի շարք հմտությունների ամբողջականություն, որը ունի ուրիշների և սեփական անձի զգացմունքները գնահատելու, հույզերը արտահայտելու, կիրառելու, արդյունավետ կարգավորելու կարողություն: Ըստ նրանց՝ հուզական ինտելեկտը բաղկացած է 3 բաղադրիչներից՝ հույզերի գնահատում և արտահայտում, հույզերի կարգավորում, հույզերի օգտագործում մտածողության և գործունեության մեջ [5, էջ 30]: Առաջինը կազմված է գնահատման և սեփական հույզերի արտահայտման բաղադրիչներից: Սեփական հույզերի արտահայտումը և գնահատումը իր հերթին բաժանվում են վերբալ և ոչ վերբալ բաղադրիչների, իսկ այլ մարդկանց հույզերի գնահատման ենթաբաղադրիչներն են ոչ վերբալ ընկալումը և ապրումակցումը: Երկրորդը հույզերի կարգավորումն է, որը ունի սեփական հույզերի և ուրիշ մարդկանց հույզերի կարգավորման ենթահամակարգեր: Երրորդը հույզերի օգտագործումն է մտա-

ծողության և գործունեության ժամանակ, որը ներառում է նաև ճկուն պլանավորման, ստեղծագործական մտածողության, ուշադրության ուղղորդման և դրդապատճառի ենթաբաղադրիչներ [5, էջ 31]: 1997 թվականին Ջ. Մեյերը և Պ. Սալովեյը ավարտեցին և ընդարձակեցին հուզական ինտելեկտի մոդելը: Պ. Սալովեյի, Ջ. Մայերի և մի փոքր ուշ նրանց միացած Դ. Կարուզոյի կողմից մշակվեց մի մոդել, ըստ որի՝ հուզական ինտելեկտը ներառում է իմացական կարողություններ՝ կապված հուզական ինֆորմացիայի մշակման հետ: Այս կարողությունները բնութագրում են հուզական ինտելեկտի չորս «նյութերը».

1. Հույզերի նույնականացում՝ զգացմունքների ճշգրիտ ճանաչման և արատահայտման կարողություն.

2. Մտածողության զգացմունքային խթանում, այն է՝ այնպիսի հույզերի առաջացման հնարավորություն, որոնք կնպաստեն մտավոր խնդիրների լուծմանը.

3. Հույզերի հասկացում՝ բարդ զգացմունքների հասկացման, զգացմունքների մի փուլից մյուսին անցնելու և դրանց պատճառները հասկանալու հնարավորություն.

4. Հույզերի կառավարում՝ իր կամ այլ անձի հուզական վիճակի պահպանման կամ փոփոխման կարողություն [5, էջ 85]:

1990 թվականներին առաջ եկան հուզական ինտելեկտի նաև այլ հայտնի մոդելներ, որոնք պատկանում էին Դ. Գոուլմանին և Ռ. Բար-Օնին [5, էջ 17]: Հետագայում Պ. Սալովեյի և Ջ. Մայերի առաջարկված մոդելի բաղադրիչներին ավելացան ևս երեքը՝ խանդավառություն, հաստատակամություն և սոցիալական հմտություններ: Դ. Գոուլմանը մշակեց իր կողմից առաջարկված մոդելը, որտեղ միավորեց ճանաչողական կարողությունները անհատական հատկանիշների հետ: Եվ եթե մինչ այդ հուզական ինտելեկտի կառուցվածքում առանձնացնում էին 4 հիմնական բաղադրիչներ՝ ինքնագիտակցություն, ինքնատիրապետում, ապրումակցում, շփման հմտություններ, ապա Դ. Գոուլմանը սրանց թվին է դասում ևս մեկը՝ դրդապատճառը: Դ. Գոուլմանի հուզական ինտելեկտի մոդելն իր մեջ ներառում է

չորս բաղադրիչներ՝ ինքնագիտակցում, ինքնատիրապետում, սոցիալական զգայունություն, հարաբերությունների կառավարում: Սրանցից յուրաքանչյուրն էլ ունի իր ենթաբաղադրիչը:

1. Ինքնագիտակցում՝ հուզական ինքնագիտակցում, ճշգրիտ ինքնակառավարման գնահատում, իր նկատմամբ վստահություն:

2. Ինքնատիրապետում՝ զգացմունքների վերահսկում, հրապարակայնություն, հարմարվողականություն, կամքի ուժ, նախաձեռնություն, լավատեսություն, սոցիալական հմտություններ:

3. Սոցիալական զգայունություն՝ ապրումակցման կարողություն, գործնական տեղեկացվածություն, նախագգուշացման կարողություն:

4. Հարաբերությունների կառավարում՝ ոգեշնչման, ներազդելու, ինքնակատարելագործման, փոփոխությունների խթանման, կոնֆլիկտների կարգավորման, միջանձնային հարաբերությունների ամրապնդման, թիմային աշխատանքի և համագործակցության կարողություն:

Հուզական ինտելեկտի մոդել է մշակել նաև Ռ. Բար-Օնը: 1985 թվականին Ռ. Բար-Օնը առաջարկեց «հուզականության գործակից» հասկացությունը: Ռ. Բար-Օնը առանձնացրել է կոմպետենտության հինգ ոլորտ, որոնք կարելի է նույնացնել հուզական ինտելեկտի հինգ բաղադրիչների հետ.

1. ինքնաճանաչողություն
2. միջանձնային շփման հմտություններ
3. հարմարվելու ընդունակություն
4. կոնֆլիկտաձին իրավիճակների կառավարման ընդունակություն

5. գերիշխող տրամադրություն [5, էջ 21]:

2004 թվականին ռուս հոգեբան Դ. Լյուսին առաջարկեց հուզական ինտելեկտի նոր մոտեցում: Դ. Լյուսին հուզական ինտելեկտը բնութագրվում էր որպես իր և այլ անձանց հույզերը հասկանալու և դրանք կառավարելու ընդունակություն:

Հուզական ինտելեկտի կառուցվածքում Ի. Անդրեևան տարբերակում է 2 հիմնական ասպեկտ:

✓ Ներանձնային. այն ներառում է սեփական հույզերի գիտակցումը, ինքնագնահատականը, ինքնավստահությունը, պատասխանատվությունը, համբերատարությունը, սեփական պրոբլեմների լուծումը, ինքնակառավարումը, ակտիվությունը, ճկունությունը, հետաքրքրվածությունը, նոր փորձի ձեռքբերման ձգտումը, նվաճումների մոտիվացիան, լավատեսությունը:

✓ Միջանձնային. ներառում է մարդամոտություն, ապրումակցում, հարգանք, այլ անձանց հետաքրքրությունների կարևորում, միջանձնային հարաբերությունների կանխատեսում և գնահատում, խմբում աշխատելու կարողություն [3, էջ 15]:

Հուզական ինտելեկտը, ըստ Մ. Ա. Մանոյլովայի, «մարդու կարողությունն է ընկալելու, գիտակցելու և կարգավորելու իր և մարդկանց հուզական իրավիճակները»: Ըստ Լ. Վ. Վեկկերի՝ հույզերը և կամքը գտնվում են մեկ հոգեբանական միասնության վրա, հուզական ինտելեկտը դիտվում է որպես գործունեության և հաղորդակցման «կարգավորողների» և «դրդապատճառների» շարք, որը պատասխանատու է իրեն և ուրիշներին հասկանալու, անձի ինքնակարգավորման և սոցիալական վարքագիծ համար [1, էջ 63]: Է. Լ. Նոսենկոն առաջարկել է հուզական ինտելեկտի հետևյալ նշանները՝ բարեխղճություն, նորը սովորելու պատրաստակամություն, հուզական կայունություն, ընկերասիրություն, էքստրավերտություն: Այս մոտեցման հիմնական միտքը համարվում է այն փաստը, որ այս որակները անհրաժեշտ են հաջող կյանքի գործունեության համար և արտացոլում են հուզական ոլորտի հատկանիշները՝ որպես անհատականության կայուն առանձնահատկություն: Նոր փորձի ձեռք բերման պատրաստակամությունը ենթադրում է հանդուրժողականություն անորոշ իրավիճակներում, դիմակայում սթրեսներին, ստեղծարարություն: Բարեխղճությունը ապացույց է, որ մարդը կարող է հասնել նպատակին «կարող» մոդալականության համատեքստում: Հուզական կայունությունը հնարավորություն է տա-

լիս հաղթահարելու պրոբլեմները՝ չտրվելով վրդովմունքի: Ընկերասեր լինելը համարվում է մարդկանց հետ հաղորդակցվելու ժամանակ սեփական հույզերը պահպանելու նշաններից մեկը, ընդունելու մարդկանց այնպես, ինչպիսին նրանք կան, որը միջանձնային, սոցիալական ինտելեկտի առկայության ապացույց է: Էքստրավերտությունը համարվում է նախադրյալ հաղորդակցման համար, որը նույնպես պատկանում է միջանձնային ինտելեկտի նշանների շարքին: Առաջին երեք գործոնները, ըստ Է. Լ. Նոսենկոյի, արտացոլում են ներանձնային հուզական ինտելեկտը, իսկ վերջին երկուսը՝ միջանձնային հուզական ինտելեկտը [1, էջ 64]: Է. Լ. Նոսենկոն և Ն. Վ. Կովրիզը հուզական ինտելեկտ ասելով հասկանում էին գործունեության կազմակերպման ունակություն՝ հասնելու որոշակի «էկոլոգիական վարպետության», կարողություն հստակեցնելու, փոխելու շրջակա միջավայրը՝ սեփական նպատակներին հասնելու համար, իսկ միջանձնային ինտելեկտը անձի շրջակա միջավայրի հետ շփվելու ունակությունն է, բարեհարմար հարաբերություններ հատատելը: Փորձարարական հետազոտությունների արդյունքում Է. Լ. Նոսենկոն և Ն. Վ. Կովրիզը նկարագրեցին ներանձնային հուզական ինտելեկտի ձևավորման մակարդակների հիերարխիկ կառուցվածքը, որը պայմանավորված է ներքին բաղադրիչներով: Հուզական ինտելեկտի ամենացածր մակարդակը համապատասխանում է հետևյալ պայմաններին՝ պայմանական մեխանիզմով հուզական արձագանքի կարգավորում (ռեակտիվ գործողություն), ընկալման մակարդակի ակտիվության տարածում, ակտիվության իրականացում՝ արտաքին բաղադրիչների գերակշռմամբ [1, էջ 64]:

Այսպիսով, կարող ենք ասել, որ «հուզական ինտելեկտը» հոգեբանական գոյացություն է, որը ձևավորվում է մարդու կյանքի ընթացքում մի շարք ազդեցությունների ներգործման հետևանքով, որոնք էլ պայմանավորում են հուզական ինտելեկտի մակարդակն ու անհատական հատկանիշները: Հուզական ինտելեկտ ունակությունն է, որի շնորհիվ մարդը կարողանում է ճանաչել այլոց և սեփական հույզերը, մտադրությունները, դրդապատճառները, ցանկությունները

և կարողանում է կառավարել դրանք: «Հուզական ինտելեկտ» հասկացությունը առաջացավ այն ժամանակ, երբ ինտելեկտի միջոցով հնարավոր չէր ցույց տալ տարբեր ոլորտներում մարդու հաջողակ կամ անհաջողակ լինելու փոխկապակցվածությունը: Միակ տարբերությունը այն է, որ մարդկանց մի մասը շատ ժամանակ և ջանքեր են ծախսում այն զարգացնելու համար, իսկ մյուսները՝ քիչ: Մեկին հուզական ինտելեկտը կարող է տրվել ի ծնե, իսկ մյուսները կարող են աշխատել ինքնուրույն և հասնել ոչ պակաս արդյունքների: Պետք է կատարելագործել հուզական ինտելեկտը՝ անկախ նրանից, թե որքան է այն զարգացած, և տեսությունների բազմազանությունը, նրանցում առկա պրոբլեմները թույլ են տալիս լույս սփռել այս բարդ հոգեբանական կառուցվածքի լրացուցիչ կողմերի վրա:

PROBLEMS IN THEORIES OF EMOTIONAL INTELLECT

MANUKYAN S. T.

CJSC «Sevan Psychiatric Hospital» MH, Sevan, Armenia

ABSTRACT

Emotional Intelligence is a concept that has come to complement the traditional perception of intellect. Emotional Intelligence is a set of flexible skills that can be acquired and perfected throughout life. It is a complex of intellectual capacities that takes part in the process of perception and recognition of the surrounding and personal emotions. The emotional intelligence is in each of us, which is very difficult to explain and understand. It is the ability to discover, use, understand and manage emotions, allowing us to reduce stress, helping to communicate efficiently, overcoming obstacles and resolving conflicts, existing problems. Emotional Intelligence affects many aspects of our everyday life. A person who has a

high level of emotional intelligence can define the emotional status of himself and others, the environment, he is just one with whom people really want to communicate. Talented people are often more successful in work than they are happy in personal life. We will likely recognize people around us who are well educated, but are not socially adapted, they are not successful in communication, and have many problems. The High Intelligence Coefficient (IQ) is not enough for people to be happy and successful in all spheres and in areas that are extremely important to them. The High Intelligence Coefficient (IQ) can help to get an academic education, but emotional intelligence is a proof of how we can overcome the difficulties we face. The intelligence coefficient (IQ) helps one to work in a working environment, but situations such as belonging to a group, communicating building relationships are under the responsibility of emotional intelligence (EQ). Emotional Intelligence is a concept that has come to complement the traditional perception of intellect. Usually we relate intellect to the concepts like mind, education, knowledge, but in reality, emotional intelligence is something else: the person's ability to perceive and apply emotional information that is derived and transmitted through the emotions. Emotional Intelligence is involved in both natural and humanitarian sciences: neurology, psychology, physiology, sociology, philosophy, etc.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Андреева И. Н., Эмоциональный интеллект как феномен современной психологии. Новополюцк: ПГУ. 2011. – 388 с.
2. Гоулман Д., Эмоциональный интеллект. /Д. Гоулман. – М.: АСТ: АСТ МОСКВА. Владимир: ВКТ, 2009. – 478 с.
3. Готтман Д., Эмоциональный интеллект ребенка. /Д. Готтман, Д. Деклер. – М.: Манн, Иванов и Фербер, 2015. – 288 с.
4. Лемберг Б., Эмоциональный интеллект, как разум общается с чувствами. издательство Вектер; СПб.: 2013. – 62 с.
5. Сергиенко Е. А, Ветрова И. И., Тест Дж. Мэйера, П. Сэловея и Д. Карузо. Эмоциональный интеллект. М.: 2010. – 176 с.

ՌԱԶՄԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Մարգարյան Վ. Հ.

Խ. Արոլյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. մարտական գործունեություն, մարտական վարպետություն, հոգեբանական կայունություն, բարոյահոգեբանական վիճակ:

Ռազմական և քաղաքական իրադրության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ տնտեսական ոլորտում, գիտության ու տեխնիկայի ասպարեզում տեղի է ունենում թռիչքաձև զարգացում, որը հանգեցնում է նաև զինված պայքարի նոր միջոցների, ուստի և նոր եղանակների ու հնարների ստեղծման: Ընդհանուր զարգացման հետևանքով տեղի են ունենում տեխնիկական միջոցների գնի էական նվազում ու թվաքանակի սրընթաց աճում, և որպես արդյունք՝ նախկինում միայն ռազմավարական օղակին ստորադասվող ռազմատեխնիկական միջոցները կարող են կիրառվել նաև մարտավարական օղակի հրամանատարների որոշմամբ: Տվյալ գործոնների ազդեցությամբ տեղի է ունենում պատերազմների բնույթի արմատական փոփոխություն: Ուստի հասկանալի է, որ ԶՈՒ-ի անձնակազմի մարտական պատրաստությանը (մարտական վարպետություն, հոգեբանական կայունություն, բարոյահոգեբանական վիճակ) ներկայացվող պահանջները նույնպես փոխվում են: Այս հանգամանքով է պայմանավորված, որ ներկայումս մի շարք պետությունների զինված ուժերում վերանայվում են մարտական գործողությունների վարման ռազմավարական և մարտավարական հիմունքները՝ ժամանակակից ռազմական սպառնալիքների բնույթի հաշվառմամբ: Ընդ որում, տվյալ գործընթացը պարտադրում է ոչ միայն վերանայել մարտական գործողությունների վարման հիմունքները, այլև զինծառայողներ-

րի մասնագիտական և հոգեբանական պատրաստման սկզբունքներն ու մոտեցումները:

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ԱՊՀ բոլոր երկրների, այդ թվում նաև ՀՀ Ձինված ուժերում մասնագիտական պատրաստման գործընթացում կան որոշակի թերություններ: Խոսքը վերաբերում է այն հանգամանքին, որ մասնագետների պատրաստման համակարգում հոգեբանական բաղադրիչի հետին պլան մղված լինելու հետևանքով չի ապահովվում անհրաժեշտ մակարդակի հոգեբանական պատրաստություն բարդ, ոչ ստանդարտ պայմաններում գործունեությանը: Ավելին, ըստ մասնագիտական գրականության վերլուծության արդյունքների, հաստատուն պայմաններում մասնագիտական գործունեության հետազոտությունները հնարավորություն չեն ընձեռում հետազոտողներին պարզելու այն օրինաչափությունները, որոնք անհրաժեշտ են մարտական իրադրության արտակարգ իրավիճակներին մասնագետների հոգեբանական պատրաստման համար:

Իրական պայմաններում իրականացված մեր հետազոտական տվյալների վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ զինվորական գործունեությանը ներկայացվող պահանջների և այդ պայմաններում խնդիրների կատարմանը հոգեբանական պատրաստության միջև առկա է ցայտուն արտահայտված անհամաչափություն, ինչը կարող է հանգեցնել զինվորական գործունեության արդյունավետության մակարդակի անկմանը, առավել ևս՝ մարտական իրադրության արտակարգ իրավիճակներում: Այս համատեքստում կարևոր խնդիրների շարքն են դասվում նեղ ոլորտային (զորատեսակային) հետազոտությունների կատարումը, և ըստ այդմ՝ զինծառայողների գործունեության առանձնահատկությունների, հետևաբար և նրանց գործունեության արդյունավետության վրա ազդող հոգեբանական բաղադրիչների պարզումն ու անձնակազմի հոգեբանական պատրաստման մեթոդաբանության մշակումը: Եթե մենք չունենք ըստ զորատեսակներին բնորոշ առանձնահատկությունների զինծա-

ռայոդ մասնագետի գործունեության համակողմանի գնահատման չափանիշների համախումբ, ապա մենք չունենք ոչինչ, և այս պարագայում անիմաստ են դառնում որոշ նախաձեռնություններ, որոնք իբրև թե ունեն հոգեբանական ուղղվածություն:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում զինվորական հոգեբանության համակողմանի կայացումը պայմանավորված է ՀՀ ԶՈՒ-ում ռազմական գիտության կայացման հետ: Խնդիրն այն է, որ մի շարք մասնագետներ իրավացիորեն զինվորական հոգեբանությունը դիտարկում են որպես հատուկ գիտական իմացության և պրակտիկայի ոլորտ, որի նպատակն է հետազոտել զինծառայողների համատեղ մարտական գործունեության առանձնահատկությունները և հիմնավորել այդ գործունեության արդյունավետության ապահովման մեթոդները: Մասնագետները գիտակցաբար չեն կիրառում «հոգեբանական գիտության բնագավառ» տերմինային բառակապակցությունը, քանի որ զինվորական հոգեբանությունը ինչպես հոգեբանական, այնպես էլ ռազմական գիտության բնագավառ է, և դրանք միմյանցից երբեք տարանջատ չեն եղել և չեն էլ կարող տարանջատ լինել նաև հեռանկարում: Այսինքն՝ կարելի է արձանագրել հետևյալ փաստը, որ զինվորական հոգեբանության պլանաչափ կերպով կայացումն ու հեռահար նշանառությամբ զարգացումը պայմանավորված են ՀՀ-ում ռազմական գիտության կայացմամբ:

Ռազմական գիտության զարգացման ուղղությամբ ներկայումս իր առաջին քայլերն է կատարում ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանը: ՀՀ-ում ռազմական գիտության զարգացմանը միտված գործընթացները կնախորոշեն նաև զինվորական հոգեբանության զարգացման ուղենիշները:

Ներկայիս իրողությունների հաշվառմամբ անհրաժեշտություն է առաջանում մշակելու մասնագիտական գործունեության արդյունավետության և հուսալիության հոգեբանական հետազոտման նոր ծրագրեր, բնականաբար և ռեալ պայմաններում դրանց իրագործման մեթոդաբանություն: Այդ նպատակով անհրաժեշտ է.

1. մշակել մարտական իրադրության արտակարգ իրավիճակներում զինծառայողների մասնագիտական գործունեության հոգեբանական հետազոտման մեթոդաբանություն,

2. հետազոտել և պարզել զինծառայողների այն հոգեբանական բաղադրիչների համախումբը, որոնք պայմանավորում են նրանց գործունեության արդյունավետությունն ու հուսալիությունը մարտական սթրեսի ներգործության պայմաններում:

Մեթոդաբանական ապահովման տեսանկյունից վերը նշված աշխատանքների իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք շաղկապված խնդիրներ, մասնավորապես՝

1. մշակել մարտի հոգեբանական մոդելն ու մարտական իրադրության արտակարգ իրավիճակների մոդելավորման մեթոդը,

2. մշակել և ստեղծել հոգետեխնիկական փորձարկումների սարք:

Այդ խնդիրների համալիր լուծումը հնարավորություն կտա.

1. մոդելավորելու այն առանձնահատուկ իրավիճակները, որոնք առավելագույն նմանակում են մարտական իրադրությունը,

2. հետազոտելու ինչպես զինծառայողների հոգեվիճակով պայմանավորված մասնագիտական-վարքագծային դրսևորումների առանձնահատկությունները, այնպես էլ այն իրադրային գործոնները, որոնք ազդում են մարտական իրադրությունում նրանց մասնագիտական գործունեության վրա,

3. պարզելու գործունեությամբ մասնագետին ներկայացվող առանձնահատուկ պահանջների համախումբը:

Այսպիսով, հոգեբանական հետազոտության նոր մեթոդաբանության կիրառմամբ ստացված արդյունքները հնարավորություն են տալիս վերանայելու ինչպես զորային կառույցում, այնպես էլ ռազմակրթական օջախներում մասնագետների հոգեբանական պատրաստման գործընթացը, ինչը ներկայումս ռազմական հոգեբանության գերակա խնդիրներից մեկն է:

ON SOME PROBLEMS OF MILITARY PSYCHOLOGY

MARGARYAN V. H.

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

The article discusses the methodology of psychological research on the professional activities of the military under extreme conditions of the simulated combat situation in order to create new approaches to providing military personnel of the Armed Forces of the Republic of Armenia with methodological psychological training. From this point of view the set of functionally interrelated problems, solutions and means of their realization are presented.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Զորային կառույցում զինծառայողների մասնագիտական ընտրազատման հարցի շուրջ: «Ռազմական հոգեբանության հիմնախնդիրները» Հանրապետական գիտաժողովի նյութեր (2013 թ. մայիսի 29-30): Եր., 2013, էջ 33, (276 էջ):
2. Иноземцева А. Н., Влияние профессионального самосознания студентов на формирование психологической готовности к профессиональной деятельности. Дис. канд. психол. наук. М.: 2002, 225 с.
3. Маргарян В. Г., К вопросу исследования воздействия психогенных факторов боевой обстановки на профессиональную деятельность военнослужащих//Адаптация и саморегуляция личности. Высшая школа: опыт, проблемы, перспективы: Материалы межвузовской научно-практической конференции. Часть 1. М.: РУДН, 2010, 283 с.
4. Маргарян В. Г., К вопросу о методологическом обеспечении психологической подготовки военнослужащих в вооруженных силах Республики Армения // Личность, семья и общество: вопросы педагогики и психологии: сб. ст. по матер. XLVIII междунар. науч.-практ. конф. № 1(48). – Новосибирск:

- СибАК, 2015, 90 с.
5. Маргарян В.Г., Методологические аспекты моделирования боевых ситуаций в реальных условиях. Современная наука: актуальные проблемы теории и практики. М., 2018, N10.
 6. Червяков Ю. А., Оптимизация профессиональной подготовки курсантов высших военно-учебных заведений связи. Дис. канд. психол. наук. М.: 2002, 208 с.

ՀՀ-ՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆ և ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Մելքումյան Մ. Ֆ.

Խ. Արքայանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. *փախստական, ապաստան հայցող, միգրանտ, սթրես, սթրեսակայունություն, ագրեսիվություն, կոնֆլիկտայնություն, մշակութային շոկ:*

Յուրաքանչյուր պետություն պատասխանատու է իր երկրի քաղաքացիների իրավունքների պաշտպանության համար, սակայն երբ դրանք չեն պաշտպանվում մարդիկ ստիպված լքում են իրենց քաղաքացիության երկիրը: Այլ երկրում պաշտպանության դիմելը մարդու հիմնարար իրավունքներից է, որը հատկապես արդիական է դառնում պատերազմական իրավիճակներում: Մարդկության պատմության ողջ ընթացքում մարդիկ լքել են իրենց բնակավայրը ավելի ապահով կացության վայր գտնելու նպատակով, ուստի կարևոր է հստակ սահմանազատել միգրանտ և փախստական հասկացությունները: Ի տարբերություն փախստականի, միգրանտը կամավոր է լքում իր երկիրը՝ այլ երկրում զբաղվածություն գտնելու, ընտանիքի վերամիավորման կամ ուսման նպատակով և շարունակում է օգտվել իր կառավարության պաշտպանությունից նույնիսկ արտերկրում գտնվելու պարագայում [8, էջ 15]: Փախստականն անձ է, ով գտնվում է իր քաղաքացիության երկրից կամ մշտական բնակության վայրից դուրս, սեփական երկրում ունի ոչ բավարար պաշտպանվածություն, իր ռասայի, կրոնի, քաղաքացիության, սեռական կողմնորոշման որոշակի սոցիալական խմբի պատկանելու կամ քաղաքական կարծիքի հարելու պատճառով, ունի հետապնդվելու հիմնավորված երկյուղ և անկարող է կամ նման երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել տվյալ երկրի պաշտպանությունից [5, էջ 13]: Նախ-

քան փախստականի կարգավիճակ ունենալը անձը միջազգային հանրությանն է դիմում ապաստան հայցողի կարգավիճակով, այնուհետ կամ մերժվում, կամ տրվում է փախստականի կարգավիճակ: Սակայն մինչև կարգավիճակ ստանալը ապաստան հայցողները ևս նոր երկրում օգտվում են իրենց իրավունքների պաշտպանությունից [4, էջ 23]:

Փախստականներ ընդունող պետություններն իրականացնում են մի շարք միջոցառումներ՝ ուղղված փախստականների շահերի պաշտպանությանը, ինտեգրմանը և նրանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացմանը: Փախստականների հետ տարվող աշխատանքում կենտրոնական տեղ է զբաղեցնում սոցիալ-հոգեբանական աջակցությունը, քանի որ նոր հասարակությունում հարմարման արդյունավետությունն ուղակիորեն կապված է նրանց հոգեկան առողջությունից:

Վերջին տասնամյակում Հայաստանում ևս ավելացել է ապաստան հայցողների և փախստականների թիվը՝ կապված պատերազմաքաղաքական բախումների և էթնիկ կոնֆլիկտների հետ: Ներկայումս ՀՀ-ում հիմնականում ապաստան են հայցում Սիրիայից, Իրանից, Իրաքից, Աֆղանստանից, Աֆրիկայից, Ուկրաինայից: 2016 թվականի ապրիլին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած հակամարտությունից հետո մեծ է նաև Թալիշից եկած փախստականների թիվը, թեև նրանք համարվում են ներքին տեղահանվածներ:

Հայաստանը լինելով ՄԱԿ անդամ՝ իրականացնում է մի շարք ծրագրեր՝ ուղղված փախստականների սոցիալ-տնտեսական հարմարմանն ու արդյունավետ կենսագործունեության ապահովմանը: Արդյունավետ ինտեգրումը մեր երկրի առջև ծառայած կարևոր խնդիրներից է, այն ՀՀ-ում իրականացվում է թե պետական մարմինների, թե միջազգային կառույցների, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Փախստականների գրասենյակի կողմից ֆինանսավորվող ՀԿ-ների միջոցով:

Եթե խոսենք փախստականների մոտ առկա հոգեբանական խնդիրների ծագումնաբանության մասին, ապա կարող ենք պայմա-

նականորեն այն բաժանել օբյեկտիվ և սուբյեկտիվ խմբի: Օբյեկտիվ խնդիրներից են լեզվական, կրոնական, մշակութային, սոցիալ-տնտեսական խնդիրները, իսկ սուբյեկտիվ խմբի մեջ մտնում են ապրած տրավմաները, արժեքները, դիրքորոշումները, սթերեսակայունության աստիճանը, մոտիվացիոն համակարգը և այլն: Նմանատիպ խնդիրները դժվարեցնում, իսկ երբեմն էլ նույնիսկ անհնարին են դարձնում ՀՀ-ում նրանց հարմարման գործընթացը: Հարկադիր տեղահանված անձանց մեծամասնությունը իրենց ծագման երկրում բացի ֆիզիկական վնասներից կրում են նաև հոգեբանական լուրջ տրավմաներ, որոնք ավելի են դժվարացնում հարմարման գործընթացը [6, էջ 5]: Բնութագրելով հարմարումը որպես արտաքին ակտիվ յուրացման և ինքնափոխման միջոցով գոյության նոր պայմաններում օրգանիզմի հարմարմանն ուղղված գործընթաց՝ կարող ենք ասել, որ կացության նոր երկրում հարմարման գործընթացում փախստականները հանդիպում են սոցիալ-տնտեսական, մշակութային և հոգեբանական մի շարք խնդիրների [2, էջ 16]: Հարմարման ընթացքում առաջացած վերոնշյալ դժվարություններն ուղղակիորեն ազդում են ՀՀ-ում փախստական դարձած անձանց հոգեկան առողջության վրա: Իր ծագման երկրում գենդերային հիմքով բռնության ենթարկված փախստականների անձն ավելի խոցելի է, ուստի նրանք գտնվում են առանձնահատուկ ուշադրության կենտրոնում, որպես գենդերային բռնության զոհ արձանագրված փախստականների համար իրականացվում է առանձին հոգեբանական աջակցություն և հատուկ դեպքերի վարում: Բռնության զոհերը՝ հատկապես կանայք և երեխաները, ավելի խոցելի և անպաշտպան են: Բռնության զոհ կանանց մոտ մեծ է մեղքի զգացումը, ուստի նրանց հետ հոգեբանական աշխատանքն ուղղված է մեղքի զգացման թուլացմանն ու սեփական անձի հետ տեղի ունեցածի մեջ պատասխանատվության սահմանների հստակեցմանը: Որոշ դեպքերում փախստականի կարգավիճակ ստացած անձը ՀՀ-ում ևս դառնում է խտրականության զոհ, նրա հարմարումը դառնում է անհնարին, ուստի բացառիկ դեպ-

քերում ՄԱԿ-ի կողմից տեղափոխվում է եվրոպական այնպիսի երկիր, որտեղ կան տվյալ անձի ինտեգրման համար անվտանգ և նպաստավոր պայմաններ:

Քանի որ փախստականների մեծամասնությունը Հայաստան են եկել պատերազմական գոտիներից, որտեղ դարձել են ֆիզիկական, հոգեբանական, սեռական բռնության զոհ, ականատես են եղել իրենց հարազատների մահվանը, մեծամասնության մոտ առաջացել է հետտրավմատիկ սթրես: Հետտրավմատիկ սթրեսի դեպքում իրադարձությունները խիստ վտանգավոր բնույթ են կրել, առաջացրել են սեփական կյանքը կորցնելու ուժեղ վախ, սարսափ և անօգնականության զգացում [3, էջ 13]: Հետտրավմատիկ սթրեսի հետևանքով փախստականների մոտ նկատվում են ինչպես դեպրեսիա, ալկոհոլից կախվածություն՝ որպես իրականությունից փախուստի ձև, այնպես էլ՝ հոգեւտմատիկ մի շարք հիվանդություններ: Նմանատիպ դեպքերի մեծամասնությունն ուղղորդվում է հոգեբույժի մոտ: Փախստականների մոտ նկատվում է սթրեսի բարձր մակարդակ, քանի որ շատերն առանձնացած են իրենց ընտանիքներից, չունեն ինֆորմացիա հարազատների մասին և նոր երկրում գտնվում են անորոշ ապագայի սպասելիքներով: Բնութագրելով սթրեսը որպես օրգանիզմի պատասխան ռեակցիա միջավայրի ցանկացած փոփոխության, կարող ենք ասել, որ փախստականների մեծամասնությունը հայտնվում է սթրեսային իրավիճակում, երբ լքում է իր ծագման երկիրը [1, էջ 21]: Սթրեսի հետևանքով փախստականների մոտ նկատվում է փոփոխված վարք, ագրեսիվության կամ ընդհակառակը՝ դեպրեսիայի սուր դրսևորում, կոնֆլիկտային հարաբերություններ շրջապատի հետ: Այն փախստականները ովքեր ունեն այլոց օգնությունը խնդրելու և ստանալու արտահայտված կարողություն ավելի հեշտ են հաղթահարում սթրեսը [7, էջ 2]: Դեպրեսիայի դեպքում արտահայտվում է կենտրոնացման, նոր գործունեության տեսակին անցնելու դժվարություններ, հուսալքություն, կյանքի նկատմամբ հետաքրքրության անկում: Դեպրեսիայի մեջ գտնվող անձինք դժվարությամբ են ընդգրկվում իրենց համար նախատեսված ծրագրերի մեջ:

Ապաստան հայցող և փախստական անձինք ունեն բազային անվտանգության և պաշտպանվածության խնդիր, ինչն իր արտացոլումն է գտնում հարաբերություններում: Հոգեբանական աշխատանքն ուղղված է լինում փախստականների ինքնագնահատականի ադեկվատ բարձրացմանն ու սեփական ես-ի դրական ընկալմանը: Տեղահանված անձանց մոտ նկատվում է նաև տագնապանության բարձր մակարդակ, որը դրսևորվում է վախերի, ներոտիկ կաչուն մտքերի, մշտական անհանգստության ձևով:

Խոսելով ՀՀ-ում ապաստան հայցած փախստականների մասին՝ կարևոր նշանակություն ունի առանձնացնելու ծագումով հայ փախստականներին և այլազգիներին: Ծագումով հայերը համեմատաբար ավելի հեշտ են ինտեգրվում, լեզվական, կրոնական խոչընդոտներ հնարավորինս քիչ են հանդիպում, որը շատ խիստ արտահայտված է արաբ կամ պարսիկ փախստականների դեպքում: Լեզվական, կրոնական, մշակութային տարբերություններն առաջացնում են մշակութային շոկ, որը չհաղթահարելու դեպքում ի հայտ է գալիս սթրես, դեպրեսիա: Մեծանում են հուսալքությունն ու անաշխատունակությունը: Ոչ լեզվակիր փախստականների մոտ առկա է սոցիալական մեկուսացման բարձր մակարդակ, որը հաճախ պայմանավորված է լինում լեզվի, ինչպես նաև ինքնաիրացման դժվարություններով: Կարգավիճակի անորոշությունն առաջացնում է հասարակությունից օտարացվածության զգացում: Շատ կարևոր է ընդունված լինելու պահանջմունքի բավարարումը: Որոշ փախստականներ նույնիսկ, չհարմարվելով միջավայրին, դիմում են ինքնասպանության [9, էջ 13]: Փախստականների կեսից ավելի մոտ նկատվում է սեփական ես-ի ընկալման փոփոխություն, քանի որ իրենց սոցիալական դերը, դիրքը, որոշակի ազգային խմբի պատկանելիության զգացումը միջավայրի փոփոխման հետ կտրուկ փոխվել են և այն արժեքները, դիրքորոշումները, որոնցով սովոր են եղել ապրել, նոր միջավայրում այլևս արդիական չեն: Ուստի, եթե անձն ի վիճակի չի լինում փոխելու սեփական վարքը նրա անձը տուժում է բազմակողմանիորեն, հատ-

կապես ճգնաժամ նկատվում է արժեքներում:

Փախստականների ինտեգրմամբ զբաղվող կազմակերպություններն իրականացվող ծրագրերում հնարավորինս ապահովում են տեղացիների ներգրավվածությունը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին փոխվել են հասարակական որոշ դիրքորոշումներ, և գնալով ավելանում է էթնիկ հանդուրժողականությունը:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ՀՀ-ում ապաստան հայցող և փախստական անձանց հետ իրականացվող հոգեբանական աշխատանքի արդյունքում պարզ է դարձել, որ հոգեբանական խնդիրներն ընդգրկում են նրանց անձի գրեթե բոլոր կողմերը՝ կոգնիտիվ, հուզական, վարքային: Այդ խնդիրների պատճառով էականորեն տուժում են փախստական անձանց հարաբերությունները, ինքնազգացողությունը, որն էլ ուղղակիորեն ազդում է նրանց կյանքի որակի վրա:

SOCIO-PSYCHOLOGICAL PROBLEMS OF REFUGEES AND ASYLUM SEEKERS IN ARMENIA

MELKUMYAN M. F.

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

The article is devoted to the socio-psychological issues of refugees and asylum seekers in Armenia. The article includes results of psychological work with refugees and asylum seekers. It examines the types of psychological problems in the process of adaptation.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Джеррольд Гринберг С., Управление стрессом 7-е- СПб.: Питер, 2002.- 496 с. с. 21.
2. Реан А., Кудашев А. Р., Баранов А. А., Психология адаптации личности, Анализ. Теория. Практика СПб.: 2006. – 479с. с.16.
3. Тарабрина Надежда Владимировна Практикум по психологии посттравматического стресса. - СПб: Питер, 2001. - 272 с: ил. -(Серия «Практикум по психологии»).С.13.
4. A guide to international refugee protection and building state asylum systems Handbook for Parliamentarians N° 27, 2017, Frances Nicholson and Judith Kumin, p. 23.
5. Guidelines on international protection no. 12: Claims for refugee status related to situations of armed conflict and violence under Article 1A (2) of the 1951 Convention and/or 1967 Protocol relating to the Status of Refugees and the regional refugee definitions, p. 13.
6. Mental health of refugees UNHCR/WHO, 1996 World Health Organization Geneva 1996, p. 5.
7. New issues in refugee research Research Paper No. 179. The coping processes of adult refugees resettled in New Zealand, November 2009, p. 2.
8. UNHCR handbook and guidelines on procedures and criteria for determining refugee status under the 1951 Convention and the 1967 Protocol relating to the Status of Refugees Reissued Geneva, December 2011, p. 15.
9. Refugee diversity REFVIEW NUMBER 2, - March 2006, - The UN Refugee Agency, p. 13.

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԱԳԾԻ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Միքայելյան Մ. Ա., Մուրադյան Մ. Ա.

Խ. Արոյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. ագրեսիվ վարքագիծ, քայքայում, հեքիաթաթերապիա, էքստրապունիտիվ, ինտրապունիտիվ, իմպունիտիվ վարք, շտկում:

Երեխաների ագրեսիվ վարքագծի համապարփակ վերլուծությունը հոգեբանական, սոցիալական և մանկավարժական լուրջ հիմնախնդիր է: Ագրեսիան նպատակաուղղված, կործանարար վարք է, որը հակասում է հասարակության մեջ գոյություն ունեցող նորմերին ու կանոններին: Ագրեսիան ենթադրում է գործողություններ, որոնք առաջացնում են կենդանի կամ անկենդան օբյեկտների քայքայում [4]: Ագրեսիայի մասին ամենավաղ տեսական մոտեցումը ներկայացրել է Զ. Ֆրեյդը (1920)՝ ագրեսիվ վարքը համարելով բնածին [9]: Իր աշխատություններում Կ. Լորենցը նշում է, որ ագրեսիվ վարքը սկիզբ է առնում բնագոյից, որը միտված է գոյության պայքարին [6]: Ն. Լևիտովն ագրեսիվության վիճակը նկարագրում է որպես ինքնակառավարումը կորցնելու հետևանքով առաջացած զայրույթի զգացում [5]: Է. Ֆրոմն «ագրեսիա» եզրույթը մեկնաբանում է որպես գործողություն, որը վնաս է պատճառում կամ մտադիր է վնաս պատճառել կենդանուն, անձին, մարդկանց խմբին կամ որևէ անշունչ օբյեկտի [10]: Ըստ Ռ. Բերոնի և Դ. Ռիչարդսոնի, ագրեսիան այնպիսի վարք է, որ անկախ իր դրսևորման ձևից, միտված է վնաս պատճառելու այլ կենդանի օրգանիզմի [1]: Ընդ որում, ագրեսիայի միջոցով հասցված վնասը կանխամտածված, նպատակաուղղված բնույթ է կրում [7]: Ագրեսիան ենթադրում է տարաբնույթ գործողություններ: Մարդիկ ագրեսիվ որևէ մեկին նկարագրելիս նշում են, որ սովորաբար վիրա-

վորում է ուրիշներին, անբարյացակամ է, փորձում է ամեն կերպ հասնել իր նպատակներին՝ հաշվի չառնելով կիրառվող միջոցների անվնաս լինելը [2]: Ըստ Ա. Ռեանի, ագրեսիան շարժառիթավորված վարք է, որի միջոցով վնաս է պատճառվում մեկ այլ օբյեկտի կամ մարդկանց՝ հարուցելով անհարմարություն, լարվածություն, ճնշված վիճակ, դեպրեսիա [8, էջ 16]:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ագրեսիվ վարքագծի դրսևորման հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելու նպատակով իրականացվել է հետազոտություն Լոռու մարզի Մեծ Այրումի միջնակարգ դպրոցում: Ընտրանքը կազմել են 8-10 տարեկան 25 աշակերտներ՝ 15 տղա, 10 աղջիկ: Հետազոտությունն իրականացվել է 3 փուլով: Կիրառվել է ձևավորող գծային գիտափորձ, որի անկախ փոփոխականները թերապևտիկ բնույթի հեքիաթները և ագրեսիվության հաղթահարմանն ուղղված շտկողական վարժություններն են, իսկ կախյալները՝ կրտսեր դպրոցականների ագրեսիվության ուղղվածությունը և մակարդակը: Հետազոտության առաջին փուլում անց են կացվել Բասսի և Դարկի ագրեսիայի ախտորոշման և Ռոզենցվեյգի ագրեսիվության չափման մեթոդիկաները: Երկրորդ փուլում կիրառվել են հոգեշտկողական մեթոդներ՝ հեքիաթաթերապիա և շտկողական վարժություններ: Երրորդ փուլում կատարվել է կրկնակի թեստավորում:

Հետազոտության առաջին փուլում ստացվել են հետևյալ արդյունքները: Ըստ Բասսի և Դարկիի ագրեսիայի ախտորոշման մեթոդիկայի տվյալների՝ ագրեսիայի տեսակներից ամենաուժեղը դրսևորվել են նեգատիվիզմը (երեխաների 25%-ի մոտ) և անուղղակի ագրեսիան (երեխաների 20%-ի մոտ): Նեգատիվիզմը կրտսեր դպրոցականների մոտ արտահայտվում է ընդդիմադիր վարքի տեսքով՝ ուղղված դիմացինի հեղինակությանը: Այն պասիվ դիմադրությունից կարող է վերաճել ակտիվ գործողությունների, պահանջների, հրահանգների: Անուղղակի ագրեսիան դրսևորվում է ոտքերով թխկթխկացնելու, չար կատակների, բամբասանքի, բռնկումների տեսքով: Աղջիկ-

ների և տղաների տվյալների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նեգատիվիզմը բնորոշ է հիմնականում տղաներին (40%), իսկ անուղղակի ագրեսիան՝ աղջիկներին (նույնպես 40%):

Կրտսեր դպրոցականների 24%-ն ունեն վերբալ և ֆիզիկական ագրեսիայի միջին դրսևորումներ: Վերբալ ագրեսիան արտահայտվում է վեճի, աղմուկի, գոռգոռոցի, հայիոյանքի, սպառնալիքի, իսկ ֆիզիկական ագրեսիան՝ ուրիշին ցավ, վնաս պատճառելու ցանկության տեսքով:

Երեխաների մոտ ագրեսիայի տեսակներից ամենաթույլը դրսևորվել են գրգռումը (8%), վիրավորանքը (8%), ինքնաագրեսիան (8%) և կասկածամտությունը (4%): Գրգռվող երեխաներին հատուկ է նույնիսկ չնչին առիթի դեպքում բռնկվելու, խիստ և կոպիտ արտահայտություններ թույլ տալու հակվածությունը: Վիրավորանքը՝ որպես ագրեսիայի դրսևորման ձև, պայմանավորված է զայրույթի, անբավարարվածության զգացողությամբ և ենթադրում է նախանձ, ատելություն շրջապատի նկատմամբ: Աուտոագրեսիան արտահայտվում է սեփական անձի նկատմամբ վնասակար, չար կամ անխիղճ գործողություններ կատարելու միջոցով: Իսկ կասկածամտությունը զուգորդվում է անվստահության և զգուշավորության հետ, և դիրքորոշում կա, որ շրջապատողները տրամադրված են վնաս պատճառելու:

Ռոզենցվեյգի ագրեսիվության չափման մեթոդիկայի տվյալները վկայում են, որ կրտսեր դպրոցականների 56%-ն ունի ագրեսիվության բարձր, 28%-ը՝ միջին և 16%-ը՝ ցածր մակարդակ: 68%-ի մոտ ագրեսիայի ուղղվածությունն էքստրապունիտիվ է, այսինքն՝ նրանց կողմից տրվող ագրեսիվ հակազդումներն ուղղված են դեպի շրջապատը, ֆրուստրացիայի պատճառը համարվում է դիմացինը, և խնդրի լուծման համար նա է պատասխանատու: Ուսումնասիրվողների 4%-ի մոտ ագրեսիայի ուղղվածությունն ինտրապունիտիվ է. մեղադրանքն ուղղված է սեփական անձին, խնդրի լուծումը, սուբյեկտի կարծիքով, ևս կախված է «ես»-ից: 28%-ի մոտ ագրեսիայի ուղղվածությունն իմպունիտիվ է, այսինքն՝ ագրեսիան ուղղված չէ շրջապատող մարդ-

կանց, և մեղքը վերագրվում է իրավիճակին: Այսպիսով, ըստ հետազոտության առաջին փուլի ցուցանիշների, ուսումնասիրվող կրտսեր դպրոցականների մեծամասնության ագրեսիվության մակարդակը բարձր է, ագրեսիայի տեսակներից ամենաուժեղն այս տարիքում դրսևորվում են նեգատիվիզմը և անուղակի ագրեսիան, իսկ ագրեսիայի ուղղվածությունը հիմնականում էքստրապունիտիվ բնույթ ունի:

Հեղազոտության երկրորդ փուլում կազմվել և ներդրվել է շտկողական աշխատանքի ծրագիր, որում ներառվել են ագրեսիվ վարքագծի հաղթահարմանն ուղղված՝ Օ.Վ. Խուխլաևայի, Ն.Ն. Կաշտանովայի և Ե.Ս. Մոսինայի [3] կողմից մշակված շտկողական վարժություններ և թերապևտիկ հեքիաթներ: Մասնակցել են ագրեսիվության ինչպես բարձր, այնպես էլ ցածր մակարդակ ունեցող երեխաներ, քանի որ խմբում նպատակահարմար չէր ընդգրկել միայն ագրեսիվության բարձր մակարդակ ունեցող երեխաների: Այս փուլը տևել է երկու շաբաթ, շաբաթական՝ երկու պարապմունք: Յուրաքանչյուր հանդիպում սկսվել է ողջույնի խոսքով, այնուհետև կատարվել են ակտիվացնող և շտկողական վարժություններ, հաջորդիվ ներկայացվել է թերապևտիկ հեքիաթը և համատեղ քննարկվել խմբի անդամների հետ: Հանդիպումների ընթացքում վարժությունների նախապես ծրագրված հերթականությունը փոփոխությունների է ենթարկվել՝ կախված երեխաների ակտիվության աստիճանից: Այս փուլում երեխաները պայմանականորեն բաժանվել են 2 խմբի՝ ակտիվ և պասիվ վարքագիծ ունեցողների: Ակտիվ են համարվել այն երեխաները, ովքեր հեքիաթաթերապիայի ընթացքում մասնակցել են քննարկումներին, արտահայտել իրենց կարծիքը, հանդիպումների ընթացքում աչքի են ընկել շարժունակությամբ, իմպուլսիվությամբ, իսկ պասիվ՝ նրանք, ովքեր դժվարացել են ինքնուրույն կարծիք արտահայտել, նախաձեռնող չեն եղել, քննարկումներին հազվադեպ են մասնակցել, չեն համարձակվել բարձրաձայնել իրենց մտքերը, բայց ուշադրությամբ լսել են հեքիաթները և իրենց համար համապատաս-

խան եզրակացություններ են կատարել: Հետազոտության առաջին և երկրորդ փուլերի ցուցանիշների համադրությունից պարզվեց, որ ակտիվ վարքագծով երեխաների մոտ գերակշռում են ֆիզիկական և վերբալ ագրեսիան, իսկ պասիվ վարքագծով երեխաների մոտ՝ վիրավորանքը և նեգատիվիզմը:

Հեղազոտության երրորդ փուլում իրականացվել է կրկնակի թեստավորում ձևավորող գծային գիտափորձի արդյունավետությունը, այսինքն՝ ագրեսիվության ուղղվածության և մակարդակի տեղաշարժերը, ստուգելու նպատակով: Հետազոտության առաջին փուլում անցկացված թեստերը շտկողական աշխատանքներից հետո կիրառվել են կրկնակի: Ըստ Բասսի և Դարկիի ագրեսիվության ախտորոշման մեթոդիկայի վերաթեստավորման տվյալների, ագրեսիայի դրսևորումները նվազել են, մասնավորապես, խիստ նվազել են ֆիզիկական, վերբալ, անուղղակի ագրեսիան, նեգատիվիզմը, վիրավորանքը, աուտոագրեսիան: Կասկածամտությունը և վիրավորանքը որոշ աշակերտների մոտ նվազել են, որոշների մոտ՝ մնացել նույն մակարդակում:

Ռոզենցվեյգի ագրեսիվության չափման մեթոդիկայի կիրառման արդյունքները հետևյալն են. եթե մինչ շտկողական աշխատանքների իրականացումը կրտսեր դպրոցականների 68%-ի մոտ ագրեսիան ուներ էքստրապունիտիվ ուղղվածություն, ապա շտկողական աշխատանքներից հետո էքստրապունիտիվ ագրեսիվ ուղղվածություն առկա է 36%-ի մոտ: Ինտրապունիտիվ ագրեսիվ ուղղվածություն նախքան շտկողական աշխատանքն առկա էր երեխաների 28%-ի, իսկ հետո՝ 40%-ի մոտ: Իմպունիտիվ ագրեսիվ ուղղվածությունը սկզբում նկատվում էր երեխաների 4%-ի մոտ, իսկ շտկողական աշխատանքներից հետո՝ 24%-ի մոտ:

Ստացված ցուցանիշները փաստում են, որ շտկողական աշխատանքից հետո ագրեսիվության մակարդակը նվազել է, ինչը վկայում է ձևավորող գիտափորձի արդյունավետ ընթացքի մասին: Հետազոտության արդյունքների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ հե-

քիաթաթերապիան և շտկողական վարժությունները նպաստում են կրտսեր դպրոցականների ագրեսիվության մակարդակի իջեցմանը, ագրեսիվության էքստրապունիտիվ դրսևորումների նվազմանը, ինտրապունիտիվ և իմպունիտիվ դրսևորումների աճին: Թերապևտիկ հեքիաթները և շտկողական վարժություններն արդյունավետ միջոց են կրթական հաստատություններում երեխաների ագրեսիվ վարքագծի շտկման համար: Դրանք կարող են կիրառել հոգեբանները, մանկավարժները, ծնողները: Հեղինակների առաջադրված շտկողական աշխատանքի ծրագիրը ներդրվել է դպրոցում՝ մանկավարժների կողմից հետազայում կիրառվելու նպատակով:

DIRECTION AND MANIFESTATIONS OF AGGRESSIVE BEHAVIOR OF YOUNGER SCHOOLCHILDREN

M. A. MIKAELYAN, M. A. MURADYAN

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

A study was conducted with children of primary school age to study the psychological characteristics of aggressive behavior. The study was conducted in 3 stages. Formative linear experiment was applied. At the first stage of the study, a method for diagnosing the aggression of Bass and Dark and Rosenzweig's frustration test were used. The second stage included psycho-correction methods - fairy tale therapy and corrective exercises. The results of the study show that fairy tale therapy and corrective exercises contribute to a decrease in the level of aggressiveness of younger schoolchildren, a decrease in aggressive extrapunitive manifestations, and also an increase in intrapunitive and impunitive manifestations.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бэрон, Р., Ричардсон, Д. Агрессия. СПб.: Питер, 1997. 336 с.
2. Дубинко Н. А., К проблеме условий и движущих факторов Социально-педагогическая работа. М.: 2010, №4. С.85–92.
3. Каштанова Н. Н., Тренинг конструктивного взаимодействия с агрессивными детьми. Выдана ООО «Инфоурок» 2017.
4. Левитов Н. Д., Психическое состояние агрессии. //Вопросы психологии, 2005. 1972. № 6. С. 168-173.
5. Левитов Н. Д., Фрустрация как один из видов психических состояний. //Вопросы психологии, 1967. № 6. С.118 -129.
6. Лоренц К. З., Агрессия: Так называемое «зло». М.: Генезис, 2007. 272 с.
7. Платонова Н. М., Агрессия. СПб.: Речь, 2007. 336 с.
8. Реан А. А., Изучение агрессивности личности //Реан А.А. Психология изучения личности. СПб., 1999. 288 с.
9. Фрейд З., По ту сторону принципа удовольствия. Харьков: Фолио; М.: АСТ, 2001. 624 с.
10. Фромм Э., Анатомия человеческой деструктивности. М.: АСТ, 1973, 624 с.

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

Նազարյան Ա. Ա.

Խ. Արոլյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. *Տարիքային կարծրատիպ, տարիքային խտրականություն, տարիքային հանդուրժողականություն, կարծրատիպային պատկերացումներ:*

Սոցիալական կարծրատիպերի հիմնախնդրի ուսումնասիրությունը հոգեբանական գիտությունների համակարգում շարունակում է մնալ հրատապ ու արդիական: Տարիքային կարծրատիպերը սոցիալական կարծրատիպերի տեսակներից են և դրանց ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

- տարիքային կարծրատիպերը առաջ են գալիս հասարակության փոխազդեցության արդյունքում և անմիջական ազդեցություն են ունենում մարդկանց միջև հաղորդակցության գործընթացի վրա,
- դրսևորվում են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում,
- հանգեցնում են տարիքային խտրականության (դիսկրիմինացիայի) ձևավորմանը, ինչը բացասական ազդեցություն է ունենում թե՛ առօրյա, թե՛ գործնական, աշխատանքային հարաբերությունների վրա,
- խոչընդոտում են անձի լիակատար ինքնադրսևորմանն ու ինքնիրացմանը:

Հոգեբանական գրականության մեջ գոյություն ունեն տարիքային կարծրատիպերի տարբեր բնորոշումներ:

Ն. Քենթոլը և Վ. Միշելը տարիքային կարծրատիպերը բնորոշում են որպես տարբեր տարիքային խմբերի վերաբերյալ որոշակի

ճանաչողական կատեգորիաներ կամ սխեմաներ, որոնք մարդիկ կիրառում են հասարակական տեղեկատվության մշակման գործընթացում [6]: Ըստ Մ. Օրիի, Մ.Ք. Հոֆմենի և Մ. Հոքինսի, «տարիքային կարծրատիպերը ներառում են ենթադրություններ և ընդհանրացումներ այն մասին, թե ինչպես պետք է դրսևորեն իրենց մարդիկ որոշակի տարիքում և ինչերի կարող են հանդիպել անկախ անհատական տարբերություններից և առանձնահատուկ հանգամանքներից» [9, էջ 166]: Ի.Ս. Կոնը տարիքային կարծրատիպերը բնութագրում է որպես «որոշակի հատկություններ ու հատկանիշներ, որոնք մշակութային միջոցով վերագրվում են համապատասխան տարիքի անձանց և նրանց համար հանդես են գալիս որպես ենթադրվող նորմեր» [2, էջ 423]: Ա. Վ. Միկլյասայի համոզմամբ տարիքային կարծրատիպերը սոցիալական կարծրատիպերի տարատեսակներից են, որոնք արտացոլում են տարբեր տարիքային խմբերի կողմից սեփական և այլ տարիքային խմբերի ընկալման կայուն բովանդակային և արժեքային բնութագրիչները [4]: Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ տարիքային կարծրատիպերը տարբեր տարիքային խմբերին պատկանող մարդկանց արտաքինի, բնավորության գծերի, վարքային դրսևորումների, ֆիզիկական և հոգեկան հատկանիշների ու առանձնահատկությունների վերաբերյալ որոշակի պատկերացումներ են, որոնք բնորոշ են բոլոր տարիքային փուլերին՝ մանկությանը, պատանեկությանը, երիտասարդությանը, հասունությանը և ծերությանը: Տարիքային կարծրատիպերն արտահայտվում են այնպիսի պատկերացումներում, ինչպիսիք են «Բոլոր երեխաները մաքուր հոգի ունեն», «Բոլոր դեռահասները բարդ են», «Հասուն մարդիկ պահպանողական են», «Բոլոր ծերերը հիվանդ են, փնթփնթան և անգործունակ» և այլն:

Տարիքային կարծրատիպերի վերաբերյալ փորձարարական հետազոտությունները սկսվել են 20-րդ դարի 70-ական թթ.-ից: 1970-ականներին Բ. Ռոսենը և Թ. Ջերքլին պրոյեկտիվ մեթոդիկաների օգնությամբ ուսումնասիրեցին մասնագիտական ոլորտում գոր-

ծող տարիքային կարծրատիպերը և եկան այն եզրակացության, որ աշխատանքային ոլորտում հստակ տարբերակում է դրվում՝ երիտասարդ և տարեց աշխատողների հոգեբանական և մասնագիտական առանձնահատկությունների հետ կապված: Տարեց աշխատողներին վերագրվում են այնպիսի բացասական կարծրատիպեր, ինչպիսիք են փոփոխությունների հանդեպ ռիզիկոսությունը, ստեղծագործական ներուժի պակասը, մտածողության և շարժումների դանդաղությունը, նորարարությունների հանդեպ անհետաքրքրությունը, իսկ երիտասարդ աշխատողներին՝ հակառակ հատկանիշներ, ինչպիսիք են ճկունությունը, ստեղծարարությունը, բարձր աշխատունակությունը, նորարարությունների հանդեպ հետաքրքրությունը և այլն [11]:

Ընդհանապես, տարիքային կարծրատիպերի ոլորտում կատարված փորձարարական հետազոտությունների մեծ մասը վերաբերում է տարիքային խտրականության ուսումնասիրությանը: Վերջին տասնամյակների ընթացքում արևմտյան հեղինակների կողմից ստեղծվել են նշված հիմնախնդրի բացահայտմանն ուղղված որոշ մեթոդիկաներ: 2008 թ.-ին Ա. Քլազեի և Ֆ. Քրինգսի կողմից մշակվել է «Գոյություն ունեցող տարիքային խտրականություն հարցարանը», որն ուսումնասիրում է աշխատանքային գործունեության ոլորտում էջիզմի (տարիքային խտրականության) և տարիքային հանդուրժողականության մակարդակները [7]: Տարիքային խտրականության ուսումնասիրությանն են միտված նաև Ա. Քրուսի և Ե. Շմիթի «Տարեց մարդու սոցիալական դերերի հարցարանը» [8], Ե. Փալմորի «Էջիզմի հարցարանը» [10] և Դ. Ռափի, Ս. Վոդանովիչի «Տարիքային խտրականության բազմագործոն հարցարանը» [12]:

Ինչպես վերը նշեցինք, տարիքային կարծրատիպերի ուսումնասիրության մեթոդները բավական սակավ են, և դրանց գերակշռող մասը վերաբերում է էջիզմի և հերոնտոկարծրատիպերի բացահայտմանը, մինչդեռ այլ տարիքային խմբերին առնչվող կարծրատիպերի վերաբերյալ ուսումնասիրություններ գրեթե չկան: Մեր կողմից մշակված մեթոդիկան ուսումնասիրում է տարբեր տարիքային խմբերին վե-

րաբերող կարծրատիպերը և դրանց արտահայտվածության մակարդակը: Մեթոդիկան անվանել ենք «Տարիքային կարծրատիպերի արտահայտվածության գնահատման հարցարան»: Հարցարանի բովանդակային առանցքը կազմում են հինգ տարիքային խմբերը (երեխաներ, դեռահասներ, երիտասարդներ, հասուն տարիքի մարդիկ, ծերեր) և յուրաքանչյուր խմբին հասարակության կողմից առավել հաճախ վերագրվող 7 կարծրատիպային հատկանիշները: Հարցարանն ընդհանուր առմամբ ներառում է 35 հատկանիշ, որոնց օգնությամբ հետազոտվողը գնահատում է վերոհիշյալ 5 տարիքային խմբերի մոտ այդ հատկանիշների առկայությունը: Տարիքային խմբերի ընտրությունը կատարվել է անձի տարիքային փուլերի վերաբերյալ հոգեբանական գրականության վերլուծության հիման վրա: Տարբեր տարիքային խմբերին բնութագրող կարծրատիպային հատկանիշներն ընտրվել են՝ հաշվի առնելով թեմայի վերաբերյալ հոգեբանական հետազոտությունների վերլուծության արդյունքները [1, 3, 5], ինչպես նաև մեր կողմից կատարված փորձարարական հետազոտության արդյունքները: Հետազոտվողներին առաջարկվել է առնվազն 5-6 հատկանիշով բնութագրել համապատասխան տարիքային խմբերի ներկայացուցիչներին՝ ընդհանրական ձևով: Օրինակ՝ «Բոլոր երեխաները ...», «բոլոր դեռահասները ...», «բոլոր հասուն մարդիկ ...» և այլն:

Հետազոտության վերլուծության արդյունքում ընտրվել են տարբեր տարիքային խմբերին բնորոշ կարծրատիպային հատկանիշները: Այսպես, **երեխաներ**՝ անմեղ, չարաճճի, կամակոր, դյուրահավատ, աղմկարար, անխելք, քմահաճ, **դեռահասներ**՝ մեծամիտ, անպատասխանատու, եսակենտրոն, ընդվզող, համառ, ագրեսիվ, ցանկանում են արտասովոր երևալ, **երիտասարդներ**՝ թեթևամիտ, անհեռատես, շուտ հրապուրվող, ակտիվ, հաճույքների ձգտող, անհարգալից, արկածախնդիր, **հասուն մարդիկ**՝ անկախ, աշխատանքի վրա կենտրոնացած, խելացի, կայացած, հեռատես, խրատող, լրջմիտ, **ծերեր**՝ իմաստուն, կոպիտ, շուտ վիրավորվող, նվազ, մոռացկոտ, փնթփնթան, եսասեր:

Ստորև ներկայացնում ենք «Տարիքային կարծրատիպերի արտահայտվածության գնահատման հարցարանի» հարաթերթիկը և արդյունքների վերլուծությունը:

Տարիքային կարծրատիպերի արտահայտվածության գնահատման հարցարան

Հրահանգ. գնահատեք նշված հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը երեխաների, դեռահասների, երիտասարդների, հասուն մարդկանց և ծերերի մեծամասնության մոտ: Յուրաքանչյուր հատկանիշի առկայության դեպքում համապատասխան սյունակում դնել (+) նշանը:

Տարբեր խմբերին բնութագրող հատկանիշների համարները հետևյալն են.

Երեխաների խմբին 1, 4, 8, 11, 16, 20, 25-ը,

դեռահասների խմբին բնութագրող հատկանիշներ՝ 2, 7, 13, 18, 23, 27, 32-ը,

երիտասարդների խմբին բնութագրող հատկանիշներ՝ 3, 9, 12, 21, 26, 30, 35-ը,

հասուն տարիքի մարդկանց խմբին՝ 5, 10, 15, 19, 22, 29, 33-ը,

ծերերի խմբին բնութագրող հատկանիշները՝ 6, 14, 17, 24, 28, 31, 34-ը:

Արդյունքների վերլուծություն: Հատկանիշի առկայությունը գնահատվում է 1 միավորով: 0-12 միավոր՝ տարիքային կարծրատիպերի արտահայտվածության ցածր մակարդակ: 13-24 միավոր՝ տարիքային կարծրատիպերի արտահայտվածության միջին մակարդակ: 25-35 միավոր՝ տարիքային կարծրատիպերի արտահայտվածության բարձր մակարդակ:

Հատկանիշներ		Երեխաներ	Դեռահասներ	Երիտասարդներ	Հասուն մարդիկ	Ծերեր
1	Անմեղ					
2	Մեծամիտ					
3	Թեթևամիտ					
4	Չարածնի					
5	Անկախ					
6	Իմաստուն					
7	Եսակենտրոն					
8	Կամակոր					
9	Անհեռատես					
10	Աշխատանքի վրա կենտրոնացած					
11	Դյուրահավատ					
12	Շուտ հրապուրվող					
13	Ընդվզող					
14	Կոպիտ					
15	Իսելացի					
16	Աղմկարար					
17	Շուտ վիրավորվող					
18	Համառ					
19	Կայացած					
20	Անխելք					
21	Ակտիվ					
22	Հեռատես					
23	Ազրեսիվ					
24	Նվազ					
25	Քմահած					
26	Հաճույքների ձգտող					
27	Վատ սովորություններ ունի					
28	Մոռացկոտ					

29	Իրատող					
30	Անհարգայից					
31	Փնթփնթան					
32	Ցանկանում է արտասովոր երևալ					
33	Լրջմիտ					
34	Եսասեր					
35	Արկածախնդիր					

METHODOLOGY OF DIAGNOSTICS OF AGE STEREOTYPES

NAZARYAN A. S.

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

The article discusses the nature, characteristics and research methods of age stereotypes. A new methodology for studying age stereotypes is presented (Questionnaire for assessing the manifestation of age stereotypes), which reveals the manifestation level of personality age stereotypes with low, medium and high indicators.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Александрова Н. Л., Федорова В. В., ИмPLICITные представления о взрослости // V Съезд ООО «Российское психологическое общество». Материалы участников съезда. Т. 1. – М.: РПО, 2012. – 496 с. – с. 262.
2. Кон И. С., Социологическая психология. — М.: Московский психолого-социальный институт; Воронеж: Издательство НПО «МОДЭК», 1999.— 560 с.
3. Лебедева М. Ю., Интерпретационное поле концепта детство (опыт экспериментального исследования) // Русский язык за рубежом. – 2012. – №5. – с. 50–57

4. Микляева А. В., Возрастная дискриминация как социально- психологический феномен: Монография. - СПб.: Речь, 2009; Часть I - <http://humanpsy.ru/miklyaeva/age>.
5. Микляева А. В., Содержание возрастных стереотипов: эмпирическая типология// http://www.emissia.org/offline/2014/2148.htm?fbclid=IwAR3EDbVaWSsPlqPhqtCK36m8cbGPNq1yag_i2TyMqCivL37rWj2tsCHR2sk.
6. Cantor N., Mischel W., Prototypicality and personality: Effects on free recall and personality impressions //Journal of Research in Personality. - 1979.- Vol. 12.-pp. 4-52
7. Kluge A., Krings F., Attitudes Toward Older Workers and Human Resource Practices // Swiss Journal of Psychology. - 2008. - Vol. 67. - No 1 - pp. 61-64.
8. Kruse A. A., Schmitt E., A multidimensional scale for the measurement of agreement with age stereotypes and the salience of age in social interaction // Ageing & Society. - 2006 (May.). - Vol. 26. - Issue 3. - pp. 393-411.
9. Ory M., Hoffman M. K., Hawkins M., Sanner B., and R. Mockenhaupt, «Challenging aging stereotypes: strategies for creating a more active society» // American Journal of Preventive Medicine, Volume 25, Issue 3, Supplement 2,- 2003, pp. 164–171.
10. Palmore E., The Ageism Survey. First Findings //The Gerontologist. -2001. - Vol. 41. -No5.-pp. 572-575.
11. Rosen B., Jerclee T. H., The Nature of Job-Related Age Stereotypes // Journal of Applied Psychology. - 1976-Vol.61.-No. 2.- pp. 180-183.
12. Rupp D. E., Vodanovich S. J., Crede M., The multidimensional nature of ageism: construct validity and group differences //The journal of social psychology. 2005. Vol. 145. No 3. pp.335-362.

**ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ
ՄԻՋՈՒՆՈՒՄՆԻՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ոսկանյան Կ. Վ.

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. *տնտեսագիտական հոգեբանություն, տնտեսական տուրբուլենցիա, վարք, անհատական և էթնոհոգեբանական գործոններ, արդյունավետ կառավարում:*

Սոցիալական հոգեբանությունը, ի դեմս իր տեսական դրույթների և հետազոտական մեթոդների, լայն կիրառություն է գտել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում և տնտեսության: Ներկայումս այն այլևս ոչ թե զուտ հոգեբանության ճյուղ, այլ միջոլորտային գիտություն է: Սոցիալական հոգեբանության և տնտեսագիտության օրեցօր խորացող համագործակցությունը դրսևորվում է ինչպես միկրո, այնպես էլ մակրոտնտեսագիտական մակարդակներում:

Դեռևս վերջերս շուկայական տնտեսական համակարգի անցած երկրներում, որոնցից է նաև Հայաստանի Հանրապետությունը, ներպետական մակարդակում իրականացվող ցանկացած սոցիալ-տնտեսական միջոցառում հաջողություն կարող է ունենալ միայն այն դեպքում, եթե միջոցառումների բնույթը համապատասխանում է հասարակության պատմականորեն ձևավորված արժեհամակարգին, բարոյաիրավական նորմերին, ավանդույթներին, հասարակական կարծրատիպերին: Հասարակության կողմից նոր տնտեսական հարաբերությունների առանձնահատկությունների համարժեք ընկալումն այն գլխավոր նախապայմանն է, որն անհրաժեշտ է պետության իշխանություններին՝ իրենց վարած տնտեսական քաղաքականության մեջ հաջողելու հարցում: Անցումային շրջանին բնորոշ հիմ-

նախնդիրների լուծումները պահանջում են այնպիսի քայլերի իրականացում, որոնք չեն խոչընդոտի շուկայական տնտեսության պայմաններում տնտեսական գործունեությամբ զբաղվելու բնակչության մոտիվացիայի առաջացմանը և տնտեսվարող սուբյեկտների միջև առողջ տնտեսական հարաբերությունների ձևավորմանը: Անհրաժեշտ է օգտագործել ոչ միայն տարբեր երկրներում կուտակված համապատասխան փորձը, այլև երկրի ներսում կատարել սոցիալ-հոգեբանական հետազոտություններ և տնտեսական քաղաքականությունն իրականացնել՝ հիմնվելով այդ հետազոտությունների արդյունքների վրա: Նման հետազոտությունների իրականացումն, ինչ խոսք, սոցիալական հոգեբանության խնդիր է:

Կիրառական սոցիալական հոգեբանության տեսանկյունից ՀՀ-ում արդիական է դառնում տնտեսության կազմակերպման և կառավարման գործընթացներին առնչվող այնպիսի երևույթների հետազոտումը, որոնք պայմանավորված են պետության ներսում առկա հասարակական միավորների (անհատ քաղաքացիների, ռեֆերենտալին խմբերի, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, էթնոսերի, ազգությունների) հոգեբանական առանձնահատկություններով: Հասարակության տարբեր շերտերի հոգեբանական առանձնահատկությունների հաշվառմամբ իրականացվող տնտեսական քաղաքականությունը կարող է նպաստել մեր երկրում ներպետական տնտեսական ներդաշնակ հարաբերությունների ձևավորմանը և տնտեսվարող սուբյեկտների կողմից այդ հարաբերություններով պայմանավորված արդյունավետ տնտեսական վարքի դրսևորմանը: Այն իր հերթին կարող է կանխել տնտեսական հենքի վրա առաջացող և անտազոնիստական տարրեր պարունակող ներհասարակական բացասական երևույթների դրսևորմամբ ուղեկցվող սոցիալական շերտավորման գործընթացը՝ զերծ պահելով հասարակությանը քաղաքական ցնցումներից:

Տնտեսական վարքի դրսևորումների վերաբերյալ սոցիալ-հոգեբանական բնույթի հետազոտություններին նվիրված առաջին աշխատ-

տությունները հրատարակվեցին 20-րդ դարի սկիզբներին, որոնք հետագայում հիմք դրեցին հոգեբանության այնպիսի միջոլորտային ճյուղի զարգացմանը, ինչպիսին է տնտեսագիտական հոգեբանությունը: Դրանցից էին արևմտյան սոցիալական հոգեբանության հիմնադիրներից՝ ֆրանսիացի գիտնական Ժ. Տարդի և նրան հաջորդած Զ. Կատոնի, Հ. Բեքլերի, Տ. Վերլենի, Զ. Կոմմոնսի, Զ. Քլարկի և այլոց աշխատությունները: Արդյունքում, 20-րդ դարի 80-ականներին ձևավորվեցին տնտեսագիտական հոգեբանության տարբեր դպրոցներ (գերմանական, անգլիական, ամերիկյան, շվեյցարական, հետագայում՝ նաև ռուսական), որոնց ներկայացուցիչների (Ժ. Տիրոլ, Մ. Ռաբին, Դ. Կահնեման, Ա. Տվերսկի, Պ. Սլովիկ, Ա. Կիտով, Օ. Դեյնեկա, Վ. Սոկոլինսկի, Վ. Պոզնյակով, Ա. Կարնիշև, Վ. Պասիպանով, Ա. Վերիգին, Ա. Ժուրավյով և այլք) հետազոտություններում [2, 3, 4 և այլն] մեծ տեղ էր հատկացվում սպառողների և արտադրողների տնտեսական վարքի այն դրսևորումներին, որոնք պայմանավորված են նրանց պահանջմունքներով, ակնկալիքներով, ընտրանքներով, փոխհարաբերություններով: Սկզբնական շրջանի հետազոտությունները ելնում էին բիևնոլոգիստական՝ «ստիմուլ-ռեակցիա» կոնցեպտի վրա հենված «առավելագույն արդյունավետության» տնտեսագիտական սկզբունքից: Այս համատեքստում տնտեսական վարքի արդյունավետության չափանիշ համարելով նվազագույն միջոցներով առավելագույն շահույթ ստանալու մարդկային բնական մղումը՝ անհատի և սոցիալական խմբերի տնտեսական վարքի մեխանիզմները նույնականացվում էին հաշվիչ մեքենաների՝ ամբողջական տեղեկատվության վերլուծության հիման վրա իրականացվող գործողությունների մեխանիզմների հետ: Սակայն հետագա սոցիալ-հոգեբանական հետազոտությունները ցույց տվեցին, որ հասարակական սուբյեկտների տնտեսական վարքի և հաշվիչ մեքենաների գործողությունների մեխանիզմները բնավ նույնական չեն: Ավելին, պարզվեց, որ տնտեսական սուբյեկտների վարքի հիմքում միշտ չէ, որ ընկած են կոգնիտիվ այնպիսի գործողությունները, որոնց նպատակը զուտ «չոր հաշ-

վարկների» վրա հենված առավելագույն եկամուտների ստացումն է: Պատահական չէ, որ մինչև XX դարի 90-ականների վերջը տնտեսագիտության տեսության մեջ ակտիվորեն զարգանում էր ամերիկացի տնտեսագետ Հ. Սայմոնի կողմից առաջադրված «սահմանափակ արդյունավետության» տեսությունը [5], որում մաթեմատիկական ճշգրիտ հաշվարկների վրա հենված ավանդական սուբստանցիոն արդյունավետության փոխարեն առաջ էր քաշվում «գործողությունների արդյունավետության» կոնցեպտը: Վերջինիս հիմքում տնտեսական սուբյեկտի (արտադրողի կամ սպառողի) կողմից այնպիսի լուծումների որոնումն էր, որոնք ի վիճակի են ապահովելու նրան բավարար և ձեռնտու արդյունքով: Այստեղ որպես գործոն բացահայտ ձևով հաշվի էր առնվում նաև անհատի ներքին կարողությունների (հիշողության, հաշվողական ընդունակությունների, գործողություններ կատարելու արագության, որոշումների ընդունման անհատական առանձնահատկությունների) սահմանափակ լինելը:

Կոգնիտիվ հոգեբանության ոլորտում հետագա հետազոտությունների արդյունքները տնտեսագետներին բերեցին այն համոզման, որ տնտեսական գործընթացներում ամեն ինչ չէ, որ իրականանում է արդյունավետության սկզբունքից բխող դիրքորոշումների և օրինաչափությունների հիման վրա, և որ տնտեսական վարքի դրսևորումների վրա դոմինանտ ազդեցություն կարող են ունենալ նաև հոգեբանական գործոնները: Տնտեսագետներն սկսեցին հաշվի նստել այն իրողության հետ, որ տնտեսական համակարգերում մարդը պետք է դիտվի ոչ միայն որպես տնտեսական հարաբերությունների ազդեցությունը կրող օբյեկտ, այլ նաև սուբյեկտ, ով իր անհատական հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված տնտեսական վարքով, կարող է լուրջ ազդեցություն ունենալ տնտեսական համակարգերի ներսում ընթացող գործընթացների վրա: Տնտեսագիտական տեսության ներսում աստիճանաբար ձևավորվեց այն տեսակետը, որ տնտեսական հիմնախնդիրները չի կարելի դիտարկել դրանց հոգեբանական նախադրյալներից կտրված: Ծնվեցին տար-

բեր տնտեսագիտական տեսություններ, իսկ դրանց ներսում՝ ուղղություններ («ռիսկային հեռանկարների», «վարքագծային տնտեսագիտության», «հեռանկարների տեսության» և այլն), որոնցում տնտեսական վարքն այս կամ այն չափով դիտվում էր որպես հոգեբանական գործոններով պայմանավորված եզրույթ: Կոգնիտիվ հոգեբանության հարցերով զբաղվող գիտնականների կողմից՝ որպես փորձարարական հետազոտության միջոց շրջանառության մեջ դրվեցին $[(x_1, p_1); (x_2, p_2); \dots; (x_n, p_n)]$ «ռիսկային հեռանկար» և

$$U(\bar{x}) = \sum_{i=1}^n u(x_i) p_i \text{ «ակնկալվող օգտակարության ֆունկցիոնալ» մա-}$$

թեմատիկական հասկացությունները [1, 6], որոնց օգնությամբ հնարավոր եղավ հետազոտել տնտեսական սուբյեկտների վարքի մաթեմատիկական մոդելները՝ ելնելով այդ մոդելների բնութագրիչ ֆունկցիաների վարքից և վիճակագրական թվային բնութագրիչներից: Տնտեսագիտական հոգեբանության ներսում լայն թափ ստացան այնպիսի հետազոտությունները, որոնք նվիրված են տնտեսական սուբյեկտների վարքի մոդելավորման հիմնահարցերին: Այսպես, սկսած 20-րդ դարի վերջերից տնտեսության կազմակերպման և կառավարման արդիականացման գործնական խնդիրներով պայմանավորված՝ տնտեսագիտական տեսություններում մեծ տեղ սկսեցին հատկացնել այնպիսի հետազոտություններին, որոնք առնչվում են տնտեսական սուբյեկտների հոգեբանական գործոններով պայմանավորված վարքի տարատեսակ դրսևորումներին: Այսօր ևս վիճակագրական տվյալների վերլուծություններից ելնելով՝ մաթեմատիկական մեթոդների գործադրմամբ կառուցվում, դիտարկվում են տնտեսական վարքի զանազան ստոխաստիկ մոդելներ, որոնց բնութագրիչ ֆունկցիաների վարքով պայմանավորված՝ փորձեր են արվում տեսական մակարդակում մշակել տնտեսության կառավարման արդյունավետ մեխանիզմներ: Այս ամենի արդյունքում հոգեբանական գիտության մեջ արդիական են դարձել այնպիսի հետազոտությունները, որոնք նվիր-

ված են տնտեսական սուբյեկտների անհատական և էթնոհոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված տնտեսական վարքի մոդելների կառուցմանը, տնտեսական վարքի վրա հոգեբանական գործոնների ազդեցությունների վերլուծությանը: Պարզ է դառնում, որ տնտեսագիտական հոգեբանությունը, որպես միջոլորտային գիտություն, իր մեջ միավորում է ինչպես տնտեսագիտական, այնպես էլ սոցիալ-հոգեբանական գիտություններում առկա տեսական դրույթները, մեթոդաբանական սկզբունքներն ու մոտեցումները, փորձարարական հետազոտությունների արդյունքները: Ելնելով ՀՀ-ում հոգեբանական և տնտեսագիտական մտավոր ներուժի առկայությունից՝ վստահաբար կարելի է ասել, որ տնտեսագիտական հոգեբանության զարգացումը ՀՀ-ում անհրաժեշտություն է և մեծ հեռանկարներ ունի: Կարելի է հետազոտել տնտեսավարող սուբյեկտների ընկալման և գնահատման գործընթացների, մոտիվացվածության, վարքի և աշխատանքային գործունեության վրա անհատական-հոգեբանական և էթնոհոգեբանական այն գործոնների ազդեցությունները, որոնք կարող են պայմանավորել հասարակության յուրաքանչյուր անդամի ոչ միայն հասարակական-տնտեսական կյանքին ադապտացվելու, այլև տնտեսությունը զարգացնելու և այն արդյունավետ կառավարելու խնդիրները: Հոգեբանական երևույթները դիտելով որպես տնտեսության զարգացման վրա ազդող պատճառներ՝ փորձարարական ճանապարհով կարելի է պարզել, թե՛

- որոնք են սոցիոմշակութային և էթնոհոգեբանական այն հիմնական գործոնները, որ կարող են երկրում ձևավորել դասական հիմաստով շուկայական տնտեսությանը բնորոշ ներպետական տնտեսական հարաբերություններ և տնտեսական սուբյեկտների մեջ դրանց վրա հենված տնտեսական գործունեություն ծավալելու գիտակցական մոտիվացիաներ,

- ինչպիսի ազդեցություն կարող են ունենալ ողջ հասարակության տնտեսական վարքի (հետևաբար և՛ պետության տնտեսական քաղաքականության) վրա հասարակական յուրաքանչյուր միավորի

(անհատի, ռեֆերենտային խմբի, սոցիալական շերտի, էթնիկական միավորի) անհատական և էթնոհոգեբանական առանձնահատկությունները,

- որն է մեր հասարակության հոգեբանական առանձնահատկություններին համապատասխանող «արդյունավետ տնտեսական վարքի» այն համահասարակական մոդելը, որի թվային բնութագրիչներից ելնելով՝ կարելի է առաջանցիկ վիճակագրական հետևություններ կատարել երկրի տնտեսության զարգացման հեռանկարների և ուղղությունների վերաբերյալ:

PROSPECTS FOR THE DEVELOPMENT OF ECONOMIC PSYCHOLOGY AS AN INTERDISCIPLINARY SCIENCE IN THE REPUBLIC OF ARMENIA

VOSKANYAN K. V.

International Scientific Educational Center of the National Academy of Sciences of Armenia, Yerevan, Armenia

ABSTRACT

The article emphasises the importance of the development of economic psychology in the Republic of Armenia as a branch of social psychology and interdisciplinary science. In this context it's necessary to conduct such experiments of socio-psychological nature, the results of which can be used in the development processes and effective management of the economy in the country.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Белянин А. В., Математическая психология как раздел экономической теории. //«Психология». Журнал Высшей школы экономики, 2004, т. 1, № 3, с. 106-128.
2. Беккер Г., Экономический анализ и человеческое поведение// Человеческое поведение: экономический подход. Избранные труды по экономической теории. М.: Изд-во ГУ ВШЭ, 2003. 672 с.
3. Журавлев А. Л., Экономическая психология в контексте современной психологической науки / А. Л. Журавлев. Проблемы экономической психологии. М.: Изд-во ИП РАН, 2004. с. 3-24.
4. Пасыпанова О. С., Экономическая психология: психологические аспекты поведения потребителей. Монография. Калуга: Изд. КГУ им. К.Э.Циалковского, 2012, 296 с.
5. Саймон Г. А., Рациональность как процесс и продукт мышления. /THESIS, 1993, вып. 3, с. 16-38. (Herbert A. Simon. Rationality as Process and as Product of Thought. Richard T. Ely Lecture //© American Economic Review, May 1978, v. 68, no. 2, p.1-16. American Economic Association, 1978, Перевод д.э.н. К. Б. Козловой и М. А. Бланко.
6. Kahneman D., Tversky A. Prospect Theory: An Analysis of Decision under Risk. J. Econometrica. V. 47. No. 2 Mar., 1979, pp. 263-291.

**ԼԱՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏՈՂԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՀԱՇՎԱՌՄԱՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Պեղորոսյան Ռ. Հ, Գևորգյան Հ. Մ, Գևորգյան Ա. Գ.
Խ. Արոյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. *լարված իրավիճակներ, մարդկային ռեսուրսներ, ներուժ, ծառայողական խնդիրներ, ֆիզիոլոգիական, հոգեբանական պատրաստականություն:*

Ծայրահեղ պայմաններում աշխատելու ընդունակ ոստիկանության աշխատակիցների պատրաստման խնդիրը միշտ եղել է արդիական, սակայն այն առավել արդիական է դարձել վերջերս, քանի որ ավելացել է այնպիսի աշխատակիցների պահանջը, ովքեր կարող են հակաահաբեկչական գործողություններ իրականացնել և կատարել մարտական առաջադրանքներ ռազմական բախումների տարածքում: Իրենց առջև դրված նպատակին հաջողությամբ հասնելու համար աշխատակիցներն ստիպված են լինում կատարել ծայրահեղ բարդ, հոգեբանական և ֆիզիկական ծայրաստիճան լարում պահանջող գործողություններ, որոնք իրականացնելու համար անհրաժեշտ է հոգեբանական բոլոր հնարավորությունները հավաքագրել և ինքնակառավարման ունակություններ դրսևորել:

Ծայրահեղ իրավիճակի հաղթահարման հնարավորությունը կապված է մի այնպիսի հասկացության հետ, ինչպիսին անհատի ներուժն է, որն իրենից ներկայացնում է անհատի ընդհանուր գործունեությունը և հարմարվողական վարքագծի դրսևորումներն ապահովող կառուցվածքային և ֆունկցիոնալ տարբեր պոտենցիալներ: «Մարդկային ռեսուրսներ» (HR) հասկացությունը բավականին շատ է օգտագործվում, սակայն այն դեռևս լիարժեք մշակված չէ, և այդ ռեսուրսները՝ որպես հոգեվիճակի կարգավորման գործոն, քիչ են ուսումնասիրված [1, էջ 223]:

Ներքին գործերի աշխատակիցների համար անձնական ռեսուրսների բացահայտման և օգտագործման խնդիրն արդիական է, քանի որ նրանք միշտ պետք է կարողանան ցանկացած պայմաններում վերահսկել իրենց վարքը և ինքնուրույն կառավարել իրենց հոգեբանական ռեսուրսները: Ծայրահեղ պայմաններում իրենց առջև դրված նպատակների հաջող իրականացման նպատակով աշխատակիցների հոգեկան վիճակների կառավարման հետ կապված՝ ոստիկանական աշխատանքի ոլորտում որոշակի փորձ է կուտակվել: Սակայն ներկայումս այս խնդրի վերաբերյալ գրականությունն այդքան էլ մատչելի չէ, քանի որ այն աշխատությունները, որոնց հետ հնարավոր է ծանոթանալ, վերաբերում են ծայրահեղ պայմաններում ոստիկանության աշխատակիցների կողմից գործողությունների իրականացման գործնական պատրաստականությանը: Լարված պայմաններում մարդկանց կողմից գործողությունների իրականացման պատրաստականության հետ կապված հարցերին անդրադարձել են Մ. Ի. Դյաչենկոն, Լ. Ա. Կանդիբովիչը, Վ. Ա. Պոնոմարենկոն և այլ հեղինակներ, ովքեր կարծում են, որ լարված իրավիճակը սուբյեկտի համար դժվար խնդրի ի հայտ գալն է՝ ծանր հոգեկան վիճակի առկայությամբ [2, էջ 5]:

Ժամանակակից պայմաններում ՀՀ ոստիկանության աշխատակիցները պատասխանատու խնդիրներ են լուծում բարդ հոգեբանական գործոնների (վտանգ, կյանքի հետ կապված ռիսկ, ֆիզիկական ծանրաբեռնվածություն, արագ փոփոխվող իրավիճակների վերլուծության անհրաժեշտություն և այլն) առկայության պայմաններում: Ծառայության առանձնահատկությունը ոստիկանության աշխատակիցներից պահանջում է ֆիզիկական և հոգեբանական հնարավորությունների հավաքագրում: Այդպիսի լարված իրավիճակներում որոշ աշխատակիցների մոտ կարող են կտրուկ իջնել անհապաղ գործողություններ ձեռնարկելու պատաստականությունը, առաջ գալ լարվածություն, վախ կամ հուզական այլ վիճակներ, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ օպերատիվ գործողությունների ձեռնարկման և իրականացման վրա:

Պրակտիկան ցույց է տալիս, որ չնայած աշխատակիցները պարբերաբար մարզվում և պատրաստվում են ծայրահեղ իրավիճակներում գործողություններ ձեռնարկելուն, սակայն գործնականորեն նրանք չեն կարողանում ամբողջովին իրականացնել իրենց մասնագիտական փորձը: Արտակարգ իրավիճակներում առաջացող բացասական հույզերի պատճառով աշխատակիցը չի կարողանում իր հոգեբանական ռեզերվները դրսևորել [3, էջ 4]: Աշխատանքի հոգեբանության մեջ հոգեկանի գործառնական պահուստները (ռեզերվները) ուսումնասիրվել են բարդ օպերատորական գործունեության իրականացման ընթացքում՝ ուշադրության կազմակերպման մոդելների հիման վրա: Ֆունկցիոնալ ռեզերվների հետ կապված խնդիրը դեռևս զարգացում չի ստացել: Ռեզերվները, որպես հոգեվիճակի կարգավորման գործոն և որպես նրա զարգացման չափի միավոր, քիչ են ուսումնասիրվել [3, էջ 4]:

Սահմանենք ներքին գործերի աշխատանքային գործունեության մեջ արտակարգ իրավիճակի աշխատանքային հասկացությունը: Դեռ այն իրավիճակն է, որն ի հայտ է գալիս ծառայողական պարտականությունների իրականացման ընթացքում, աշխատակցի կողմից սուբյեկտիվորեն ընկալվում է որպես բարդ ու վտանգավոր, առաջ է բերում հոգեվիճակի փոփոխություններ և պահանջում օրգանիզմի ռեսուրսների առավելագույն մոբիլիզացում:

Արտակարգ իրավիճակներին հակազդելու հնարավորությունը ներառում է հետևյալ բաղադրիչ մասերը. ֆիզիոլոգիական, հոգեբանական պատրաստականություն (ակտիվ գործունակ վիճակ, գործողության իրականացման համար բոլոր ուժերը և հնարավորությունները մոբիլիզացնելու ունակություն):

Անհրաժեշտ է, որ ներքին գործերի աշխատակիցն ունենա նախնական և բավական բարձր հոգեբանական պատրաստականություն, որ թույլ կտա լրացնել տեղեկատվության պակասը: Հոգեբանական պատրաստականության համար անհրաժեշտ է իրականացնել այնպիսի մարզումներ, որոնք կնպաստեն արագ մտածողությամբ

յան զարգացմանը և կիռւշեն, թե ինչպես կարելի է տեղեկատվության պակասի դեպքում օգտագործել նախկին փորձը և դրական արդյունքի հասնել:

Ներքին գործերի աշխատակիցը պետք է պլանավորի իր գործողությունները՝ հաշվի առնելով ծայրահեղ իրավիճակների առաջ գալու հավանականությունը, երբ անհրաժեշտություն կլինի փոխել նպատակային ուղղվածությունը:

Օպտիմալ արդյունքի հասնելու համար ոստիկանության աշխատակիցը պետք է արտակարգ իրավիճակի վերահսկողության զգացում ունենա: Հաճախ գտնվելով նման իրավիճակներում՝ հարկ է, որ նա մշակի համապատասխան հակազդեցության հմտություններ և մորբիլիզացնի իր ներքին ռեսուրսները: Այստեղ մեծ է աշխատակցի աշխատանքային փորձի նշանակությունը և նրա հոգեբանական պատրաստակամությունը: Շատ կարևոր է աշխատակցի՝ սեփական ուժերի վրա վստահ լինելու հանգամանքը, որին նպաստում է դրական փորձի առկայությունը: Արտակարգ իրավիճակներում աշխատակցի վիճակի վրա դրական ազդեցություն է գործում լավատեսության զգացողությունը: Այն օգնում է բոլոր ռեսուրսների հավաքագրմանը:

Այսպիսով, ռեսուրսները անհատի հնարավորություններն են, որոնք իրենց մեջ ներառում են օրգանիզմի և հոգեկան կառույցի հնարավորությունները: Համապատասխանաբար, ներքին գործերի մարմինների աշխատակիցների ռեսուրսային վիճակն էլ նրանց անձնական հնարավորությունների հավաքագրման վիճակն է:

Հաշվի առնելով ոստիկանության ոլորտում առկա աշխատանքային առանձնահատկությունները՝ կարելի է եզրակացնել, որ արտակարգ իրավիճակում աշխատակցից պահանջվում է հավաքագրել իր անհատական հնարավորությունները: Դա անհրաժեշտ է ինչպես ծառայողական խնդիրները կատարելու, այնպես էլ արտակարգ իրավիճակի պայմաններում աշխատակցի վիճակի օպտիմալացման և նրա անձնական անվտանգության ապահովման համար:

PSYCHOLOGICAL PROBLEMS OF THE ACTIVITIES OF OFFICERS OF INTERNAL AFFAIRS IN EXTREME SITUATIONS

PETROSYAN R. H., GEVORGYAN H. M., GEVORGYAN A.G.

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

The article is devoted to the psychological characteristics and problems of the activities of officers of internal affairs in extreme conditions. An important place here is given to the complex of human resources, as one of the most significant factors in the regulation of the psychological state of a person.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бодров В. А., Информационный стресс. Учебное пособие для вузов. – М.: ПЕР СЭ, «Современное образование», 2000. 352 с.
2. Дьяченко М. И., Готовность к деятельности в напряженных ситуациях: психологический аспект / М. И. Дьяченко; автор Л. А. Кандыбович, В. А. Пономаренко. – Минск: «Университетское», 1985. 208 с.
3. Туманов В. Д., Психология готовности сотрудника органов внутренних дел к действиям в экстремальных условиях: Лекция.- Домодедово: РИПК МВД РФ. 1993. 40 с.

ՆՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ՝ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՀԱՐՄԱՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՓՈՒԼԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Պեպրոսյան Ռ. Հ, Գևորգյան Հ. Մ.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. նորակոչիկներ, զինծառայություն, հարմարում, բացասական դիրքորոշումներ, սոցիալ-հոգեբանական դերեր, սոցիալ-հոգեբանական կարգավիճակ:

Տարածաշրջանում ստեղծված բարդ և անկայուն ռազմաքաղաքական իրավիճակում, ազգային ինքնության և պետականության պահպանման ներկա ժամանակաշրջանում մեր պետության անվտանգության համար կարևոր նշանակություն ունի մշտապես մարտունակ բանակի առկայությունը: Այն հնարավոր է, եթե ՁՈՒ-ի համար կարևոր նշանակություն ունեցող գիտական նվաճումները շարունակաբար ներդվեն պաշտպանության ոլորտ: Անշուշտ հոգեբանության մեջ որոշ հիմնախնդիրներ բացահայտում են արտակարգ իրավիճակներում մարդկային ներուժի ուղիները:

Բանակային կենսակերպին հարմարումը բարդ և բազմակողմանի գործընթաց է, որի ընթացքում զինծառայողները դրսևորում են ֆիզիկական և հոգեբանական հարմարվողականություն, փորձում են մշակել վարքի նոր մոդելներ, որոնց միջոցով կարող են հաղթահարել զինվորական ծառայության ընթացքում առաջ եկած դժվարություններն ու խնդիրները:

Հարմարումը հոգեբանական գրականության մեջ հանդես է գալիս հետևյալ տեսակներով.

✓ կենսաբանական (հարմարումը կենսական պայմաններին՝ ցրտին, տապին, սննդակարգի և քնի ռեժիմի փոփոխությանը, ֆիզիկական ծանրաբեռնվածությանը),

✓ հոգեբանական (հոգեկան գործընթացների, վիճակների և հատկությունների փոփոխություններ, այնպիսի գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերում, որը կնպաստի զինծառայողի գործունեության արդյունավետությանը),

✓ սոցիալ-հոգեբանական (նոր դերերի և կարգավիճակի ստանձնում, նոր միջանձնային փոխհարաբերություններ. անձն անցնելով զինվորական ծառայության, պետք է հարմարվի զինվորական նոր խմբին, պետք է մշակի վարքի այնպիսի մոդելներ, որոնք չեն հակասի բանակում առկա օրենքներին, կանոններին, նորմերին, և որոնք կնպաստեն բանակային կյանքին նրա արագ ադապտացմանը) [2, 5]:

Զինվորական ծառայությանը զորակոչիկների սոցիալ-հոգեբանական հարմարումը այնպիսի ներհոգեկան հակազդումների համակարգ է, որը որոշում է անձնավորության նպատակահարմար վարքն ու արդյունավետ փոխգործունեությունն իր էությանը հուզածին բնույթ ունեցող միջավայրի հետ [1]: Զինվորական գործունեությունն ունի իրեն բնորոշ առանձնահատկությունները, որոնք էլ պայմանավորում ԶՈւ-ի շարքերը համալրող զինակոչիկների սոցիալ-հոգեբանական հարմարման առանձնահատկությունները և դրան խանգարող գործոնները:

1-ին փուլ- նախազորակոչային տարիք և զինվորական ծառայության սկզբնական ամիսներ (մինչև 6 ամիս):

Մինչև բանակ զորակոչվելը պատանին ապրում էր սովորական առօրյայով, ուներ ընտանիք, տուն, ընկերներ, սիրված էր հարազատների կողմից, բավարարված էին նրա հիմնական կենսական պահանջմունքները և ահա 18 տարին լրանալուն պես նա զորակոչվում է բանակ և անցնում զինվորական ծառայության:

Զինվորական ծառայությունը շրջադարձային իրողություն է պատանու կյանքում, քանի որ իր համար սովորական և անվտանգ քաղաքացիական կենսակերպը մեկ օրում կրում է լուրջ փոփոխություններ, ինչը ակնկալում է նորովի հարմարվելու և ինքնադրսևորվելու անհրաժեշտություն:

Հարմարման տեսանկյունից այս փուլի սկզբնական շրջանն հիմնականում ունի ճանաչողական բնույթ. պատանին դեռևս չունի հստակ պատկերացում ծառայության մասին: Զինծառայության մասին խոսելիս պատանու հոգեկանում առաջանում է վախի, լարվածության, տագնապի զգացում, անորոշություն ապագայի նկատմամբ: Այս հակասական հույզերը ցրելու նպատակով պատանին փորձում է ամեն կերպ հարազատներից, զորացրված ընկերներից և բարեկաններից տեղեկություններ հավաքել բանակում առկա կենսակերպի, միջավայրի, գործունեության կազմակերպման մասին, հոգեպես նախապատրաստվելով բանակային կյանքին: Սակայն ստացված տեղեկությունները հիմնականում լինում են խեղաթյուրված և չեն համապատասխանում իրականությանը, ինչի արդյունքում պատանու մոտ կարող են ձևավորվել բացասական դիրքորոշումներ և պատկերացումներ զինծառայության վերաբերյալ: Ահա դրանցից մի քանիսը.

✓ Բանակում սարսափելի է և պետք է ազատվել ծառայությունից: Այս բացասական դիրքորոշման պատճառով պատանու մեջ ձևավորվում են սխալ պատկերացումներ զինվորական ծառայության վերաբերյալ, ինչը նպաստում է նորակոչիկի դժվար հարմարմանը: Այն ավելացնում է պատանու տագնապը՝ թույլ չտալով տեսնել զինվորական ծառայության դրական կողմերը:

✓ Բանակում պետք է դիմանալ, քանզի այն երկու տարին անիմաստ ժամանակի կորուստ է: Սա շատ վնասակար դիրքորոշում է, քանի որ թույլ չի տալիս ծառայությունը իմաստավորել և կայանալ՝ որպես զինծառայող, կայացած տղամարդ:

✓ Բանակը դաժան է և հաշվի չի առնում մարդու հոգեկան ապրումները: Այս դիրքորոշումը վտանգավոր է այնքանով, որքանով նորակոչիկը իր հույսն ու պատասխանատվությունը զցում է արտաքին գործոնների վրա, և այդ դեպքում արդեն դժվարանում է զինծառայությանը նրա արագ հարմարման գործընթացը:

✓ Եթե բանակում դու չճնշեցիր, քեզ կճնշեն: Տվյալ դիրքորոշումը պատճառ է դառնում նորակոչիկի ագրեսիվ վարքի ձևավորման

համար: Նման պայմաններում անձը փորձելու է ինքնահաստատման պահանջումները բավարարել ուրիշներին ճնշելու ճանապարհով, ինչն էլ կհանգեցնի դեստրուկտիվ կոնֆլիկտների:

✓ Սպակայական կազմը «կոշտ, բոի և անզգամ մարդիկ են»: Նման ոչ օբյեկտիվ դիրքորոշումը նորակոչիկի շրջանում ձևավորում է թշնամական վերաբերմունք նրանց նկատմամբ, ինչն էլ սովորաբար հանգեցնում է զինվորական ծառայության պահանջների նկատմամբ ոչ լուրջ մոտեցման կամ կարգապահական խախտումների:

✓ Բանակում բոլորը միմյանց մրցակիցներ են: Միջանձնային կայուն հարաբերությունների ձևավորմանը խոչընդոտող դիրքորոշում է, քան որ թույլ չի տալիս ձևավորել վստահության մթնոլորտ և ընկերներ ձեռք բերել, մինչդեռ ընկերներ ունենալը նպաստում է զինվորական միջավայրին արագ հարմարմանը:

✓ Բանակում պետք է ծանոթ մարդ ունենալ, «թե՛ չէ, կորած ես»: Այն ևս սխալ դիրքորոշում է և առաջացնում է սեփական ուժերի, գիտելիքների, կարողությունների և հմտությունների նկատմամբ անվստահություն:

Վերոնշյալ բացասական դիրքորոշումները կարող են պայմանավորված լինել բանակում դեռևս առկա մի շարք արատավոր երևույթներով՝ նորակոչիկների շրջանում առաջացնելով զինծառայության նկատմամբ վախի զգացում, ինչը նպաստող հանգամանք է բանակում նրանց դժվար հարմարմանը: Ավելին, բացասական դիրքորոշումները նաև սթրեսային հոգեվիճակին նպաստող գործոններ են:

Ամենամեծ սթրեսը նորակոչիկի համար քաղաքացիական կյանքից դեպի բանակային առօրյա մուտք գործելն է: Երբ պատանին կտրվում է իր տնից, ընտանիքից, ընկերներից կանգնում է հարմարման նոր խնդրի առջև: Սթրեսածին հանգամանքներ են նաև բանակում առկա կենցաղային պայմանները, որոնք տարբերվում է քաղաքացիական կյանքի կենցաղից, այստեղ ամեն բան խորթ է, նոր է, օրինակ՝ ոչ այդքան հաճելի սնունդ, շրջակա միջավայրի կլիմայական պայմաններին անհամապատասխան հագուստ, չոր անկողիններ,

նոր հիգիենիկ պայմաններ և այլն:

Բանակային կյանքին հարմարմանը խանգարող մեկ այլ սթրեսածին գործոն է հրամանատարների և ծառայակից ընկերների հետ հարաբերություններ ստեղծումը, ինչը պահանջում է որոշակի սուբորդինացիայի պահպանում: Պատանին մինչ գորակոչվելը հաշվետու է եղել ինքն իրեն, ունեցել է պատանիներին բնորոշ անձնային առանձնահատկություններ, ինքնահաստատման ձգտում, ինչը հակասություն է առաջացնում բանակում, որտեղ պետք է ենթարկվել հրամանատարների հրամաններին և անվերապահորեն կատարել այն: Մյուս կողմից, ծառայակից ընկերների հետ հարաբերությունները կարող են լինել կոնֆլիկտային, ինչը պայմանավորված է տարբեր հանգամանքներով՝ տարիքային առանձնահատկություններ, կրթություն, բարբառներ, իրար հակասող արժեքային համակարգեր, վարքի յուրատիպ պատկերացումներ և ձևեր, ինչը որոշակի դժգոհություններ է առաջացնում և բարդացնում հարմարման գործընթացը:

Նորակոչիկի համար գլխավոր սթրեսածին գործոններից է կանոնադրությամբ սահմանված կարգուկանոնին, ռեժիմին, ծառայողական պարտականություններին ենթարկվելը, ինչը լարվածություն, ֆիզիկական և հոգեբանական ծանրաբեռնվածություն է առաջացնում ծառայության ընթացքում: Լրացուցիչ սթրեսածին գործոններից է արտաքին միջավայրից կտրված լինելը, խիտ բնակեցվածությունը, սահմանափակումները, բանակում մեծամասամբ տղաների առկայությունը և այլն: Այս և այլ պայմանները կարող են դառնալ նորակոչիկի սոցիալ-հոգեբանական հարմարմանը խոչընդոտող գործոններ և նպաստել զինծառայողի վարքի և գործունեության ապահարմարմանը: Դրան կարող է հանգեցնել նաև պահանջմունքների չբավարարվածությունը կամ թերի բավարարումը: Եթե մինչ բանակ գորակոչվելը բավարարված էին նորակոչիկի հիմնական պահանջմունքները, ապա վերը նշված սթրեսորների առկայության դեպքում, դրանք հիմնականում կամ չեն բավարարվում, կամ բավարարվում են մասամբ: Օրինակ, շատ հաճախ թերի են բավարարվում քնի,

հանգստի և սնման ֆիզիոլոգիական պահանջմունքները: Նորակոչիկի մոտ կարող է առաջանալ ախորժակի կորուստ, կամ հակառակը՝ գերախորժակի առկայություն, քնկոտություն և այլն: Թերի է բավարարվում նաև անվտանգության և ապահովության պահանջմունքը, երբ նորակոչիկը, ելնելով իր համար նոր և անսովոր պայմաններից, կարող է իրեն անպաշտպան, հուսալքված զգալ: Այսպիսով, զինվորական ծառայության անցնելու սկզբնական փուլում նորակոչիկին կարող են համակել միայնակության, օտարության և չընդունված լինելու զգացումները: Ինքնահարգանքի և հարգանքի պահանջմունքի բավարարումը շատ կարևոր է նորակոչիկի համար հետագա ծառայության արդյունավետ գործընթացը կազմակերպելու համար: Սակայն հաճախ վերոհիշյալ պահանջմունքների չբավարարվածությունը կամ թերի բավարարումը կարող են լուրջ խնդիրներ առաջացնել՝ հանգեցնելով նորակոչիկի ինքնագնահատականի անկման և դրա հետ կապված՝ թույլ, դժբախտ և անպիտան լինելու զգացողությամբ:

Մ. Վ. Գամեզոն նշում է, որ պատանեկությունը ինքնորոշման փնտրտուքի, սեփական հայացքների և վերաբերմունքի ձևավորման շրջան է: Պատանիները, բացի իրենց մեծ համարելու ձգտումից, ցանկանում են, որ սեփական անհատականությունն ու օրիգինալությունը ընդունվեն բոլորի կողմից [4, էջ 235-236]: Զորամասում գտնվող նորակոչիկների գրեթե մեծամասնությունն ունի այդ ձգտումը, իսկ բախվելով իրականությանը՝ խորը հիասթափություն և ընկճվածություն են ունենում, որը պարարտ հող է նորակոչիկների ապահարմարման համար:

Ըստ Լ. Բոժովիչի, այս տարիքում ամբողջությամբ փոխվում և վերակառուցվում են անձնավորության հարաբերություններն ինքն իր և շրջապատող աշխարհի նկատմամբ, զարգանում են ինքնագիտակցությունն ու ինքնորոշումը, որոնք հանգեցնում են ինքնուրույն կյանքի [3, էջ 232]: Զորակոչվելը և հրամանատարների «հսկողության» տակ հայտնվելը ևս կարող են առաջացնել ներանձնային կոնֆլիկտներ: Ինքնահաստատման, շրջապատի կողմից հարգանք վայելելու

պահանջմունքներն այս տարիքում հաճախ զուգակցվում են շրջակա միջավայրի ոչ ֆորմալ նորմերով, կարող են հակասություններ ստեղծել զինվորական մի շարք պարտականությունների միջև:

Զինծառայողների սոցիալ-հոգեբանական հարմարման խոչընդոտներից են նաև սոցիալական կարգավիճակի փոփոխությունը: Յուրաքանչյուր պատանի, զորակոչվելով բանակ, ստանձնում է ժամկետային զինծառայողին բնորոշ որոշակի սոցիալ-հոգեբանական դերեր և դերային պարտականություններ, սակայն, շատ հաճախ դրանք կարող են չընդունվել զինծառայողների կողմից, որը կհանգեցնի սեփական դերից խուսափելուն ու դրան չհարմարվելուն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հասարակական կյանքում տեղի ունեցող կտրուկ փոփոխությունները կարող են բացասաբար ազդել նորակոչիկների հոգեֆիզիոլոգիական կերտվածքի վրա: Այդ փոփոխությունների հետևանքով նվազում են հարմարման ռեսուրսները, հետին պլան են մղվում բանակում ծառայելու շարժառիթները: Ուստի կարևոր է ուշադրություն դարձնել նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդների սոցիալականացման ընթացքում, մինչ բանակ զորակոչվելը նրանց սոցիալ-հոգեբանական պատրաստմանը՝ անձնավորության զարգացման է. էրիքսոնի էպիգենետիկ սկզբունքի հաշվառմամբ [1]:

Հաջորդիվ զինվորական ծառայության միջանկյալ փուլն է, համապատասխանաբար՝ 6-ից մինչև 20 ամիսներն ընկած ժամանակահատվածը: Այն համարվում է առաջնային ադապտացիայի փուլ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ հիմնականում ծառայության 6-րդ ամսից սկսած զինծառայողները և՛ մասնագիտական, և՛ բարոյական, և՛ հոգեբանական առումներով սկսում են ամուր կանգնել ուժքերի վրա: Այս փուլում նրանք սկսում են հարմարվել ռազմական միջավայրին, նոր պահանջներին, իրենց վրա դրված մեծ պատասխանատվությանը: Այդ իսկ պատճառով, փոփոխության են ենթարկվում նրանց պահանջմունքները՝ համապատասխանելով զինվորական ծառայության պայմաններին: Այս փուլի սկզբնական ամիսներին ա-

դապտացիայի խնդիրներից մեկը կարող է լինել «հին զինճառայողների» կողմից «կրտսեր» զինճառայողներին ֆիզիկական և հոգեբանական ճնշումների միջոցով իրենց ենթարկեցնելը: Իրենց համարելով արդեն բավականին հարուստ փորձ ունեցող զինճառայողներ՝ նրանք ամեն կերպ փորձում են իրենց կանոններն ու ավանդույթները պարտադրել «կրտսեր» զինճառայողների շրջանում: Նման վարքագիծը սովորաբար միջանձնային կոնֆլիկտների պատճառ է դառնում և ուղեկցվում ապահարմարմամբ:

Մի քանի ամիս անց, պատկերն արդեն այլ է դառնում: Թուլանում են «հին զինճառայողների» և «կրտսերների» միջև կոնֆլիկտները, առճակատումը: «Հին զինճառայողները» այժմ իրենց տեղը զիջում են ճառայության միջանկյալ փուլում գտնվող զինճառայողներին: Ծառայության միջանկյալ փուլում գտնվող զինճառայողները ամեն կերպ փորձում են փոխհատուցել ժամանակին իրենց հասցված նվաստացումները՝ կիրառելով գործունեության նույն միջոցներն ու մեխանիզմները, ինչը կիրառվել էր իրենց հետ «հին զինճառայողների» կողմից:

Ի տարբերություն զինճառայության սկզբնական փուլի, որտեղ դժվարությունների հիմքում ընկած էին կենցաղային նոր պայմանները, խիստ կանոնակարգված ռեժիմը, կանոններին հետևելը, հրամաններին անխուսափելիորեն ենթարկվելն ու կատարելը, ազատության սահմանափակումները, ինքնուրույն կյանքին հարմարվելը, ճառայության վերաբերյալ բացասական դիրքորոշումները, վախը, տագնապը, զինվորական ճառայության ավարտական փուլում այն կապված է քաղաքացիական կյանքին նախապատրաստման հետ: Այս փուլում նրանք դյուրագրգիռ և անհամբեր են դառնում, հայտնվում դեզադապտացիայի վիճակում:

Այսպիսով, զինճառայության պայմաններին ժամկետային զինճառայողների սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթացը մեծապես կախված է զինճառայողի ներուժից և հրամանատարիների հոգեբանամանկավարժական գիտելիքներից ու հմտություններից:

Հաշվի առնելով զինծառայողների անձնային առանձնահատկությունները՝ հրամանատարները պետք է անհատական մոտեցում ցուցաբերեն նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ: Զինվորական կոլեկտիվներում այնպիսի բարոյահոգեբանական մթնոլորտ պետք է ստեղծվի, որտեղ զինծառայողի հարմարումը արդյունավետ և արագ կընթանա: Շատ կարևոր է, որ ժամանակին հայտնաբերվեն ոչ միայն հարմարմանը խոչընդոտող գործոնները, այլև այն զինծառայողներին, ովքեր դեզադապտացիայի վիճակում են գտնվում՝ նրանց հետ իրականացնելու հոգեբանական աշխատանքներ: Նման մոտեցումներն անշուշտ նպաստում են զինծառայողների ներուժի արդյունավետ օգտագործմանը և մարտունակության մակարդակի բարձրացմանը:

STAGE CLASSIFICATION OF SOCIO-PSYCHOLOGICAL PROBLEMS OF THE ADAPTATION TO THE MILITARY SERVICE

*PETROSYAN R. H., GEVORGYAN H. M.
ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia*

ABSTRACT

In the article the authors present different problems of recruits during different stases of the adaptation to the military service, analyzing socio-economical, psychological, ethnic factors, which are the bases of these problems. Many psychological problems based on disinformation and stereotypes of recruits are presented.

The article presents features of the socio-psychological adaptation to the conditions of military service. It largely depends on the potential capabilities of recruits and psychological, pedagogical knowledge and skills of commanders.

The authors emphasize the importance of the moral and psychological atmosphere in the army, working with factors that prevent adaptation.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Յարամիշյան Վ. Բ., «Պարտադիր զինվորական ծառայության զինծառայողների հարմարման հարցի շուրջ», «Հայկական բանակ», 2013, հմ 3-4:
2. Андреева Г. М., Социальная психология. М., «Аспект Пресс», 2006. 363 с.
3. Божович Л. И., Этапы формирования личности в онтогенезе // Проблемы формирования личности: избр. психолог. труды / под ред. Д.И. Фельдштейна.-М.; Воронеж, 1995.-345 с.
4. Гамезо М. В. и др., Возрастная и педагогическая психология, 1984, 509 с.
5. Крысько В. Г., Социальная психология: Учеб. Для студ. высш. Учеб. Заведений. М., «ВЛАДОСПРЕСС», 2002. 448 с.
6. Социальная психология./под. ред. А.Н. Сухова, А.А. Деркача: М., «Academia», 2001. 531с.

**ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ՀՈԳԵԲԱՆԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

*Պեպրոսյան Ռ. Հ., Մակիչյան Ս. Ա., Արամյան Լ. Ռ.
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան*

Հանգուցային բառեր. *զինվորական հոգեբան, հաղորդակցական կոմպետենտություն, ուղղվածություն, մասնագիտական գործունեություն:*

Ժամանակակից մասնագիտական կրթության համակարգը հիմնվում է կոմպետենտային մոտեցման վրա: Կոմպետենտությունը գործունեության սուբյեկտի ձեռքբերումն է, որը ենթադրում է համապիտանի գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ընդունակությունների և անձնային որակների դրսևորում: Կոմպետենտությունը կոնկրետ անձի կողմից կոմպետենցիաների համակարգի յուրացումն է: ՀՀ զինված ուժերի համակարգում զինվորական հոգեբանների, ինչպես նաև կադրերի մասնագիտական պատրասման գործընթացում կարևորագույն խնդիրներից է վերջինիս կատարելագործումը: Ապագա զինվորական հոգեբանների հաղորդակցական կոմպետենտության մակարդակը պայմանավորում է նրանց մասնագիտական գործունեության արդյունավետության մակարդակը զինվորական կոլեկտիվներում, որն էլ իր հերթին նպաստում է ՁՈՒ-ի առջև ծառայած խնդիրների նպատակամետ լուծմանը:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է մեր պետականության և բանակի առջև ծառայած խնդիրների և կրթական ծրագրերի միասնականությունը ապահովելու նպատակով: Մենք կարևորում ենք ապագա զինվորական հոգեբանի հաղորդակցական կոմպետենտության և զինծառայողների ադապտացիայի ապահովման գործընթացի փոխկապվածությունը, ինչը կարող է բարձրացնել զինվորական ստորաբաժանումներում մարտական խնդիրների իրա-

գործման արդյունավետությունը: Այս համատեքստում երկու հիմնարար հիմնախնդիրներ միավորվում են՝ դառնալով հոգեբանական վերլուծության միասնական համակարգ: Մարդ-մարդ տիպի մասնագիտական գործունեության ուսումնասիրման համար [6, էջ 75, 4]:

Գիտական գրականության վերլուծությունը դիտարկվում է 3 առումներով.

✓ հաղորդակցման, միջանձնային շփման փիլիսոփայական-մեթոդաբանական (Ս. Լ. Ռուբինշտեյն, Կ. Ա. Աբուլխանովա, Լ.Պ. Բուևա, Մ. Ս. Կազան, Բ. Դ. Պադիգին, և այլն),

✓ անձի հաղորդակցական գործունեության հոգեբանամանկավարժական վերլուծություն (Բ. Գ. Անանև, Գ. Մ. Անդրեևա, Ա. Ա. Բոդայլով, Յա. Լ. Կոլոմինսկի, Վ. Ն. Կունիցինա, Ա. Ա. Լեոնտև, Բ. Ֆ. Լոմով, Վ. Ն. Մյասիշչև և այլն),

✓ մասնագետի հաղորդակցական կոմպետենտության ձևավորման ու զարգացման գործընթացի ուսումնասիրություն (Ա. Ա. Վերբիցկի, Ի. Ա. Զիմնյայա, Մ. Ի. Լուկյանովա և այլն):

Հիմք ընդունելով վերոնշյալը, ինչպես նաև ԶՈՒ կադրային քաղաքականության և կրթական ծրագրերի բարելավման գործընթացի միասնականության հրամայականը՝ հետազոտության նպատակն է եղել ուսումնասիրել հաղորդակցական կոմպետենտության զարգացումը զինվորական հոգեբանների պատրաստման գործընթացում: Վերջինս ընդգծում է զինվորական հոգեբանների մասնագիտական պատրաստման գործընթացում նորարարական մոտեցումների կարևորությունը, ինչը հատկապես արդիական է ապագա զինվորական հոգեբանների՝ տարբեր պայմաններում և իրավիճակներում զինծառայողների հետ արդյունավետ փոխազդելու, հաղորդակցական, կազմակերպչական, ռեֆլեքսիվ կարողությունների և հմտությունների զարգացման առումով [1, 2]: Հաղորդակցական կոմպետենտությունը ձևավորվում է բազմաթիվ բաղադրիչներից՝ շփման գործընթացը գնահատելու, կանխատեսելու և կառավարելու ընդունակությունից, դիրքորոշումների զարգացումը շտկելու ընդունակությունից, որոնք անհրաժեշտ են արդյունավետ շփման համար, ինչպես նաև շփման կողմերի

փոխհարաբերությունները համարժեք և լիարժեք ընկալելու և գնահատելու կարողությունից [7, 3]:

Հիմք ընդունելով այս վերլուծությունը՝ հետազոտական աշխատանքները հիմնականում ընթացել են 2017-2018 թվականին: Հետազոտության մեջ ընդգրկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Մանկավարժություն և հոգեբանություն (զինվորական)» մասնագիտության բակալավրիատի 3-4-րդ և «Զինվորական հոգեբանություն» մասնագիտության մագիստրատուրայի 1-2-րդ կուրսերի թվով 38 ուսանողներ:

Հաղորդակցական և կազմակերպչական հմտությունները առաջատար են միջանձնային հարաբերությունների ձևավորման, խմբի անդամների համախմբման, նրանց ներգրավելու, գործունեությունը կազմակերպելու և ուղղորդելու ունակության մեջ: Այդ իսկ պատճառով ապագա զինվորական հոգեբանների հաղորդակցական կոմպետենտության ուսումնասիրության նպատակով կիրառվել են Վ. Սինյավսկու և Բ. Ֆեդորիշինի՝ նախնական մասնագիտական խորհրդատվության գործընթացում հաղորդակցական և կազմակերպչական հակումների գնահատմանն ուղղված մեթոդիկան, իսկ շփման մեջ անձնավորության ուղղվածությունը վեր հանելու համար՝ Ս. Լ. Բրատչենկոյի մեթոդիկան: Հաղորդակցական ունակությունները, ինչպես նաև դրանց ուղղվածությունը հիմնականում առանցքային են այն մասնագիտությունների դեպքում, որոնք իրենց բովանդակությամբ կապված են մարդ-մարդ ակտիվ փոխազդեցության հետ:

Ստացված արդյունքների վերլուծությունն ընտրակազմի շրջանում փաստում է, որ կազմակերպչական հակումների ցուցանիշը միջինը 1,42 է (ըստ մեթոդիկայի գնահատման սանդղակի), իսկ հաղորդակցական հակումներինը՝ 2,57: Այսինքն՝ փորձարկվողների շրջանում գրանցվել է ընդհանուր առմամբ հաղորդակցական և կազմակերպչական հակումների ցածր և միջինից ցածր ցուցանիշ: Ըստ վերլուծության, նրանք չեն ձգտում շփման, խմբում կաշկանդված են, դժվարությամբ են նոր ծանոթություններ հաստատում, լսարանի առջև ներկայանում և պաշտպանում իրենց կարծիքը, ծանր են վերապրում

վիրավորանքները, հասարակական գործունեության ժամանակ դրսևորում են ցածր նախաձեռնողականություն, նախընտրում են ինքնուրույն որոշումներ չընդունել: Հիշյալ ընտրակազմի կրթական գործընթացը կազմակերպվում է և՛ բուհում, և՛ ՀՀ ՊՆ Մարշալ Ա. Խամփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանում, որտեղ առկա են կանոնադրային հարաբերություններ: Ենթադրում ենք, որ ռազմական բուհում կանոնադրային և օրենսդրական հարաբերությունների առկայությունը կաշկանդում է ապագա զինվորական հոգեբանի հաղորդակցական կոմպետենտության զարգացումը և դրսևորումը մասնագիտական գործունեության ոլորտում:

Ելնելով ենթադրության տրամաբանությունից և հետազոտության նպատակից՝ կիրառել ենք նաև 2-րդ մեթոդիկան, որի արդյունքները վկայում են, որ ընտրակազմի շրջանում առավել չափով (29%) դրսևորվում է մանիպուլյատիվ ուղղվածությունը: Երկրորդ տեղում է կոնֆորմ ուղղվածությունը (23%): Ընդամենը 1%-ով ցածր ցուցանիշով դրսևորվում է ավտորիտար ոճը (22%): Ալտերոցենտրիկ ուղղվածությունն արտահայտված է 18%-ով: Եվ արտահայտվածության ամենացածր ցուցանիշով (8%) գրանցվել է ինդիֆերենտ ուղղվածությունը:

Տվյալների տոկոսային բաշխվածությունը ցույց է տալիս, որ շփման և հաղորդակցման գործընթացում գերիշխում է անձի մանիպուլյատիվ ուղղվածությունը, այսինքն՝ դիմացիին և հաղորդակցման ամբողջ գործընթացը սեփական նպատակներին ծառայեցնելու կողմնորոշումը, դիմացիին նկատմամբ վերաբերմունքը՝ որպես թաքնված մանիպուլյացիաների միջոց, օբյեկտ: Այս ուղղվածության դեպքում անձը ձգտում է հասկանալ դիմացիին՝ նրա վարքը օգտագործելու և կառավարելու, անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով: Նկատվում է նաև հաղորդակցման գործընթացի զարգացման կողմնորոշում և նույնիսկ «ստեղծագործում»:

Հետազոտության արդյունքները թույլ են տալիս շեշտադրել այն գաղափարը, որ հիմք ընդունելով ապագա մասնագետի շփման մեջ ուղղվածությունը և հաղորդակցական կոմպետենտության արդյունավետ մակարդակի ձևավորման անհրաժեշտությունը՝ հրամայական է

կրթական ծրագրերում ապահովել միասնականության սկզբունքը ՀՀ ՁՈՒ-ի հետ մասնագետի համատեղ պատրաստման գործընթացում, իսկ զինվորական հոգեբանություն մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրերում ներառել ընտրովի դասընթացներ՝ հաղորդակցական կոմպետենտության զարգացման ուղղությամբ: Վերջիններիս հիմքում ընկած ինովացիոն ուսուցման ակտիվ մեթոդները կճառայեն ուսումնական գործընթացի նկատմամբ ապագա մասնագետների հետաքրքրության աճին, թույլ կտան տարբեր իրավիճակներում և գործունեության ոլորտներում ընտրել սեփական գործողությունների տարբեր ռազմավարություններ: Հիշյալ դասընթացների ներդրումը և դրանց հիմքում ընկած բանավեճային և խաղային մեթոդները, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական թրեյնինգները կնպաստեն ապագա զինվորական հոգեբանների հաղորդակցական կոմպետենտության ձևավորմանն ու զարգացմանը: Հիշյալ գործընթացը կարող է նաև ծառայել ՀՀ զինված ուժերի համակարգում զինվորական հոգեբանների, ինչպես նաև կադրերի մասնագիտական վերապատրաստման ծրագրերի մշակմանը:

PSYCHOLOGICAL PROBLEMS OF FORMATION OF COMMUNICATION COMPETENCE IN THE PREPARATION OF MILITARY PSYCHOLOGISTS

PETROSYAN R. H., ARAMYAN L. R., MAKICHYAN S. A.

ASPU after Kh Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

The psychological problem of the formation of communication competence of a military psychologist is conditioned by the unity of the problems faced by our army and the educational programs. It focuses on the process of formation and development of communication skills of the

future military psychologist in the field of professional communication, in which the emphasis is on the direction of the future specialist in communication. Based on the results of the research, it is proposed to ensure the principle of uniformity of joint activities in the curricula and the introduction of training and innovation methods for communicative competence formation.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մարգարյան Վ. Հ., Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը: Եր., 2009.
2. Александрова Н. В., Коммуникативная компетентность – эффективность в профессии (когнитивно-поведенческая модель социально-психологического тренинга менеджеров и врачей) /Н. В. Александрова, В. А. Тарабанова Э. Г. Эйдемиллер // Журнал практического психолога, июль-август, 2011, № 7-8. С. 28-31.
3. Альбуханова-Славская К.А., Личность в процессе деятельности //Психология личности: хрестоматия. Т. 2 / К.А. Альбуханова-Славская. Самара: - Изд. Дом «Бахрах», 2012.–240 с.
4. Бодалев А. А., Личность и общение: избранные труды / А. А. Бодалев. М.: Педагогика, 1983. 271 с.
5. Жуков Ю. М., Диагностика и развитие компетентности в общении /Ю. М. Жуков, Л. А. Петровская. М.: Изд-во МГУ, 1990. 123 с.
6. Куницына В. Н., Межличностное общение: учебник для вузов /В. Н. Куницына, Н. В. Казаринова, В. М. Погольша. СПб.: Питер, 2001. 544 с.
7. Петровская Л. А., Компетентность в общении. Социально – психологический тренинг / Л. А. Петровская. М.: Издательство МГУ, 2012. 221 с.

ԿԱԴՐԱՇԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ռումյան Ե. Հ.

Խ. Արվեստի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. *կադրաշարի կառուցվածք, հոգեբանական ներգործություն, կադրային ազդեցություն, կինոընկալում, հոգեկան գործընթացներ, հոգեբանական սկզբունքներ:*

Արվեստն ու հոգեբանությունն իրար կապակցված համադրություն են. առնչվել արվեստին և չտիրապետել մարդկային հոգեբանությանը, կնշանակի չհասկանալ իրականությունը ճշգրիտ և համոզիչ շարադրելու բանաձևը: Իսկ ամենայն խորությամբ ուսումնասիրել շրջապատող աշխարհը և այն մատուցել ճշմարիտ արվեստի միջոցով՝ բնորոշ է հանճարներին: Ուսումնասիրելով իտալացի քանդակագործ և գեղանկարիչ Միքելանջելո Բոունարոտիի աշխատանքներին, անհնար է անգամ երևակայել, որ Միքելանջելոն խորապես ուսումնասիրած չլինի մարդկային անատոմիան. մարմարյա հերոսների երակներն անգամ իրական են թվում: Նույն կերպ և կինոյում. անհնար է չճանաչել մարդկային հոգեբանությունը և կարողանալ ստեղծել ֆիլմ մարդկանց մասին: Իսկ մարդկանց մասին խոսելու համար նախ և առաջ հարկավոր է ճանաչել նրանց ոչ միայն ընդհանուր սահմանումների, այլև դետալների մեջ այն, ինչ ամփոփում է հոգեբանությունը: Սերգեյ Էյզենշտեյնը «Արվեստի հոգեբանություն» աշխատության մեջ գրում է. «Արվեստագետը, լինի ռեժիսոր, թե դերասան, գրող, թե նկարիչ, պետք է մարդկային տեսության մեջ ապավինի ոչ միայն իր փորձին և ինտուիցիային, այլև կիրառական հոգեբանական գիտական մեթոդների կարգ ու կանոնին» [4, էջ 7]: Իսկ Էյզենշտեյնի մտերիմ ընկերներից Լ. Ս. Վիգոտսկին հոգեբանության ներկայությունը արվեստում դիտում է անհրաժեշտ պայման. «Շատ հեշտ է ցույց տալ, որ արվեստի որոշակի

ուսումնասիրություն միշտ և անխուսափելիորեն ստիպված է օգտվել այս կամ այն հոգեբանական նախապայմաններից և տվյալներից» [1, էջ 25]: Այս ամենը փաստում է արվեստ-հոգեբանություն սերտ կապի մասին: Մարդկային հոգեբանության խոր իմացություն. սա այն մեխանիզմն է, որը խրված է կինոարվեստի հիմքում: Հոգեբանության նշանակությունը կինոյում կարևորվում է ոչ միայն դերասանական խաղի, երաժշտության ընտրության, պատկեր-ձայնի համադրման այլև կինոարվեստի ամբողջական ազդեցության գործում:

Ֆիլմի հաջողության բանաձևը պայմանավորված է հանդիսատեսի հետ անմիջական և ազնիվ գրույցի կայացմամբ: Այս գործընթացի իրականացման համար անհրաժեշտ է ազդեցիկ և հետաքրքիր հաղորդակցություն: Կադր-հանդիսատես շփումը պետք է զերծ լինի ավելորդություններից, սկսվի և շարունակաբար ընթանա հոգեբանական որոշակի միջավայրում և հստակորեն զարգանալով՝ ձգվի մինչև ֆիլմի ավարտը: Հանդիսատեսը որպեսզի հաղորդակցվի այդ ամենին, նրա մեջ պետք է արթնանան զուգորդվող զգացողություններ, ապրումներ, մտքեր՝ այդպիսով կայացնելով անհրաժեշտ գրույցը, որը հենց կինոն է: Իսկ այս հաղորդակցության կայացման և արդյունավետության գործում կարևոր են այն գիտության սկզբունքները, որը նկարագրում է մարդու հոգեկան կառուցվածքը և բացահայտում հոգեկան գործընթացների դրսևորման պատճառները:

Կինոն կադրերի միջոցով խոսող արվեստ է, որի կադրային դասավորությունը, լինելով կինոլեզու, գլխավորապես կառուցվում է հոգեբանական սկզբունքների օգտագործմամբ: Այս ամենը հետապնդում է մեկ նպատակ՝ ներգործել հանդիսատեսի ընկալման գործընթացի վրա: Ե՛վ դրամատուրգիան, և՛ դերասանական խաղը, և՛ երաժշտական ձևավորումը, և՛ օպերատորական աշխատանքը, և՛ թե այլ բաղադրիչներ կարող են հանդիսատեսի ընկալման գործընթացում առավելագույն ազդեցություն գործել կադրաշարի հստակ կառուցման միջոցով, որը կադր-հանդիսատես կապն ուժեղացնելու նպատակով պետք է օգտագործի բոլոր հնարավոր հոգեբանական գործոնները:

Գնալով կինեմատոգրաֆիայի ակունքներ՝ տեսնում ենք, որ նույնիսկ սկզբնավորման փուլում կինոյի կադրային կառուցվածքը հիմնվել է հոգեբանական սկզբունքների վրա: 1917թ. ռուս ռեժիսոր Լև Կուլեշովը կատարեց մի գիտահետազոտական փորձ, որը ցույց տվեց կադրերի համադրման արդյունքում ստացվող ասելիքի բազմազանությունը և ընկալման ազդեցության տարբերությունները: Այս փորձը հայտնի է «Կուլեշովյան ազդեցություն» (Эффект Кулешова) անվամբ: Գիտափորձի արդյունքում ապացուցվեց այն թեզը, որ նույն կադրը ստանում է տարբեր մեկնաբանություն՝ պայմանավորված հաջորդ կադրի բովանդակությամբ: Այլ կերպ ասած, երկու կադրերի փոխկապակցման արդյունքում ծնվում է նոր բովանդակություն, որը, չի արտացոլվում ոչ առաջին, ոչ երկրորդ կադրում՝ առանձին վերցված [3, էջ 14, 15]: Հետագայում արդեն Ս. Էյզենշտեյնն ավելի ամրապնդեց իր ուսուցչի տեսությունը. «երկու կադրեր իրար միանալու արդյունքում ստեղծում են իրենց մեջ եղած իմաստային պարունակությամբ պայմանավորված ամբողջովին նոր միտք» [3, էջ 16]: Նա այնուհետև ծավալում է հետևյալ թեզը՝ ակնարկելով նաև դրա հոգեբանական նշանակությունը. «Էկրանին պատկերված դիմային արտահայտությունը միշտ էլ հարաբերական է և պայմանավորված է նրանով, թե ինչ է հաջորդելու: Եթե մենք ցույց ենք տալիս ժպտացող հայացք, ապա խոշոր պլանով երեխայի հայացք, դուք կպատասխանեք, թե դա մեծահոգի տղամարդ կամ բարեգութ կին է՝ լի հայրական կամ մայրական զգացողություններով: Իսկ եթե մենք ցուցադրենք նույն ժպտացող հայացքը, ապա դրան հաջորդենք մարդասպանություն պատկերող կադր, այդ դեմքի արտահայտությունը սադիստի երանգ կստանա» [4, էջ 33]: Ուրեմն, կադրային սինթեզներով հնարավոր է ստանալ ոչ միայն նոր բովանդակություն, այլև փոխանցել հոգեբանական տարբեր ազդակներ՝ հանդիսատեսի մեջ առաջացնելով զանազան հույզեր:

Ֆիլմի կադրաշարը փոխանցվող ասելիքի ազդեցությունն ամրապնդում է հոգեբանական ճիշտ մթնոլորտ ձևավորելու միջոցով, որի համար հարկավոր է քայլերի որոշակի հաջորդականություն. տեսա-

րանը կառուցել խոշոր պլաններով, թե՛ դիտել այն դետալների մեջ, հասկանալ՝ գործողությունը պահանջում է կադրային դինամիկա՞, թե՛ հապաղումներ, դիմել երաժշտական դադարների՞, թե՛ սրել ձայնային անցումները և այսպես շարունակ: Այս սկզբունքները քննենք օրինակով. օլիմպիական վազք պատկերող կադրերից պետք է ստանալ երկու տարբեր վիճակներ՝ դինամիկ և պասիվ գործողությամբ կառուցված կարճ տեսարաններ: Վազքի տեսարանը նկարահանված է երեք տեսախցիկով, որոնցից մեկը նկարահանել է ընդհանուր պլան, երկրորդ տեսախցիկը՝ միջին պլան, իսկ երրորդը՝ խոշոր պլանային կադրեր: Եթե վազքի տեսարանը կառուցենք՝ առավելապես օգտագործելով ընդհանուր պլաններ, իսկ որպես ֆոնային երաժշտություն՝ ընտրենք որևէ պասիվ կատարում, ապա կստացվի ոչ ակտիվ և ոչ դինամիկ գործողություն և դիտողին կփոխանցվի պասիվ տրամադրություն: Իսկ եթե վազքի տեսարանը կառուցվի հնարավորինս խոշոր պլաններով, կադրերը արագորեն հաջորդեն իրար, իսկ ընթացքը ընդգծվի ակտիվ երաժշտությամբ, գործողությունը կլինի դինամիկ, հետևաբար հանդիսատեսն էլ լարված կհետևի «վազող» կադրերին: Երկու դեպքում էլ կադրում նույն օբյեկտներն են, գործողությունը կատարվել է նույն պահին, նույն վայրում, հետևաբար այս երկու մոտեցումների տարբերությունը միմիայն կադրաշարի կառուցման մեջ է: Ընկալումների այդ երկակիությունը բացատրվում է նրանով, որի տարբերություն ընդհանուրի, խոշոր պլաններն իրենցում պարունակում են ռիթմ և լարվածություն. երբ հանդիսատեսը չի ունենում կատարվող գործողությունների ընդհանուր պատկերը տեսնելու հնարավորություն, ապա նրա հոգեկանում ամենատարբեր իմացական գործընթացների մեկնարկ է տրվում. հանդիսատեսը մտածողությամբ կատարում է ընկալումների վերլուծական աշխատանք՝ այդպիսով փորձելով բավարարել իմացական պահանջները: Իսկ ընդհանուր պլանների դեպքում նման հոգեկան գործընթացների աշխատանք չի պահանջվում, ըստ այդմ, հանդիսատեսը հանդարտորեն հետևում է ֆիլմի ընթացքին: Հետևաբար, կադրաշարի կառուցվածքը հանգեցնում է հոգեկան գործընթաց-

ների որոշակի դրսևորման:

Կինոյում հոգեբանական ներգործությունն ամենուր է՝ կադրերում, կադրային միացումներում և կադրային ամբողջականության մեջ: Արտավազը Փելեշյանի «Կյանք» ֆիլմը ծննդաբերող մոր հոգեբանական և ֆիզիկական ապրումներ արտահայտող ամենազդեցիկ պատկերներից է: Ֆիլմի առանձնահատկությունն այն է, որ այստեղ ցուցադրված չէ բժշկական գործողության որևէ կադր: Ֆիլմը կառուցված է խոշոր պլաններով, որոնք պատկերում են մոր դիմային ապրումները. կադրերի ներքո լսվում են սրտի տրոփյունի ձայներ, որոնց զուգահեռ ընթացում է պասիվ երաժշտություն: Այս երեք գործոնների՝ պատկեր, ձայն և երաժշտություն, միջոցով ռեժիսորին հաջողվել է դիտողին փոխանցել ծննդաբերության ողջ հոգեբանական և միջավայրային մթնոլորտը և հաղորդակից դարձնել նոր կյանքի հրաշքին: Փելեշյանի ֆիլմերում նկատելի են կադրային այնպիսի կառուցվածքներ, որոնք ունակ են հանդիսատեսին փոխանցելու հազարավոր զգայություններ, նույնիսկ այն դեպքում, երբ ոչ միշտ են դրանք ընկալվում գիտակցական մակարդակում: Կինոյի ներուժը կայանում է նրանում, որ կադրային ընկալումը կարող է ընթանալ ոչ միայն գիտակցական, այլև մյուս մակարդակներում: Իհարկե Ջեյմս Ուայքերին պետք է որ լավ գիտակցեր այս մասին, որպեսզի կարողանար հասկանալ կադրային կառուցման միջոցով հանդիսատեսի ենթագիտակցության վրա ազդելու հնարավորությունը [5]:

Մոնտաժային հնարամտության լավագույն օրինակներից է Կ. Թ. Դրեյերի «Ժաննա դ' Արկի չարչարանքները» ֆիլմը: Ռեժիսորը, որպեսզի հնամավորինս փոխանցի գլխավոր հերոսուհու հոգեկան ապրումները, տեսարանները կառուցել է առավելապես խոշոր պլանների միջոցով՝ ընդգծելով նրա տառապանքը և դրանով իսկ արթնացնելով դիտողի զգայական արձագանքը: Համր այս ֆիլմը պարունակում է մի շարք հոգեկան ապրումներ: Միմյանց հաջորդող խոշոր պլանները պարունակում են ռիթմ և լարվածություն, որոնք անմիջապես փոխանցվում են հանդիսատեսին: Ա. Տարկովսկին, «Ստալկեր» ֆիլմում

հիմնականում օգտագործելով ներկադրային մոնտաժ, ստեղծել է հոգեբանական պասիվ մթնոլորտ. չկան կադրային արագ փոփոխություններ և կտրուկ անցումներ: Եվ որ առավել հետաքրքրական է. ռեժիսորը դիմել է գունային հնարքների և ըստ մտքի բնույթի և խորության՝ որոշ կադրեր թողել է գունավոր, իսկ մի քանիսը վերածել սև և սպիտակի: Սրանք պայմաններ են, այսպես ասած, ինտելեկտուալ խաղաղություն ստեղծելու համար, որպեսզի մատուցվի միտքը և հնարավոր լինի այն ըմբռնելու մտավոր ճիգը. ռեժիսորը կադրային հանգիստ շարադրանքով վերարտադրել է մի միջավայր, որտեղ իշխում են մտքերը, խորհրդանիշները, և հապաղող ժամանակի մեջ դիտողը կարողանում է մտածել և ընկալել ֆիլմի ուղերձները:

Բազմաթիվ են ֆիլմերը, որոնց ուսումնասիրմամբ կարելի է անդադար վերլուծել կինոարվեստում հոգեբանական միջոցների և սկզբունքների առկայությունը, սակայն միանշանակ է, որ ցանկացած ֆիլմ հոգեբանական որոշակի միջավայր է, որտեղ հանդիսատեսը տեսնում և ընկալում է այն ամենն, ինչ դրված է կադրաշարի կառուցվածքում: Իսկ ընդհանուր առմամբ կարող ենք փաստել, որ այն ժամանակահատվածից սկսած, երբ գիտակցվեց երկու տարբեր կադրերի միացմամբ նոր բովանդակություն և նոր զգայություններ առաջացնելու հնարավորությունը, այդ իսկ պահից ակնհայտ դարձավ կադրային կառուցվածքում ամփոփված հոգեբանական սկզբունքների առկայությունը:

Անկասկած, հոգվածում տեղ գտած վերլուծությունները, թեզերը և պնդումները ենթակա են առավել մանրամասն ուսումնասիրման, հատկապես ընդհանուր հոգեբանության տեսանկյունից: Յուրաքանչյուր ֆիլմի կայացման հիմքում դրված է հոգեբանական որոշակի դաշտ ձևավորելը, որտեղ զրուցում են հեղինակն ու հանդիսատեսը, և այս զրույցի բացառիկ միջոցը կադրաշարային կառուցվածքն է: Վերջինս միտված է ներգործելու հանդիսատեսի ընկալման գործընթացի վրա և, հետևաբար, ամբողջությամբ կառուցված է հոգեբանական սկզբունքների վրա:

THE PSYCHOLOGICAL PRINCIPLES OF MOVIE FRAME SERIES CREATION

RUMYAN Y. H.

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

This article studies the means and principles of psychological influence of movie. Since the peculiarity of movie is the combination of image and voice, as well as the art of speaking with the connection of movie frames, accordingly it becomes necessary to reveal the psychological influence of movie in the structure of movie frames. Each movie is based on the formation of a certain psychological field, where the author and the audience are talking and the exclusive means of this conversation is the movie frame structure. The latter is intended to influence on the process of the audience perception, thus it is entirely formulated with psychological principles.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Выготский Л. С., Психология искусства. 1968. Стр. 34.
2. Жинкин Н. И., Психология киновосприятия. 1971. Стр. 214-254. <http://klex.ru/9wy>
3. Соколов А. Г., Монтаж. Телевидение, кино, видео. Глава 1. Стр. 14, 15, 16.
4. Эйзенштейн С. М., Психологические Вопросы Искусства. 2002. Стр. 33.
5. Florea M., History of the 25th frame. The subliminal message. http://www.ijcr.eu/articole/330_07%20Maria%20FLOREA.pdf.

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Սարգսյան Լ.Կ.

Խ. Արոլյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. *հոգեկան վիճակներ, հանցագործության դրդապատճառներ, հուզական հակազդեցություններ, խնդիրների օբյեկտիվ և սուբյեկտիվ փոխապայմանավորվածություն, խնդիրների սոցիալական պայմանավորվածություն:*

Դատապարտյալի անձի հոգեբանական ուսումնասիրությունները էական ազդեցություն են ունեցել իրավաբանական հոգեբանության, մասնավորապես՝ քրեակատարողական համակարգի հոգեբանության ձևավորման և զարգացման գործընթացում: Քրեակատարողական համակարգի վերջին շրջանի հոգեբանական ուսումնասիրությունները հիմնականում վերաբերվում են դատապարտյալների վերահարմարման գործընթացին [6]: Այս բնագավառի որոշ ուսումնասիրություններ փորձում են ձևավորել քրեակատարողական համակարգի հոգեբանության հիմնական խնդիրները, դատապարտյալի անձի ուսումնասիրությունը, քրեակատարողական հիմնարկում հոգեբանական աշխատանքի համակարգը [3]: ՔԿ համակարգին վերաբերող հոգեբանական հետազոտություններում կարելի է հանդիպել նաև դատապարտյալի անձին վերաբերող որոշ հետազոտությունների, որոնք մասնակի անդրադարձ են կատարում դատապարտյալների հոգեբանական խնդիրներին և չեն ամբողջացնում առկա խնդիրները որպես ընդհանուր համակարգ:

Դատապարտյալի անձի հոգեբանական խնդիրների ուսումնասիրության համար կարևոր է ուշադրություն դարձնել կատարած արարքի բնույթին ու վտանգավորության աստիճանին, ըստ որի հանցարարքները դասակարգվում են ոչ մեծ, միջին, ծանր և առանձնապես ծանր տիպերի [1]:

Պետք է նշենք, որ դատապարտյալի անձի հոգեբանական խնդիրները պայմանավորված են ոչ միայն արարքի բնույթով ու վտանգավորության աստիճանով, այլև քրեակատարողական հիմնարկության պայմաններով, որում դատապարտյալը կրում է պատժաժամկետը: Դրանք համապատասխանաբար չորսն են՝ բաց, կիսաբաց, կիսափակ և փակ տիպի հիմնարկություններ: Թե՛ դատապարտյալի արարքի բնույթին ու վտանգավորության աստիճանը, և թե՛ քրեակատարողական հիմնարկության տիպը մեծապես ազդեցություն են ունենում դատապարտյալի անձի հոգեբանական խնդիրների ձևավորման գործում: Խոսքը վերաբերում է ինչպես դատապարտյալի հանցարարքի դրդապատճառներին, վարքի յուրահատկություններին, այնպես էլ՝ քրեակատարողական հիմնարկության այն պայմաններին, որոնք էական ազդեցություն են ունենում դատապարտյալի վարքի դինամիկայի վրա:

Դատապարտյալների հոգեբանական խնդիրների ուսումնասիրության հիմքում առանձնացնում ենք.

✓ *խնդիրների համակարգ, որոնք ունեն սոցիալական և կենսաբանական փոխպայմանավորվածություն:* Դատապարտյալների հոգեբանական խնդիրների սոցիալական փոխպայմանավորվածության համատեքստում առանձնացնում ենք այնպիսի խնդիրներ, որոնք պայմանավորված են դատապարտյալների սոցիալական դերի փոփոխություններով, սոցիալական նոր կարգավիճակով, անձի սոցիալական մեկուսացման պայմաններով, սոցիալ-հոգեբանական հարմարման խնդիրներով:

Դատապարտյալի անձի հոգեբանական խնդիրների կենսաբանական փոխպայմանավորվածության համատեքստում առանձնացնում ենք հոգեկենսաբանական խանգարումները՝ պայմանավորված ինչպես հոգեբանական, այնպես էլ քրեակատարողական հիմնարկության պայմաններով (լուսավորություն, խոնավություն, ջերմություն, յուրահատուկ հոտը ինչպես միջավայրի, այնպես էլ սեփական մարմնի և այլն):

✓ *Խնդիրների համակարգ, որոնք ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ փոխապայմանավորվածություն:* Օբյեկտիվ խնդիրների համատեքստում առանձնացնում ենք այնպիսիք, որոնք պայմանավորված են կատարած արարքի նկատմամբ օբյեկտիվ վերաբերմունքով՝ արարքի ծանրության աստիճանով, դատավճռով, դատապարտյալների միջավայրի վերաբերմունքով (որը կարող է լինել և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ), ինչպես նաև արտաքին աշխարհի հետ կապված խնդիրներ՝ ընտանիքի, հարազատների, աշխատավայրի և այլն: Հաճախ դատապարտյալների մոտ մի շարք հոգեբանական խնդիրներ պայմանավորված են լինում ընտանիքում ունեցած որոշակի խնդիրներով՝ ընտանիքի սոցիալական ապահովվածության, ընտանիքի անդամների առողջության, կորստի և մի շարք այլ հարցերի հետ:

Սուբյեկտիվ խնդիրների համատեքստում առանձնացնում ենք արարքի նկատմամբ սեփական սուբյեկտիվ վերաբերմունքը, ինքնաքննադատությունը: Սուբյեկտիվ խնդիրների մեջ դիտարկում ենք սեփական ինքնավերաբերմունքով, ինքնագնահատականով, ինքնագիտակցության վերակառուցումներով պայմանավորված հարցերը:

Ե. Բուռուկինան և Տ. Չելնոկովան նշում են, որ բանտում դատապարտյալները հայտնվում են իրենց համար անսովոր իրավիճակում. սեփական ազատության, տեղաշարժման, ընտրության սահմանափակում, ինտիմ հարաբերությունների և շփման սահմանափակում, օրվա խիստ կանոնակարգ, որոշակի աստիճանակարգի առկայություն՝ պայմանավորված դատվածության քանակով, ՔԿՀ-ում զբաղեցրած դիրքով և հանցատեսակով [4]: Նրանց մոտ մտածողության սահմանները խիստ նեղանում են՝ կենտրոնանալով տվյալ միջավայրի վրա: Միօրինակ կյանքը հանգեցնում է հուսահատության, անտարբերության, ինքնամոլորության, վարքային խանգարումների, ագրեսիվ դրսևորումների, աֆեկտիվ վիճակների: Սոցիալական մեկուսացումը, օրվա ռեժիմի կտրուկ փոփոխությունը, հաղորդակցվելու, աշխատելու, նախասիրություններով զբաղվելու սահմանափակումները խորացնում են դատապարտյալի ընկճված վիճակը, որը

հույսերի փլուզման, նպատակների կործանման, կիսատության զգացողության, ֆրուստրացիայի հետևանք է: Դատապարտյալի մեջ առաջանում է հիասթափություն, արժանապատվության անկում, արժեքային համակարգի փոփոխություններ, ներանձնային կոնֆլիկտներ, ինքնանվերաբերմունքի փոփոխություններ: ՔԿՀ-ում գտնվելու նախնական շրջանում դատապարտվածների ինքնագնահատականը ցածր է, ինքնավերաբերմունքն ունի բացասական հուզական երանգ: Խմբում որոշակի դերերի յուրացման և դիրքի հասնելու արդյունքում դատապարտյալի ինքնագնահատականն աստիճանաբար բարձրանում է, ձևավորվում դրական ինքնավերաբերմունք [7]:

Վ.Ֆ. Պիրոժկովը դատապարտյալների խնդիրների համատեքստում առանձնացնում է ֆոբիաները, հատկապես կլաուստրոֆոբիկ հակազդումը, որը դրսևորվում է փակ տարածքի, մասնավորապես՝ քննչական մեկուսարանի կամ բանտախցի նկատմամբ: Գտնվելով խցում՝ դատապարտյալների մեջ դրսևորվում է շարժողական անհանգստություն: Հաջորդը ընկճված-տագնապային հակազդումն է, որի դեպքում գերակշռում է տրամադրության անկումը, ապագայի հանդեպ հոռետեսությունը: Նրանց հատուկ է դյուրագրգռվածությունը, անքնությունը, կարոտը, անհանգստությունը: Հեղինակը նշում է նաև ժխտողական-ընկճված հակազդումը, որի ժամանակ բնութագրական է սեփական անձը մեղավոր չճանաչելը, կատարածի համար չզղջալը, ազատագրկման փաստի նկատմամբ ներքին ժխտողականությունը և ժխտողական-հիստերիկ հակազդումը, որին բնորոշ են ճնշված տրամադրությունը, ապաթիան, անտարբերությունն ու ուղղվելու ձգտման բացակայությունը, եսակենտրոնությունը, հեղինակության ձգտումը [5]:

Մենք փորձում ենք դատապարտյալների հոգեբանական խնդիրները դիտարկել անձի հոգեբանական տարբեր մակարդակներում՝ անձի հոգեկան գործընթացների, վիճակների, հատկությունների համատեքստում: Մասնավորապես, դատապարտյալների մոտ ի հայտ են գալիս հոգեկանի պերցեպտիվ և կոգնիտիվ ոլորտների մի

շարք խնդիրներ, ինչպես նաև անձնային գծերի՝ բնավորության շեշտվածություն, ինտելեկտի, կամքի, գործունեության ոչ համարժեքություն, հույզերի և զգացմունքների ճնշում:

Այսպիսով, դատապարտյալի անձի հոգեբանական խնդիրները կարելի է դասակարգել՝ հիմք ընդունելով.

- ✓ տարիքը, սեռը, կրոնական, ազգային պատկանելիությունը,
- ✓ կատարած արարքի բնույթը ու վտանգավորության աստիճանը,
- ✓ հանցարարքի դրդապատճառները, դատվածությունների քանակը,
- ✓ քրեակատարողական հիմնարկության տիպը և պայմանները,
- ✓ խնդիրների սոցիալական ու կենսաբանական պայմանավորվածությունը,
- ✓ խնդիրների օբյեկտիվ ու սուբյեկտիվ փոխապայմանավորվածությունը,
- ✓ անձի ինքնագիտակցության վերակառուցումները, կենսական արժեքների փոփոխությունը, կյանքի ոճը,
- ✓ հոգեկան գործընթացները (ինտելեկտի գնահատում),
- ✓ հոգեվիճակները, հուզական հակազդումները,
- ✓ վարքի յուրահատկությունները՝ կոնստրուկտիվ կամ դեստրուկտիվ բնույթը:

Դատապարտյալների հոգեբանական խնդիրների դասակարգման վերոնշյալ մոդելը անհրաժեշտ է զարգացնել հոգեբանական հետազոտություններում, ինչը հնարավորություն կստեղծի ամբողջացնել դատապարտյալների հոգեբանական խնդիրների համակարգը:

CLASSIFICATION OF PSYCHOLOGICAL PROBLEMS OF THE CONVICT

SARGSYAN L. K.

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

The psychological study of the prisoner's personality has had a significant impact on the legal psychology, in particular on the formation and development of the penitentiary system psychology. Several surveys on the prisoner's personality can be found in penitentiary system psychological studies, which partially illustrate the convicts' psychological problems and do not generalize the current issues as a common system.

Based on the study of prisoners' psychological problems we can distinguish:

A system of problems, which have social and biological interconnection.

In the context of social interconnection of the convicts' psychological problems, we identify issues that are conditioned by changes in the convicts' social role, of the convicts' new social status, social isolation, as well as socio-psychological adaptation issues.

In the context of the biological interdependence of the the prisoner's personality psychological problems, we distinguish psycho-biological disorders due to both psychological and penitentiary conditions (lighting, moisture, heat, odours, etc.).

A system of issues that have objective and subjective interdependence;

In the context of the convicts' objective issues, we identify ones that are conditioned by objective behaviour towards the act, its severity, court sentence, prisoners' attitude towards the environment (which can be both

objective and subjective), as well as problems with the outer world, family, relatives, workplace, etc.

In the context of subjective issues, we identify those of self-attitude, self-criticism, self-esteem, and issues of self-consciousness transformations.

The psychological problems of the prisoner's personality can be classified on the basis of:

- ✓ age, sex, religious and national belonging,
- ✓ the nature of the act committed and the degree of the danger,
- ✓ the motives of the crime, the number of convictions,
- ✓ the penitentiary institution type and conditions,
- ✓ social and biological interrelation of issues,
- ✓ objective and subjective interrelation of problems,
- ✓ transformation of personality self-consciousness, changes of vital values, lifestyle,
- ✓ mental processes (intellect evaluation),
- ✓ psychological states, emotional reactions,
- ✓ peculiarities of behaviour, constructive or destructive process.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Багдасарян Д. С., Теория государства и права. Ереван: 2002. – 273 с.
2. Антонян Ю. М., Мотивация поведения осужденных: монография / Ю. М. Антонян, Е. Н. Колышницына. – М.: ЮНИТИДАНА: Закон и право, 2017. – 143 с.
3. Дмитриев Ю. А., Пенитенциарная психология: учебник / Ю. А. Дмитриев, Б. Б. Казак - Ростов н/Д: Феникс, 2007. - 681 с.
4. Материалы III международной научной студенческой конференции «Научный потенциал студенчества в XXI веке». Том 2. Ставрополь: ГТУ, 2009. - 144 с. /Бурукина Е. Челнокова Т. Социально-психологический портрет личности осужденного/.
5. Пирожков В. Ф., Криминальная психология. – М.: «Ось-89», 2001. – 704 с.

6. Ресоциализация осужденных в условиях развития гражданского общества: сборник материалов Международной научно-практической конференции (11-12 декабря 2014 г.). – Киров: ФКОУ ДПО Кировский ИПКР ФСИН России, 2014. – 275 с.
7. Саргсян Л. К., Роль самоотношения в процессе адаптации осужденных. Автореф. дис. канд. психол. наук. – Ереван. 2015. – 26 с.

**ԱՌՒՏԻՍՏԻԿ ԵՎ ԾՆՈՂԱԿԱՆ ԴԵՊՐԻՎԱՑԻԱՅԻ
ԱԽՏԱՆՇԱՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ
ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ**

Սպեկիանյան Ն. Ե.

Խ. Արուսյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. *աուտիզմ, դեպրիվացիա, հոգեվնասվածքային իրավիճակներ, զարգացման խանգարում, վարքի ստերիոտիպություն, զարգացման հապաղում:*

Հոգեբանությանը նվիրված գիտական գրականության մեջ ուշադրավ տեղ է զբաղեցնում «աուտիզմի համախտանիշի կամ ախտանշանների» ախտորոշման խնդիրը նախադպրոցական տարիքի երեխաների մոտ: Այսօր ախտորոշման հնարավորությունների կատարելագործումը պայմանավորված է մասնագետի փորձառության, ինչպես նաև հասարակության մեջ աուտիզմի խնդրի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման հետ: Ըստ հոգեբույժների, աուտիզմ համախտանիշով և ախտանշաններով երեխաների թվաքանակի աճ է նկատվում:

Հոգվածում մենք կարևորում ենք այն խնդիրը, որ վաղ նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում ախտորոշվող աուտիստիկ ախտանշանները նման են ծնողական դեպրիվացիայի ախտանշաններին, ինչը դժվարություններ է ստեղծում ճիշտ ախտորոշման համար: Եվ քանի որ ծնողական դեպրիվացիան հոգեբանության դաշտում է, ապա պետք է հստակ տալ հոգեկան դեպրիվացիայի ախտանշանները նախադպրոցական տարիքում, որոնք կօգնեն ապագա մասնագետներին հոգեբանական ճիշտ ախտորոշում իրականացնելու և տարբերակելու այն աուտիստիկ ախտանիշներից, ինչի արդյունքում շտկողական աշխատանքներն այլ ընթացք կստանան:

«Աուտիզմ»- auto, հուն.«ինքը» եզրույթն առաջարկվել է շեվեցարիացի հոգեբույժ և հոգեբան Է.Բլեյլերի կողմից: 1943թ. վաղ մանկական աուտիզմը առանձնացվել է որպես առանձին կլինիկական համախտանիշ Լ.Կաննեթի կողմից: Շատ հեղինակներ առանձնացնում են մանկական աուտիզմի մի շարք տեսակներ՝ աուտիստիկ պսիխոպաթիա, մտավոր հետամնացություն՝ ուղեկցվող աուտիստիկ համախտանիշով: Տարբեր խմբի երեխաների ինտելեկտուալ զարգացումը ընթանում է տարբեր ձևով [3]: Աուտիզմի հիմնական կլինիկական նշաններն են.

1. հաղորդակցման դժվարություններ,
2. զգայական գրգռիչների հանդեպ բացասական ռեակցիաներ,
3. խոսքի զարգացման խանգարումներ,
4. վարքի ստերիոտիպություն,
5. ինքնասպասարկման հմտությունների դանդաղ ձևավորվում,
6. դիմում են իրենց երրորդ դեմքով,
7. առկա են ոչ ադեկվատ վախեր,
8. ունեն սիրելի ուտեստներ, որոնք տարիների ընթացքում

դժվար են փոփոխության ենթարկվում [3]:

Աուտիզմը որոշ երեխաների մոտ կրում է ոչ թե ժառանգական բնույթ, այլ պայմանավորված է հոգեկան՝ ծնողական դեպրիվացիայով: Հոգեվնասվածքային իրավիճակները տևում են երկար ու գործում են հակադարձ կապով. հաղորդակցման խախտումը ուժեղացնում է դեպրիվացիան, իսկ վերջինս ընդգծված է դարձնում աուտիստիկ ախտանիշները [2]:

Հոգեկան դեպրիվացիան ինչ-որ բանի կորուստ կամ կենսական կարևոր պահանջմունքի բավարարման զրկվածությունն է, որը տևում է երկար ժամանակ: Դա ոչ թե ֆիզիկական, այլ հոգեկան պահանջմունք է: Այն առաջանում է, երբ երեխան զրկված է լինում ծնողական սիրուց, փայփայանքից, հոգատարությունից: Լատիներեն «deprivato» բառը նշանակում է զրկել, բռնի ձևով վերցնել, այսինքն՝ զրկել արժեքավոր, կարևոր ինչ-որ բանից: Հոգեբանության մեջ

«դեպրիվացիա» տերմինն օգտագործվում է մի քանի իմաստներով՝ որպես զգայական և սոցիալական ազդակների պակաս, որը օնտոգենեզի ընթացքում երեխայի մոտ առաջացնում է որոշակի փոփոխություններ՝ կապված մտավոր զարգացման և հուզական ոլորտի հետ: Հոգեկան դեպրիվացիան համաշխարհային ճանաչում ստացավ 40-ական թվականներին՝ մանկատներում գտնվող երեխաների հետ կատարված փորձի շնորհիվ [2]:

Հայտնի է, որ հուզական դեպրիվացիան երեխաների մոտ առաջացնում է հոգեբանական խանգարումներ, ներառյալ պսևդոսոստիստիկ կլինիկական պատկերի ձևավորումը (Rutter et al., 1999): Դեպրիվցիայի ախտանշանները, որոնք նման են աուտիստիկ ախտանշաններին, հետևյալն են.

1. շրջապատի հանդեպ անտարբերությունը,
2. հետաքրքրությունների սահմանափակվածությունը,
3. խոսքային զարգացման հապաղումը,
4. կրկնվող վարքը:

Ի տարբերություն զարգացման պերվազիվ խանգարումներ ունեցող երեխաների, հուզական (ծնողական) դեպրիվացիա ունեցող երեխաների մոտ առկա չեն սոցիալական փոխազդեցության կոպիտ խանգարումներ, համապատասխան աշխատանքի դեպքում նրանց մոտ շտկվում են առկա խնդիրները [4]:

Ըստ Լ. Պոժարի, հոգեկան դեպրիվացիայի նշանները շատ տարբեր են՝ սկսած թեթև կամակորությունից մինչև բնավորության և մտավոր զարգացման խախտումները: Այս ամենը կարող է դրսևորվել ներոտիկ, պսիխոպաթիկ հատկանիշներով, իսկ երբեմն դեպրիվացված երեխային հատուկ են լալկանությունը, հաղորդակցման խախտումները, հուզական թուլությունը [1]:

Մեր կողմից իրականացվող հոգեբանական աշխատանքների ընթացքում ի հայտ ենք բերել դեպրիվացված և աուտիստիկ ախտանիշներով երեխաների վարքում որոշակի նմանություններ և տարբերություններ: Երկու դեպքում էլ և՛ աուտիստիկ, և՛ հուզական դեպրի-

վացիայով երեխաների մոտ ծնողները ոչ աղեկվատ վարք նկատում էին 1,5-2,5 տարեկան ընկած ժամանակահատվածում: Ըստ ծնողների, երեխաները մինչ այդ տարիքն ունեին խոսք, իսկ հետո սկսում էին չխոսել, թաքնվում էին պահարաններում, ցանկացած բարձր ձայն, տանը այլ մարդկանց ներկայությունը նրանց մոտ վախ է առաջացնում: Այն երեխաները, որոնց մոտ առկա էր աուտիստիկ սիմպտոմատիկայի նախնական, բայց ոչ հստակ ախտորոշում, ծնողներն ունեին հագեցված աշխատանքային ռեժիմ, երեխայի խնամքով զբաղվում էր դայակը, որը չուներ համապատասխան մանկավարժական պատրաստվածություն, երեխայի ողջ օրն անցնում էր համակարգչի առջև, և նրա շփումը տեղի էր ունենում ոչ թե մարդկանց, այլ մուլտիտերոսների հետ, այս ամենը կարող է ծնողական, սոցիալական դեպրիվացիայի առաջացման հիմք հանդիսանալ: Այս երեխաներն առաջնային հոգեբանական դիտարկման ժամանակ ցուցաբերում են հետևյալ վարքը.

1. Չեն նայում դիմացինի աչքերին, բայց մոտենում են ծնողին, որպեսզի օտար վայրում ապահով զգան իրենց:

2. Խաղում են միայնակ, բայց երբ հայտնվում է մեկ այլ երեխա, ով ցանկանում է շփվել նրանց հետ, նրանք ցուցաբերում են աղեկվատ վարք և փորձում շփման եզրեր գտնել:

3. Ծնողի կամ այլ մեծահասակի կողմից հնչեցված իրենց անվան նկատմամբ երեխաները ցուցաբերում են անտարբերություն: Նրանք իրենց վարքով ցույց են տալիս, որ լսում և ընկալում են իրենց անունը, բայց ցանկություն չունեն շփվելու մեծահասակների հետ: Հետագա աշխատանքների արդյունքում պարզ էր դառնում, որ երեխան նման կերպ պատասխանում էր ծնողի կողմից ցուցաբերվող անտարբերությանը:

4. Սիրելի խաղալիքի հանդեպ ցուցաբերում են ուրախություն, արձակում են ուրախ ճիչեր, բայց որոշ ժամանակ անց նա դադարում է խաղալ՝ դրսևորելով տխրություն և լաց: Ծնողը չէր հասկանում երեխայի վարքը, քանի որ վերջինս չէր խոսում և չէր հասկացնում, թե

ինչ է ուզում: Բավական էր ծնողներից մեկը ցանկություն հայտներ խաղալու, երեխան կրկին ուրախություն էր ապրում:

5. Երբ ինչ-որ բան են ուզում, ապա անհանգիստ ձևով, հատկապես լացով, դիմում են մորը, արտաբերելով մեկ բառ:

6. Երեխաների մոտ դիտվում է հոգեկան զարգացման հապաղում, որը պայմանավորված է ոչ թե ուղեղի օրգանական խնդիրներով, այլ առօրյայի միօրինակությամբ:

7. Այս երեխաների մոտ դիտվում է «օտարացում սեփական փորձից» (Ձ. Մ. Բոգուսլավսկայա, «Նվեր» հոգեբանական խաղ), երբ կյանքում ապրած առանձին պահեր չեն դառնում իրենց կյանքի իրադարձությունները, չեն յուրացվում և չեն մտնում իրենց հոգեբանական փորձի մեջ:

Մեր կողմից իրականացվող հոգեշտկողական աշխատանքների ընթացքում վերը նշված երեխաների հետ իրականացվող երեքամսյա հոգեշտկողական աշխատանքներից հետո, նրանց մոտ դիտվում էր բավականին մեծ առաջընթաց, որը չէր կարող դիտվել աուտիստիկ ախտանիշներով երեխաների մոտ (նման կարճ ժամանակահատվածում): Առաջընթացը պայմանավորված էր նաև նրանով, որ հոգեբանական աշխատանքներին պարտադիր ներկա էին լինում մայրերը, ովքեր ևս աշխատանք էին տանում երեխաների հետ:

Կարելի է եզրակացնել, որ ծնողական-հուզական դեպրվացիայի ախտանիշների հստակ ախտորոշումը և վաղ հաղթահարումը նպաստում են, որպեսզի երեխայի մոտ վերը նշված ախտանշանները չխորանան և չձևավորեն պսևդոաուտիստիկ կլինիկական պատկեր:

DIFFICULTIES IN DIAGNOSING THE DIFFERENCES BETWEEN THE SYMPTOMS OF AUTISTIC AND PARENTAL DEPRIVATION IN CHILDREN OF PRESCHOOL AGE

STEPANYAN N. Y.

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

The article is devoted to the problem of autistic symptoms diagnosed in children of early preschool age, similar to the symptoms of parental deprivation, which are difficult to make an accurate diagnosis. Identification of symptoms of emotional and parental deprivation in preschool age will help future professionals to diagnose and distinguish psychological symptoms from symptoms of autism and, accordingly, corrective work will be a different course.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ладислав Пожар, Психология аномальных детей и подростков. Москва-Воронеж 1996
2. Лангмейер Й., Матейчек З., Психическая депривация в детском возрасте. Прага, Авиценум. 1984
3. Е. К. Лютова, Моница Г. Б., Тренинг эффективного взаимодействия с детьми Изд. <<Речь>> Санкт-Петербург 2001
4. <https://sites.google.com/site/avameidinru/Home/metody-diagnostiki-rannego-detskogo-autizma/rasstrojstva-spektra-autizma-voprosy-diagnostiki-i-terapii>

ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇԵՇՏՎԱԾՈՒԹՅԱՆ, ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ԵՎ ՌԵՑԼԵՔՍԻԱՅԻ ԿԱՊԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Փիլոսոֆ Ս. Մ.

Խ. Արոյանի անվան ՀՊՄՀ, Երևան, Հայաստան

Հանգուցային բառեր. բնավորության շեշտվածություն, հարմարում, կանխարեսում, ռեֆլեքսիա, նեյրոտիզմ /նյարդային անկայունություն/:

Բնավորությունը մարդու առավել բնորոշ հոգեկան հատկությունների համակարգ է, որը ձևավորվում է օնտոգենեզում և կայուն դրսևորում ունի վարքում, գործունեության և հաղորդակցման մեջ: Անձնային այս կառուցույթ է պայմանավորված մարդու վարքի տակտիկան՝ դրդապատճառների, գործունեության, միջանձնային հարբերությունների բնույթը և սոցիալական իրականությանը ադապտացվելու արդյունավետությունը: Բնավորության յուրաքանչյուր գիծ ձևավորվում է մարդու անհատական առանձնահատկությունների հիման վրա, նրա ակտիվ գործունեության և հաղորդակցման ընթացքում միջանձնային և հասարակական հարաբերությունների ազդեցության տակ: Սոցիալական ադապտացիայի ընթացքում տարբեր տիպի պահանջմունքների բավարարման (կամ չբավարարման) և սոցիալական անբարենպաստ գործոնների առկայության պայմաններում անձնավորության վարքագիծն աստիճանաբար փոխվում է, բնավորության որոշ գծեր խիստ արտահայտվածություն են ստանում, և ձևավորվում են բնավորության շեշտված տիպեր: Այդ դեպքում նրա դիրքորոշումները, գործունեության ընդհանուր պատկերը և միջանձնային հարաբերությունների դրսևորման ձևերը միջնորդավորվում են նրա բնավորության շեշտվածություններով, և ադապտացիայի գործընթացը դժվարանում է:

Կ.Լեոնիսարդը դրանք դիտարկում է որպես անձի շեշտվածություններ (1964): Ա. Ե. Լիչկոն գտնում է, որ «անձ» հասկացությունն ա-

վելի ընդարձակ է, քան բնավորությունը: Հատկապես բնավորության շեշտվածություններն ու դրանց զարգացումն ուսումնասիրելով՝ նա եկել էր այն եզրակացության, որ դա նորմայի այն տարբերակն է, որի դեպքում բնավորության միայն առանձին գծեր են, որ չափազանց արտահայտվածություն ստանում և կարող են հասնել նորմայի և պաթոլոգիայի բաժանարար սահմաններին (1977): Հետագայում ուսումնասիրությունները կատարվել են բնավորության շեշտվածության և այլ հոգեկան գործընթացների կապի տեսանկյունից: Ռ. Պլուտչիկը, Հ. Քելլերմանը և Ռ. Կոնտեն ուսումնասիրել են բնավորության շեշտվածությունների և հոյզերի կապը [1979], Վ.Ի. Մորոսանովան՝ ինքնակարգավորման ոճի [1997], Ե.Ա. Կովալենկոն՝ բնավորության գծերի և հաղորդակցականության [2007], Ա. Յու. Գարնաևան և Լ. Ա. Տիտովան՝ ապրումակցման [2011], Ե.Կ. Ժերդովան՝ անձնային նույնականացման [2011]:

Վարքի կայուն ձևերը մշակվում են երևույթների նկատմամբ անձնավորության ունեցած վերաբերմունքի հիման վրա. դրանք ընտրվում են, իրականացվում, գնահատվում և արդյունավետ լինելու դեպքում ամրակայվում: Այս իմաստով կարևոր է բացահայտել այն գործոնները, որոնք ընկած են այս գործընթացի հիմքում:

Մետակոգնիտիվիզմի շրջանակներում ուսումնասիրվում է հոգեկան գործընթացների հատուկ, բավականին ինքնուրույն մի դաս՝ մետագործընթացները, որոնք «առաջնային» (դասական) իմացական գործընթացների կազմակերպման, կարգավորման և համակարգման գործառույթ են իրականացնում: Դրանք ավելի բարդ, սինթետիկ բնույթ ունեն [6]:

Գործունեության տեսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գործունեության, վարքի և հաղորդակցման կարգավորման գործընթացներ են կանխատեսման, նպատակի ձևավորման, որոշման ընդունման, ծրագրավորման, պլանավորման, վերահսկման և ինքնավերահսկման գործընթացները, որոնք իրենց մեխանիզմներով իմացական են, բայց միաժամա-

նակ գործունեության և վարքի կարգավորման գործառույթ ունեն: Ա.Վ. Կարպովը դրանք բնորոշում է որպես գործունեության և վարքի հոգեբանական կարգավորման ինտեգրացված, «երկրորդային» գործընթացներ [1]:

Կանխատեսումը օնտոգենեզի բոլոր փուլերում գործող, նպատակի պատկերի ստեղծման և դրան հասնելու գործընթացների ընտրության «երկրորդային» գործընթաց է [5], որն ընկնում է խնդիր-արդյունք համակարգի ճիշտ կառուցման, տարբեր մակարդակներում միջանկյալ արդյունքների ճշգրտման, վերջնական արդյունքի պատկերի հետ հետադարձ կապի, բավարար արդյունքների հիման վրա որոշման ընդունմանը համապատասխան ուղղվածություն տալու գործընթացների հիմքում և ապահովում է դրանց արդյունավետությունը:

Գործունեության և վարքի կարգավորման «երրորդային» գործընթաց է ռեֆլեքսիան, որը 3-րդ մակարդակի բարդության՝ «երկրորդայինների» ինտեգրացիայի արդյունք է: Այն սեփական հոգեկան բովանդակությունների օբյեկտիվացման և քննարկման գործընթաց է, որ տեղի է ունենում իր, դիմացինի վարքի, մտքերի քննարկման ֆոնի վրա. վերարտադրվում, գնահատվում և վերստեղծվում են հաղորդակցվող կողմերի առանձնահատկությունները, և դրա հիման վրա ստեղծվում է տվյալ իրադրության մեջ նպատակահարմար վարքի մոդելը [2]: Ուրեմն նպատակահարմար վարքի գնահատումը, դրա նկատմամբ վերաբերմունքի մշակումը, վարքի համապատասխան սխեմաների ստեղծումն ու ամրակայումն այդ գործընթացների արդյունավետությամբ են պայմանավորված, իսկ բնավորությունը օնտոգենեզում հենց այս գործընթացների արդյունքում ձևավորվող անձնային կառույց է, որի շեշտավորումը ձևավորվում է վարքային բացասական դրսևորումների ամրակայման և կարծրատիպերի ձևավորման արդյունքում:

Մյուս կողմից, հայտնի է, որ բնավորության գծերի ձևավորման հիմքում ընկած են սուբյեկտի կենսաբանական նախադրյալները, մասնավորապես՝ նյարդային համակարգի հատկությունները, որոնց

հիման վրա ձևավորվում է խառնվածքը. սոցիալական որոշ պայմաններում գործելով՝ այն ընկնում է բնավորության գծերի ձևավորման հիմքում:

Բնավորության շեշտվածության էպիլեպտոիդ և շիզոիդ տիպերի ընտրությունը պայմանավորված է եղել նրանով, որ այս տիպերը բարդ, ինտեգրացված տիպեր են: Շիզոիդները նեյրոտիզմով /նյարդային անկայունությամբ/ ինտրավերտներ են: Նրանց ներքնաշխարհն ուրիշների համար փակ է: Այս տիպի վարքում անընդհատ հակադիր հատկություններ են դրսևորվում. ծայրահեղ սառնությունն ու գերզգայունությունը, ամոթխածությունն ու անտակտությունը, ծայրահեղ կապվածությունն ու չպատճառաբանված հակակրանքը, ռացիոնալ դատողություններ անելն ու անտրամաբանական արարքներն անընդհատ հաջորդում են միմյանց: Նա չի ապրումակցում ուրիշներին և չի նկատում, թե նրանք իրեն ինչպես են վերաբերվում, միջավայրում իրեն սպառնացող վտանգներ է տեսնում և հիմնային անվտանգության տազնապ ունի, հաճախ հաշվի չի նստում սոցիալական նորմերի հետ, ոչ դիտավորյալ, բայց խախտում է դրանք: Էպիլեպտոիդները նեյրոտիզմով՝ նյարդային անկայունությամբ էքստրավերտներ են: Նրանք չարությունը թափելու օբյեկտ են ընտրում, հեշտությամբ կորցնում են ինքնակառավարումը, իմպուլսիվ վարք են դրսևորում և բոլորովին անտեղի կարող են հայիոյել, նույնիսկ՝ ծեծկռտուքի անցնել... վրեժխնդիր լինել [3]: Այս 2 տիպերի հակիրճ նկարագրությունն իսկ վկայում է, որ նրանք սոցիալականացման և ադապտացիայի լուրջ խնդիրներ ունեն, ուստի շեշտվածության այս տիպերի ձևավորման գործոնների բացահայտումը և եթե ոչ կարգավորման, ապա գոնե թուլացման ուղիների մշակումը, տեսական և գործնական կարևոր խնդիր է:

Մեր ուսումնասիրության նպատակն է եղել բացահայտել բնավորության շեշտվածության, նյարդային համակարգի հատկությունների և իմացական ինտեգրացված գործընթացների կապը: Ենթադրվում է, որ շեշտվածության ձևավորման կարևոր գործոններ են անձնավո-

րության համար դժվարություն ներկայացնող իրադրությանը համապատասխան վարքի նպատակահարմարության կանխավ գնահատման, ընդունման կամ ժխտման՝ կանխատեսման և ռեֆլեքսիայի գործընթացները: Ուսումնասիրության հիմքում ընկած են եղել Ֆունկցիոնալ համակարգերի տեսությունը [Анохин, 1980], բնավորության շեշտվածության [Leonhard, 1964, Личко, 1977] և Գործունեության տեսության շրջանակներում գործունեության և վարքի հոգեբանական կարգավորման ինտեգրացված «երկրորդային» և «երրորդային» գործընթացների [2] ուսումնասիրությունները: Գիտափորձերին մասնակցել են 17-20 տարեկան 118 փորձարկվողներ: Բնավորության շեշտվածությունն ուսումնասիրվել է «Անձնավորության բնավորության շեշտվածության և նյարդա-հոգեկան անկայունության ուսումնասիրության մեթոդիկայով» [3], նյարդային համակարգի ուժը, հավասարակշռությունն ու շարժունությունը՝ Ն. Ֆ. Գրեբենի կողմից ներկայացված համապատասխան մեթոդիկաներով [Гребень Н. Ф. 2007], ռեֆլեքսիան՝ Ա.Վ. Կարպովի «Ռեֆլեքսիայի անհատական չափի ախտորոշման մեթոդիկայով» [1], կանխատեսումը՝ «Կանխատեսման ընդունակություն» (СП) հարցաշարով [Perya Л. А., 2003]:

Նախնական հետազոտությունների արդյունքում առանձնացվել են 5 շիզոֆի և 7 էպիլեպտոֆի տիպեր, ում տվյալներն առանձին վերլուծության են ենթարկվել: Փաստորեն, այս տիպերը կազմել են մեր ընտրակազմի 9,83%-ը, ինչն անհանգստացնող թիվ է:

Նյարդային համակարգի՝ մեր կողմից կիրառված մեթոդիկաներում գնահատումը կատարվում է ըստ տվյալ հատկության արտահայտվածության՝ բարձր, միջինից բարձր, միջին, ցածր, շատ ցածր:

Ստուգիչ խմբում նյարդային համակարգի շարժունության արտահայտվածությունը միջինից բարձր է, շիզոֆիների խմբում՝ բարձր, էպիլեպտոֆիների խմբում՝ ցածր:

ԿՆՀ-ի հավասարակշռությունը ստուգիչ խմբում միջին մակարդակի վրա է, շեշտվածության 2 տիպերի մոտ էլ շատ ցածր ցուցանիշ ունի:

ԿՆՀ-ի ուժի ցուցանիշը ստուգիչ խմբում միջին արտահայտվածություն ունի, շիզոֆրենիկ մոտ՝ ցածր, էպիլեպտոիդների խմբում՝ բարձր:

Կանխատեսման ընդունակության (ՇՄ) հարցաշարով կատարված հետազոտության արդյունքները գնահատվում են բարձր, միջին և ցածր չափանիշներով: Ստուգիչ խմբում միջին տվյալը 11 միավոր է, ինչը մոտենում է բարձրի շեմին, շիզոֆրենիկ խմբում՝ 10, որը միջին շեմից քիչ է ցածր, իսկ էպիլեպտոիդների մոտ այն ցածր մակարդակում է:

Բնավորության շեշտվածության մեր ուսումնասիրած երկու տիպերի դեպքում էլ արձանագրվել է ռեֆլեքսիայի միջինից ցածր մակարդակ: Եթե 106 փորձարկվողներից բաղկացած ստուգիչ խմբում 172 և ավելի հնարավորից միջին տվյալը կազմում է 144 միավոր, ինչը համապատասխանում է թեստի 10 սանդղակներից 7-րդ-ին, ապա բնավորության շեշտվածության շիզոֆրենիկ տիպի խմբում ռեֆլեքսիվության միջին տվյալը 58 միավոր է, էպիլեպտոիդների՝ 67, երբ 80 և պակաս միավորներն ընդգրկված են 0 սանդղակում:

Շիզոֆրենիկ ԿՆՀ-ի բարձր շարժունությունը նպաստում է, որ նրանք տեղեկատվության մշակման ուղղվածություն ունենան: Սակայն կանխատեսման գործընթացի ոչ բարձր մակարդակի պատճառով սեփական գործողությունների և ուրիշների առաջիկա արարքների հավանական պատկերի ստեղծման ու դրան համապատասխան նպատակահարմար վարքի կամ գործողությունների մշակման գործընթացը դժվարանում է: Այս տիպի մոտ ցածր է նաև ռեֆլեքսիվությունը: Ահա թե ինչու, նա գործում է՝ առանց իր վարքի հետևանքների մասին մտածելու:

Էպիլեպտոիդների մոտ նյարդային համակարգի ուժն է արտահայտված, ինչը նպաստում է, որ նա ավելի շատ տիրելու, քան ենթակայության հակվածություն ունենա: Սակայն այս դեպքում էլ կանխատեսումը չի հասնում միջինի, և ռեֆլեքսիան ցածր մակարդակում է: Ուրեմն, այս տիպերի համար դժվար է ուրիշների, երևույթների, գոր-

ծունեության արդյունքների և սեփական անձի նկատմամբ օբյեկտիվ վերաբերմունքի մշակման գործընթացներ իրականացնել: Եթե այս ամենին ավելանում է նաև նյարդային համակարգի անհավասարակշռությունը, ապա այս տիպերն իրենց վարքի կարգավորման և ամրակայման մեծ խնդիրներ են ունենում, ինչը բնավորության շեշտվածությունների ձևավորման համար նպաստավոր պայմաններ է ստեղծում: Իհարկե, շեշտվածությունների ձևավորման մեկ այլ, նույնպես շատ կարոր պայման է նաև անբարենպաստ միջավայրի առկայությունը:

Այսպիսով, հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ բնավորության շեշտվածության շիզոիդ և էպիլեպտոիդ տիպերի հիմնական խնդիրներից են նյարդային համակարգի անհավասարակշռությունը, կանխատեսման դժվարություններն ու ռեֆլեքսիայի ցածր մակարդակը:

Բնավորության շեշտվածության այս տիպերի հատկությունները խորքային են և նկատելի փոփոխություններ են առաջացնում անձնային կառույցում: Շիզոիդ և էպիլեպտոիդ տիպերի շեշտավորումը հենց նախադպրոցական տարիներին սկսում է դրսևորվել, ուստի հոգեբանների ուշադրությունը պետք է բևեռվի հենց այդ շրջանից սկսած երեխայի խաղի և ուսումնական գործունեության ընթացքում կանխատեսման և ռեֆլեքսիայի ունակությունների զարգացման վրա: Կանխատեսման և ռեֆլեքսիայի զարգացման նպատակով անհրաժեշտ է տարիքային տարբեր խմբերի համար աստիճանական բարդացմամբ վարժանքների համալիր ստեղծել:

THE PROBLEM OF CHARACTER'S ACCENTUATION, PROGNOSIS AND REFLECTION CORRELATION

PILOSYAN S. M.

ASPU after Kh. Abovyan, Yerevan, Armenia

ABSTRACT

